

ՀԱՅ-ԹՐԹԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԷ

2009 թվականի Հոկտեմբերի 10-ին Ջիլերիխի մէջ ստորագրուած հայ-թրքական արձանագրութիւնները նկատուեցան Հայաստանի Սահմանադրութեան համապատասխանող:

Երեքշաբթի, Յունուար 12-ին նման վճիռ կայացուց Հայաստանի Սահմանադրական դատարանը: Ըստ Սահմանադրական Դատարանի, չկայ որեւէ պատճառ, որպէսզի չհաստատուին երկկողմ դիւանագիտական յարաբերութիւններ եւ Ազգային ժողովը չվաւերացնէ գալն:

Միջազգային պայմանագրերի քննութեան առանձնաշատկութիւնները նկատի առնելով՝ դատարանը որոշած էր գործի քննութիւնը կազմակերպել գրաւոր ընթացակարգով: Դատարանէն ներս Հայաստանի նախագահի պաշտօնական ներկայացուցիչը արտաքին գործոց նախարար Մերկէյ Լաւրովի՝ Հայաստան եւ Թուրքիոյ վարչապետ էրդողանի՝ Մոսկովա այցելութիւններուն, ըսած է, «Չեմ կարծում, որ առաջիկայում Հայաստանին որեւէ դրական բան է սպասուած: Վստահ եմ, որ էրդողանն ու Լաւրովը Մոսկովայում եւ Երեւանում խօսելու են հայ-թուրքական արձանագրութիւններին եւ Լեռնային Ղարաբաղի խնդրին: Ցաւոք, Ռուսաստանն ու Թուրքիան գնում են մերձեցման ճանապարհով եւ կարող են

նական ներկայացուցիչը արտաքին գործոց նախարար էրդուարդ Նալբանդեանն էր:

Haynews.am լրատուական կայքէջի հետ զրոյցի ընթացքին Ազգային ժողովի պատգամաւոր, ՄԴՀԿ անդամ Վարդան Խաչատրեան, մեկնաբանելով ՀՀ Սահմանադրական Դատարանի որոշումը, ըսած է.

«Սա եւս մէկ անգամ ապացուցեց, որ ՀՀ իշխանութիւններն իրենց ձեռքի տակ եղած բոլոր լծակներով եւ ռեսուրսներով պատրաստ են ամէն ինչ անել, որ Արձանագրութիւնների վաւերացման խնդիրը չտապալուի: Ինչ վերաբերում է Սահմանադրական Դատարանին, ապա այն՝ որպէս բարձրագոյն իրաւական ատեան, դիմադրունակ չգտնուեց»:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՐՁԵԱԼ ՅԱՏԿԱՆՇՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԻՔՈՎ ՈՒ ԲՈՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ



Հերթական կեղծուած ընտրութիւններու մասնակից մը քուէատուփ կը նետէ իր ձայնը

Յունուար 10-ին Երեւանի թիւ 10 ընտրատարածքէն ներս կայացան Ազգային ժողովի պատգամաւորի լրացուցիչ ընտրութիւններ, որոնք անգամ մը եւս յատկանշուեցան խախտումներով, կեղծիքով ու բռնութիւններով: Օրուայ ընթացքին արձանագրուեցան լրացողներու աշխատանքը խոչընդոտելու դէպքեր, ծեծկոտուք եւ լցոնումներ:

Այս ընտրութիւնները եզակի էին այն պատճառով, որ առաջին անգամ Հայաստանի պատմութեան մէջ, ընտրութիւններուն մասնակցող թեկնածու՝ ընդդիմադիր քաղաքական գործիչ Նիկոլ Փաշինեան կը գտնուէր անազատութեան մէջ: Ան կալանքի տակ է 2009 թվականի Յունուարի 1-էն ի վեր, 2008-ի նախագահական ընտրութիւններուն յաջորդած Մարտ 1-ի դէպքերը հրահրելու մեղադրանքով:

Ընտրութիւններուն յաղթող հռչակուեցաւ իշխանութիւններու հովանաւորութիւնը վայելող թեկնածու՝ Արա Միմոնեան: Ըստ պաշտօնական տուեալներու ան

ստացած է 7622 ձայն, մինչ Փաշինեան տացած է միայն 5023 ձայն: Քուէարկութեան մասնակցած է 13 հազար 380 մարդ, որոնք կը ներկայացնեն ընտրողներու ընդհանուր թիւի մօտ 24 տոկոսը:

Ընդդիմադիր Հայ Ազգային Գոնկրէսը յայտարարեց, որ չի ճանչնար ընտրութեան արդիւնքները եւ գալն պիտի բողոքարկէ դատական բոլոր ատեաններով՝ անվաւեր յայտարարելու պահանջով:

Ընտրութիւններու արդիւնքներու վերաբերեալ յայտարարութիւն տարածեց նաեւ ընդդիմադիր թեկնածուն՝ Նիկոլ Փաշինեանը: Ընտրութիւնները բնութագրելով որպէս ապօրինի եւ կեղծուած, ան եկաւ ըսելու. «Մարտի մէկեան տրամաբանութիւնը շարունակում է դրուած լինել իշխանութեան եւ ժողովրդի յարաբերութիւնների հիմքում, եւ գործող իշխանութեան յենարանը բռնութիւնն է, քրէական ամենաթողութիւնը, Հայաստանի քաղաքացիների անպաշտպանութիւնն ու յուսահատութիւնը»:

ՎԱՀԱՆ ՇԻՐԻԱՆԵԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՆԱԼ ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑՈՒՄ»

ՄԴՀԿ Կենտրոնական վարչութեան անդամ Վահան Շիրիանեան, Haynews.am-ի հետ զրոյցի ընթացքին անդրադառնալով Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Մերկէյ Լաւրովի՝ Հայաստան եւ Թուրքիոյ վարչապետ էրդողանի՝ Մոսկովա այցելութիւններուն, ըսած է, «Չեմ կարծում, որ առաջիկայում Հայաստանին որեւէ դրական բան է սպասուած: Վստահ եմ, որ էրդողանն ու Լաւրովը Մոսկովայում եւ Երեւանում խօսելու են հայ-թուրքական արձանագրութիւններին եւ Լեռնային Ղարաբաղի խնդրին: Ցաւոք, Ռուսաստանն ու Թուրքիան գնում են մերձեցման ճանապարհով եւ կարող են

տարածաշրջանում այս կամ այն հարցի շուրջ ընդհանուր տեսակետներ ունենալ, ինչը, վստահ եմ, չի բխում Հայաստանի հանրապետութեան շահերից:

«Կարծում եմ, որ Թուրքիայի նմանատիպ ակտիւութիւնը պայմանաւորուած է իր՝ Եւրամիութիւն մտնելու անյազ ցանկութեամբ, որը իրականացնելու համար հայ-թուրքական հաշտեցման գործընթացը վերջին տեղում չի կարող լինել: Սա է պատճառը, որ Անկարան, լաւ գիտակցելով յարաբերութիւնների կարգաւորման անխուսափելի լինելը, փորձում է այս գործընթացին հնարաւորինս օգուտներ քաղել»:

«ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՏՈՒՆ». «ՀԱՅԱՍՏԱՆ ՅԱԶՈՐԴԱԿԱՆ 8-ՐԴ ՏԱՐԻՆ ԸԼԼԱԼՈՎ ՅԱՌԱՋԴԻՍՈՒԹԻՒՆ ԶԷ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ»

«Ազատութեան Տուն» (Freedom House) միջազգային իրաւապաշտպան հեղինակաւոր կազմակերպութեան գնահատականով, յաջորդական 8-րդ տարին ըլլալով Հայաստան որեւէ յառաջընթաց չէ արձանագրած ժողովրդավարութեան ուղղութեամբ, տարեցտարի վիճակը աւելի կը վատթարանայ եւ 2002 թվականէն սկսեալ կը դասուի աշխարհի «մասամբ ազատ» երկիրներու շարքին:

Կազմակերպութեան այս տարուայ գեկոյցի համաձայն, ինչպէս եւ նախորդ տարի, Հայաստանի մէջ քաղաքական իրաւունքներու դրսեւորումն ու պաշտպանութիւնը գնահատուած է վատագոյն: Նման գնահատական կը ստանան, մասնաւորապէս, «գիւտարական խուսափումներու, միակուսակցական բռնապետներու կամ ինքնակալներու կողմ

մէ կառավարող երկրները, ուր իշխող վարչախումբերը միայն նուազագոյն չափով կը հանդուրժէ քաղաքական իրաւունքները»:

Որեւէ բարելաւում չէ արձանագրուած նաեւ քաղաքացիական ազատութիւններու պաշտպանութեան ուղղութեամբ: Փաստօրէն, Հայաստան կը յայտնուի այն երկիրներու խումբին մէջ, ուր «ընդդիմութիւնը բռնութեան ու ճնշումներու կ'ենթարկուի, մամուլը կը գրաքննուի, կոռուպցիան՝ կը ծաղկի»:

«Հայաստանի ցուցանիշները բաւական մտահոգիչ են», - Երեքշաբթի, Յունուար 12-ին «Ազատութիւն» ռատիոկայանին տուած հարցազրոյցի ընթացքին ըսաւ Freedom House-ի՝ ուսումնասիրու-

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՅՈՒՆՈՒԱՐ 10-Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՇՈՒՐՁ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը դատապարտում է Յունուարի 10-ին թիւ 10 ընտրատարածքում տեղի ունեցած ընտրութիւնների ժամանակ արձանագրուած բռնարարները եւ աղաղակող ընտրակեղծիքները: Հնչակեան Կուսակցութիւնը համարում է, որ ժողովրդի կամքի ազատ արտայայտման իրաւունքի բռնաճնշումը անհամատեղելի է արդի առաջադէմ հասարակութեան հետ:

Յայտնում ենք մեր զօրակցութիւնը ապօրինի գործընթացների արդիւնքում տուժած անձանց եւ յայտարարում ենք, որ հետամուտ ենք լինելու այդ գործերի զարգացմանը եւ պահանջում ենք ՀՀ իշխանութիւններից անյապաղ ձեռք առնել միջոցներ՝ ընտրակեղծարարներին եւ յանցագործներին բացառապետելու եւ պատժելու համար:

ՄԴՀԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԷՏ

ՕՐՈՒՄԱՆ ԸՆԹԵՐՈՒՆ ԸՅՏ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԵՒ «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՏՈՒՆ»

Գ. ԽՈՏԱՆՆԵԱՆ

Վերջին մի քանի օրերուն արձանագրուեցան երեք իրադարձութիւններ, որոնք եկան անգամը մը եւս լուսարձակի տակ առնելու Հայաստանի այսօրուայ իրականութեան յոռի երեւները, որոնք այս կամ այն ձևով բոլորը կապուած են իրար եւ կու գան հաստատելու որ օրինական, ժողովրդավարական կայացած երկիր դառնալու ճամբուն վրայ ոչ մէկ յառաջընթաց նկատելի է, հակառակ բոլոր խոստումներուն:

Առաջին իրադարձութիւնը Ազգային ժողովի մասնակի ընտրութիւններն էին, որոնք տեղի ունեցան Երեւանի 10-րդ ընտրաշրջանէն ներս: Ընդդիմադրութիւնը կը պաշտպանէր Հայաստանի ամենէն յայտնի հասարակական գործիչներէն մէկուն՝ «Հայկական ժամանակ» թերթի գլխաւոր խմբագիր եւ ներկայիս քաղաքական բանտարկեալ Նիկոլ Փաշինեանի թեկնածութիւնը: Իշխանութիւններու հովանաւորութիւնը ունէր Արա Սիմոնեան անունով քաղաքական անձանօթ մը:

Յունուար 11-ին կրկնուեցան այն երեւոյթները, որոնցմով կը յատկանշուին վերջին տասնամեակին Հայաստանի մէջ տեղի ունեցող բոլոր ընտրութիւնները. բռնութիւն, ծեծ, կրկնակի ու բազմակի քուէարկութիւն, ոստիկանութեան միջամտութիւն, քուէներու հաշուարկի մէջ դիտումնաւոր սխալներ եւ անճշտութիւններ, մէկ խօսքով համատարած կեղծիք: Նպատակը միշտ նոյնն է. ամէն գնով պէտք է ապահովել իշխանական թեկնածուի յաղթանակը: Հետեւաբար, զարմանալի չէր, երբ օրուայ աւարտին յայտարարուեցան արդիւնքները եւ յաղթական հռչակուեցաւ անձանօթ թեկնածուն, այդ ալ մեծ տարբերութեամբ:

Երկրորդ նշանակալից իրադարձութիւնը ՀՀ Սահմանադրական Դատարանի կողմէ Հայ-Թրքական Արձանագրութիւններու վերաբերեալ որոշումն էր: Յունուար 12-ին Դատարանը հրապարակեց իր որոշումը: Դատարանը միայն 15 վայրկեան յատկացուց բաց քննարկումի համար եւ ապա անցնելով փակ քննարկումի, չուշացաւ հրապարակելու իր որոշումը, յայտնելով թէ, Արձանագրութիւնները կը համապատասխանեն ՀՀ Սահմանադրութեան եւ արգելք չկայ, որպէսզի անոնք վաւերացուին խորհրդարանին կողմէ:

Այս որոշումը եւս, անակնկալ մը չէր, նկատի ունենալով այն փաստացի իրողութիւնը, որ իրաւական անկախ վճիռ արձակելու կոչուած այս գերագոյն դատական մարմինը իր գոյութեան շուրջ 15 տարիներու ընթացքին յանդգնութիւնը չէ ունեցած իշխանութիւններու կամքին հակառակ որեւէ որոշում կայացնելու: Գազիկ Յարութիւնեանի նախագահած Սահմանադրական Դատարանը կը խտացնէ Հայաստանի դատական համակարգի յատուկ բոլոր յատկանիշները՝ իր առաքելութեան ու նպատակներուն հակառակ գործելու եւ գործադիր իշխանութեան կամակատարը դառնալու իր պատրաստակամութեամբ:

Այլ երկիրներու մէջ, նոյն

նիսկ ամենէն բռնապետականներու պարագային, Սահմանադրական Դատարաններու նախագահներն ու անդամները մեծ հեռաւորութիւն կը պահեն գործադիր իշխանութեան ներկայացուցիչներու հետ իրենց ունեցած շփումներուն մէջ՝ անձնական վարկը բարձր պահելու եւ կայացնելիք որոշումներու անկախութիւնը պահպանելու համար: Հայաստանի մէջ սակայն, ազգային կարեւորագոյն հարցի մը շուրջ վճիռ արձակելու կոչուած ըլլալով հանդերձ, Գազիկ Յարութիւնեան Հայ-Թրքական Արձանագրութիւններուն սատարելու նպատակով Սերժ Սարգսեանի կողքին կը մասնակցէր սփիւռքի Հայկական համայնքներ շրջապալութեան, սկիզբէն իսկ հարցակալի տակ դնելով իր անձի ու իր գլխաւորած դատարանի անկախութիւնն ու անաչառութիւնը:

Հետեւաբար, Հայաստանի Սահմանադրական Դատարանի այս որոշումը եւս պիտի գայ սեւ գիրերով արձանագրուելու այդ մարմինի պատմութեան մէջ:

Երրորդ կարեւոր իրադարձութիւնը հանդիսացաւ միջազգային մեծ հեղինակութիւն վայելող իրաւապաշտպան «Ֆրիտըմ Հաուզ» (Ազատութեան Տուն) կազմակերպութեան տարեկան գեկոյցի Հայաստանի վերաբերող բաժինի հրապարակումը:

«Ֆրիտըմ Հաուզի» գեկոյցը եկաւ արձանագրուելու թէ, յաջորդական 8-րդ տարին ըլլալով Հայաստան որեւէ յառաջընթաց չէ արձանագրած ժողովրդավարութեան ուղղութեամբ եւ տարէցտարի երկրէն ներս վիճակը աւելի կը վատթարանայ: Կազմակերպութեան այս տարուայ գեկոյցի համաձայն, Հայաստանի մէջ քաղաքական իրաւունքներու դրսեւորումն ու պաշտպանութիւնը կը գնահատուի վատագոյնը, աւելցնելով որ նման գնահատական կը ստանան, մասնաւորապէս, գինուորական խոնտանեւրու եւ միակուսակցական բռնապետներու կողմէ կառավարուող երկիրները, ուր իշխող վարչախումբերը միայն նուազագոյն չափով կը հանդուրժեն քաղաքական այլակարծութեան:

Հայրենիքէն ներս եւ դուրս ապրող հայութեան համար զարմանալի չեն եւ ոչ ալ անակնկալ միջազգային կազմակերպութիւններու նման գնահատականները: Մեր ժողովուրդը քաջատեղեակ է այս բոլորին, սակայն եւ անկարող՝ իր սեփական միջոցներով վերջ դնելու երկրէն ներս տարիներէ ի վեր շարունակուող այս կամայականութիւններուն:

Քաղաքակիրթ երկիրներու մէջ փոփոխութիւն կատարելու համար ժողովուրդի ձեռքին եղող միակ միջոցը քուէաթերթիկն է: Հայաստանի իշխող վարչախումբը առաջին հերթին այդ է որ խլած է իր ժողովուրդէն, ստեղծելով իրեն ձեռնտու ընտրական համակարգ մը՝ հիմնուած բռնութեան, զեղծարարութեան ու կաշառքի վրայ:

Եղած են պարագաներ երբ կարգ մը երկիրներու մէջ ընտրութիւնները կազմակերպուած են ՄԱԿ-ի հսկողութեան տակ: Հայաստանի համար ժամանակն է մտածել նաեւ այդ ուղղութեամբ:

ՄԴՐԿ-Ի ՊԱՌԱԿՏՄԱՆ ՄԵՂԱԻՈՐԸ ԸԱԿ-Ն Է

ԺԻՐԱՅՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ՝ ՄԴՉԿ ԽԱՄԱԿԻՐ

Արդէն մի քանի ամիս է, ինչ հասարակութիւնը ակտիւ հետեւում է հայ իրականութեան առաջին քաղաքական կուսակցութեան՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան շուրջ տեղի ունեցող զարգացումներին: Բազմաթիւ վերլուծութիւններ են կատարուում, թէ ինչու պառակտուեց կուսակցութիւնը, Կոնգրէսին սպասարկող լրատուամիջոցները ձայները մէկ արած յայտարարում են, որ ՄԴՉԿ ղեկավարութիւնը ուզում էր լքել «իսկական ընդդիմութեան» շարքերը եւ դառնալ իշխանութեան «յաճախորդ»:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը 1998 թ.-ից ի վեր գտնուում է ընդդիմութեան դաշտում: Ակտիվ դերակատարութիւն է ունեցել Արդարութիւն դաշինքում: Կարելի է ասել, որ հնչակեանները եղել են եւ կան Սփիւռքի միակ ազդեցիկ ուժը, որ 11 տարի է, ինչ արտասահմանում պահում է ընդդիմութեան դրոշմը: Համահնչակեան 19-րդ համագումարը, որն անցաւ Հայաստանում, յստակ ամբողջ, որ կուսակցութիւնը շարունակելու է ընդդիմութիւն մնալ ամբողջ աշխարհում: Այդ ընթացքում կուսակցութեանը անդամագրուեցին այնպիսի յայտնի ընդդիմադիր գործիչներ, ինչպիսիք են 1999 թ.-ի Հոկտեմբերի 27-ից հետ օպոզիցիոն դաշտի հանրայայտ գործիչ Վահան Շիրխանեանը, Աժպատգամաւոր Վարդան Խաչատրեանը:

Ինչեւիցէ, այս ամէնը սկսուեց նրանից, երբ տարբեր «պատասխանատու» մամուլներում գնաց «մեր աղբիւրների համաձայն» վերնագրեր, որոնք անձնական վիրաւորանքներ էին պարունակում կուսակցութեան համաշխարհային ղեկավարութեան, ՄԴՉԿ Հայաստանի կառուցի մի շարք ներկայացուցիչների հասցէին: ՀԱԿԻ- լրատուամիջոցներից մէկն էլ հասաւ այն մակարդակին, որ ՄԴՉԿ Կենտրոնական վարչութեան անդամ Վահան Շիրխանեանի ընտանիքի մասին սկսեց լուրեր գրել առ այն, թէ վերջինիս տղան աշխատում է Ղարաբաղի ԱԳՆ-ում, եւ ահա սա է պատճառը, որ «Շիրխանեանը համագործակցում է իշխանութիւնների հետ»: Իհարկէ Շիրխանեանի տղան այնտեղ չի աշխատում, աւելին, նրա ընտանիքի անդամները մէկ անգամ չէ, որ բազմաթիւ գրկանքներ են տեսել իրենց հոր քաղաքական հայեացքների պատճառով: Սակայն մի պահ ընդունենք, որ երիտասարդ Շիրխանեանն իսկապէս աշխատում է ԼՂՀ ԱԳՆ-ում: Բայց միթէ վատ է աշխատել Ղարաբաղում այն դէպքում, երբ նոյն ՀԱԿ-ի պարագլուխներից շատերի երեխաները քէֆ են քաշում արտասահմաններում:

Ինչպէս բացատրել ՀԱԿ-ի նմանօրինակ վարքագիծը: Կոնգրէսն իր գործունէութեամբ մէկ անգամ չէ, որ ապացուցել է սեփական գործընկերների նկատմամբ շանտաժով յարակերտելու շատ սիրելի պրակտիկան: Այն, ինչ որ կատարուեց ժառանգութեան հետ, կատարուում է այժմ ՄԴՉԿ-ում: Հզօր քարոզչամեթոդայն ունեցող ՀԱԿ-ը յստակ բոլորին ցոյց է տալիս, որ

քաղաքակիրթ գործընկերութեան կարիք նա չունի. իրեն անհրաժեշտ են ստրկական կառույցներ, ովքեր չեն էլ մտածի որեւիցէ կերպ ըմբոստանալ իր աստուածային կամքին: Որեւիցէ թեթեւ անհամաձայնութեան դէպքում ՀԱԿ-ը գնում է քաղաքական գործընկերների փչացման ճանապարհով: Ինչու ՀԱԿ-ը սկսեց պաշտպանել տիկին Լիւդմիլային եւ նրա մի քանի հոգուն. այստեղ գործում է շատ պարզ տրամաբանութիւն: Լ. Սարգսեանը պատրաստ է գոհել ոչ միայն կուսակցութիւնն ու գաղափարախօսութիւնը, այլ նաեւ շատ աւելի անձնական երեւոյթներ եւ մարդկանց՝ առաջիկայում որեւէ պաշտօնի հասնելու համար: Հնչակեանների միւս՝ իսկական թեւը երբեք եւ երբեք չեն համաձայնուի պարել այս կամ այն քաղաքական ուժի «դուրուկի» տակ:

Այստեղից, սակայն, հարց է առաջանում սեփական երկրում ժողովրդավարութեան եւ օրինականութեան ձգտող կառույցը ինչպէս կարող է հասնել դրան, եթէ իր իսկ ներսում գործում է ՀՀ առաջին նախագահի նշած «Վերից վար կուռուցապացուած, մոնոլիտ բուրգի պէս ուղղաձիգ ամբողջովին աւազակապետական մի համակարգ»:

Ինչեւէ, ինչ կարող է անել ՄԴՉԿ նորընտիր ղեկավարութիւնը՝ ապացուցելու համար հասարակութեանը, որ ինքն իսկապէս ինքնուրոյն ուժ է: Պէտք է օրնիբուն տքնաջան աշխատանք, ժողովրդի հետ ամենօրեայ շփում, հզօր կազմակերպական կառույցներ, եւ երկ-

Շարք էջ 3

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Մրջանի ԽՄԲԱԳԻՐ՝ ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ ԳԱՐԻԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ ՍԱՐԱԿ ԹՈՒԹԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ Դեռ. (626) 797-7680 Ֆաքս. (626)797- 6863 E:Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ՐԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆՐԱՅԱԲԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՊԱՐԱՆՁԵԼ ԵՆ ՀԱԿԱՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ՅուՆուար 11-ին կայացած երթը՝ ընդդեմ Հայ-թրքական Արձանագրությանն

«NEWS.am»: ՅուՆուարի 11-ին կայացած հանրահավաքի մասնակիցները Սահմանադրական դատարանից պահանջել են հակասահմանադրական կամ կիսահակասահմանադրական ճանաչել Հայ-թուրքական արձանագրությունները: Այս պահանջը նշուած է եղել հանրահավաքի կազմակերպիչ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան յայտարարութիւնում, որը հրապարակուել է Սահմանադրական դատարանի դիմաց տեղի ունեցած բողոքի ակցիայում:

ՀՅԴ համոզմամբ, հայ-թուրքական արձանագրութիւններում թուրքերը Յնախապայման են առաջադրել, ինչն անընդունելի է: Սահմանադրական դատարանի անդամներին ուղղուած յայտարարութիւնում նշուել է, որ արձանագրութիւնների վաւերացումը իսկ կը քաշի Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացին, եւ թող չի տա հարցականի տակ առնել հայ-թուրքական դե-ֆակտո գոյութիւն ունեցող սահմանները, քանի որ իրաւական հենք կը ստեղծի գոյութիւն ունեցող սահմանի համար՝ ամրագրելով Կարսի եւ Մոսկուայի հակաիրաւական պայմանագրերը:

Ըստ Դաշնակցութեան՝ թուրքերի երրորդ նախապայմանը հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը եւ Լեւոնալին Դարաբաղի հարցի լուծումը փոխկապակցելու եւ ազրբեջանամէտ լուծում տալու փորձերն են:

Սահմանադրական դատարանի անդամներին ուղղուած յայտարարութիւնում նաեւ նշուել են արձանագրութիւնների ստորագրման ժամանակ ընթացակարգում տեղի ունեցած խախտումների մասին:

Նշենք, որ ՅուՆուարի 12-ին ՀՀ սահմանադրական դատարանը կը սկսի քննարկել հայ-թուրքական արձանագրութիւնների երկրի գլխաւոր օրէնքին համապատասխանութեան հարցը:

ՀՅԴ ղեկավարներից բացի, հանրահավաքում ելոյթ են ունեցել նաեւ Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցութեան ատենապետ Յարութիւն Առաքելեանը, «Նոր ժամանակներ» կուսակցութեան ղեկավար Արամ Կարապետեանը: «Ժառանգութիւն» կուսակցութեան անդամները հանրահավաքին ներկայ են եղել, բայց ելոյթ չեն ունեցել:

Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆ. «ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԿՐ ԳՆԱՆ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՄԲ»

«7 Օր»: Աժ պատգամաւոր Վարդան Խաչատրեանը, անդրադառնալով հայ-թուրքական արձանագրութիւնների վերաբերեալ ՄԴԻ-ի կայացրած որոշմանն ու դրա հնարաւոր հետեւանքներին, ասել է.

«Քաղաքական դաշտում գնալով աւելի է խորանում այն սահմանագիծը, որից քաղաքական ուժերը բաժանուում են իշխանութեան որդեգրած գիծը սատարողների եւ այդ գծին ընդդիմացողների: Ամենայն հաւանականութեամբ, զարգացումները կը գնան ջերմաստիճանի բարձրացմամբ, որովհետեւ մենք հարցականի տակ ենք գնում կարեւոր մի հանգամանք՝ հայ ժողովրդի մեծ հայրենազրկման հարցը:

Պատասխանելով հարցին, թէ հնարաւոր է, որ Ազգային ժողովն էլ, հետեւելով Սահմանադրական դատարանի՝ հայ-թուրքական արձանագրութիւնների վերաբերեալ կայացրած շուտափոյթ որոշմանը, նման կերպ վարուի, Վ. Խաչատրեանն ասել է.

«Այսօրուայ Հայաստանի իշխանութիւնն անվիճելիօրէն մեծամասնութիւն ունի խորհրդարանում, եւ այդ հանգամանքի առջեւ պէտք



Աժ պատգամաւոր Վարդան Խաչատրեան

չէ աչքերը փակել: Սակայն, այնուամենայնիւ, կարծում եմ, որ հայ ժողովրդի բարձրագոյն շահերից ելնելով, պէտք է այնտեղ տեղի ունենայ հանգամանալից քննարկում: Անձամբ ես կոչ եմ անելու կատարել այն վերապահումները, որոնք հնարաւորութիւն կը տան հետազայում էլ շարունակել պայքարը յանուն հայ ժողովրդի այն սուրբ գաղափարների, որոնք ընթացել են մինչ այժմ:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՊՆԴՄԱՄԲ՝ ՊԵՏՐՈՍ ՄԱԿԷԱՆԸ ՈՉ ԹԵ ՏՈՒԺՈՂ Է, ԱՅԼ ՄԵՂԱԲՈՐ

Ջոն Կիրակոսեանի անուան դպրոցում տեղակայուած թիւ 10/09 ընտրատեղամասի մօտ Կիրակի օրը ծեծկռուտք է տեղի ունեցել, որի արդիւնքում երեք հոգի՝ Նիկոլ Փաշինեանի նախընտրական ենթաշտաբի պետ Պետրոս Մակէեանը, նրա որդին՝ Կարէն Մակէեանը եւ տուեալ տեղամասում Նիկոլ Փաշինեանի վստահուած անձ Սուրէն Մարտիրոսեանը վնասուած քներ են ստացել եւ տեղափոխուել են հիւանդանոց, կոտորուել է Մակէեանի քիթը:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում տուժողները պնդեցին, որ իրենց ծեծի են ենթարկել «ինչ-որ սահմանափակումներ»:

«Ոստիկանութիւնը դուրս եկաւ եւ փոխանակ սահմանափակումներին զսպի, բռնուած էր մեր ձեռքերը, որ նրանք խփեն», - պատմեց Պետրոս Մակէեանը:

Պետրոս Մակէեանի պատմածը հաստատեց նաեւ թիւ 10/09 ընտրատեղամասում «Ժառանգութիւն» կուսակցութեան ներկայացուցիչ Նարինէ Վանեանը, ով հասցրել է հեռախօսով իրենց շտաբին փոխանցել Փաշինեանի ներկայացուցիչներին ծեծի ենթարկողների աւտոմեքենայի պետնաւարանիչները:

Տուեալ միջադէպի վերաբերեալ Կիրակի երեկոյեան ոստիկանութեան հրապարակած հաղորդագրութիւնում, մինչդեռ, մասնաւորապէս, ասուած է. - «Դէպքի վայր մեկնած օպերատիւ խումբը պարզել է, որ Ազգային ժողովի պատգամաւորութեան թեկնածու Արամ Սիմոնեանի վստահուած անձ Տիգրան Մուրադեանի հետ վիճաբանել են պատգամաւորութեան թեկնածու Նիկոլ Փաշինեանի վստահուած անձ Պետրոս Մակէեանը, Կարէն Մակէեանը եւ Սուրէն Մարտիրոսեանը: Վիճաբանութեան ընթացքում Պետրոս, Կարէն Մակէեաններն ու Սուրէն Մարտիրոսեանը ծեծի են ենթարկել Տիգրան Մուրադեանին»:

«Ինչպէ՛ս կը մեկնաբանէք այն



Պետրոս Մակէեան


հակասութիւնը, որ առկայ է ոստիկանութեան հաղորդագրութեան մէջ. մի կողմից՝ ոստիկանութիւնը նշում է, որ Արամ Սիմոնեանի վստահուած անձին՝ Տիգրան Մուրադեանին ծեծի են ենթարկել Պետրոս Մակէեանը, Կարէն Մակէեանն ու Սուրէն Մարտիրոսեանը, միւս կողմից՝ հիւանդանոցում է յայտնուել ոչ թէ ըստ ոստիկանութեան տեղեկատուութեան ծեծի ենթարկուածը՝ Տիգրան Մուրադեանը, այլ Նիկոլ Փաշինեանի վստահուած անձինք», - «Ազատութիւն» ռադիոկայանի այս հարցին ոստիկանութեան լրատուութեան բաժնի հասարակայնութեան հետ պերի բաժնի պետի տեղակալ Արմէն Մալխասեանը պատասխանեց, որ չի կարող մեկնաբանել, եւ որ իրենց ունեցած տեղեկատուութիւնն այդքանն է:

«Հակասութիւնն այն է, որ ոստիկանութիւնն ինքը մասնակից է եղել այդ ամբողջ գործընթացին: Այս ոստիկանութիւնը, որը բանդայի հետ համագործակցում է, սահմանափակումներին հետ համագործակցում է՝ ինչպէ՛ս բացատրեմ: Իրենց համար դա սովորական երեւոյթ է՝ ոստիկանութիւնը բռնուած էր մեր ձեռքերը, որ այդ սահմանափակումները խփեն», ընդ որում՝ Արամ Սիմոնեանի վստահուած անձը յանձնաժողովի նախագահի մեքենայով բանդային - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Մակէեանը:

ՄԱՐԱՑԵԼ Է ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍԵԱՆԸ

86 տարեկանում վախճանուել է ակադեմիկոս Ֆադէյ Սարգսեանը: Նա եղել է ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ, ՀՀ Աժ նախկին պատգամաւոր, գեներալ-մայոր:

Աշխատել է ԽՍՀՄ Պաշտպանութեան Նախարարութեան Հրետանային գիտատեխնիկական կոմիտէի հրթիռահրետանային գլխաւոր վարչութեան տարբեր ղեկավար պաշտօններում (1946-1959)՝ երկրորդ հիւսիսային (1963-1977), ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ (1977-1989), Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի ֆիզիկատեխնիկական գիտութիւնների - մեխանիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (1989-1993), այնուհետ - ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակա-



Ակադեմիկոս Ֆադէյ Սարգսեան

դեմիայի նախագահ (1993-2006): 2006-ից ՀՀ վարչապետի խորհրդականն էր:

ՍԴՀԿ-Ի ՊԱՌԱԿՏՄԱՆ ՄԵՂԱԲՈՐԸ ՀԱԿ-Ն Է

Շաբաւակուած էջ 2-էն ըրի ապագան փոխելու աշխատող եւ պրագմատիկ ծրագիր: Մինչեւ ՀԱԿ-ը գոռում է իշխանափոխութեան մասին եւ գնում դէպի անկում, ՍԴՀԿ-ն պէտք է պայքարի երկրում

ծաւալուող անարդարութիւնների, բանտերում առկայ քաղբանտարկեալների ազատման, սոցիալական արդարութեան համար: Միայն այս պարագայում կարող է լինել ՍԴՀԿ-ի յաջողութեան գրաւականը: haynews.am

ԼՈՒՐԵՐ

ԱՂԹԱՍԱՐԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՎՐԱՅ ԽԱՉ ՉԻ ՏԵՂԱԴՐՈՒԻ



Ախթամար կղզիի վրայ գտնուող Սուրբ Խաչ հայկական եկեղեցին

Թուրքական Milliyet-ին տուած հարցազրույցում Թուրքիայի Զբօսաշրջութեան եւ մշակութի նախարար էրթուղրուլ Գիւնայը ասել է, որ Ախթամար կղզու Սուրբ Խաչ հայկական եկեղեցին չի բացուելու կրօնական արարողութիւնների համար եւ զմբէթին խաչ չի տեղադրուելու, քանի որ այս եկեղեցին նման արարողութիւններ անցկացնելու թույլտուութիւն ստացած հաստատութիւնների ցանկում չկայ:

Անցած ամիս Վանի նահանգապետ Մուհիթ Կարաօղլուն յայտարարել էր, որ Ախթամարի Ս. Խաչ եկեղեցին կը փոխի իր բացառապէս թանգարանային կարգավիճակը եւ կը դառնայ նաեւ սրբատեղի-աղօթավայր, կրօնական արարողութիւնների համար եկեղեցու վերաբացման հնարաւոր ամսաթիւ կարաօղլուն նշել էր այս տարուայ Սեպտեմբերի 12-ը:

«Սուրբ Խաչի տօնը լաւ առիթ կարող է դառնալ Թուրքիայի մշակութի նախարարութեան համար՝ ցոյց տալու, որ ցանկանում է լաւացնել Հայաստանի, հայերի հետ յարաբերութիւնը», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրույցում երկուշաբթի ասաց Ստամբուլում լոյս տեսնող «Ակօս» թերթի պատասխանատու խմբագիր Արիս Նալչը:

Նա յիշեցրեց, որ Ախթամարի Սուրբ Խաչը վերանորոգուել է Թուրքիայի Զբօսաշրջութեան եւ մշակութի նախարարութեան կողմից, եւ կրօնական արարողութիւնների նպատակով եկեղեցու

վերաբացման համար անհրաժեշտ է հենց նախարարութեան թույլտուութիւնը:

Նալչը ընդգծեց, որ Milliyet-ում հրատարակուած հարցազրույցում Մշակութի նախարարը եկեղեցու բացելը հնարաւոր չի համարել բիւրոկրատական խնդիրների պատճառով, սակայն չի ասել, թէ տարին մէկ անգամ արարողութիւն անցկացնելու հրաման չեն տալու:

«Նախարարը նշել է, որ Ախթամարի Սուրբ Խաչը չի վերաբացուի որպէս եկեղեցի, բայց նա չի ասել, որ տարին մէկ անգամ արարողութիւն անցկացնելու հրաման պէտք է չտան: Սրանք քաղաքական խաղեր են, յիշեցնելու, թէ քաղաքապետարանը այդ մարզի կառավարիչն է, բայց մշակութի նախարարն է որոշում, թէ ինչպէս պէտք է լինի: Մենք յոյս ունենք, որ գոնէ Սուրբ Խաչի տօնին՝ Սեպտեմբերի 12-ին, արարողութիւն կը կարողանանք կատարել եկեղեցում»,- ասաց Արիս Նալչը:

Թուրքիայի կառավարութիւնը Ախթամարի Սուրբ Խաչ եկեղեցու վերանորոգման գործընթացը սկսեց 2005 թուականի Մայիսից: Աշխատանքները, որոնց արժէքը, թուրքական լրատուամիջոցների փոխանցմամբ, կազմել է շուրջ 1.7 միլիոն տոլար, աւարտուեցին 2006-ի Հոկտեմբերին: Եկեղեցին վերաբացուեց 2007 թուականի Մարտի 29-ին, սակայն եկեղեցու վրայ խաչ չտեղադրուեց. այն գործում է որպէս թանգարան:

ՄԱՅՐ ԱԹՈՒԸ ՉԻ ԲԱՑԱՌՈՒՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԲԱՔՈՒ ՄԵՎՆԵԼԸ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը չի բացառում Ապրիլին Պաքուում աշխարհի կրօնական առաջնորդների գագաթնաժողովին Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին 2-րդի մասնակցելու հնարաւորութիւնը, թէեւ Բաքուից դեռ որեւէ հրահր չի ստացել: Այդ մասին NEWS.am-ին յայտնեց Մայր Աթոռի մամուլի դիւանի խօսնակ Տէր Վահրամ Մելիքեանը:

«Այս պահի դրութեամբ դեռ Մայր Աթոռում հրահր չի ստացուել, եթէ ստացուի, կը ծանուցենք այդ մասին: Քանի դեռ հրահր չկայ, այդ մասին խօսելը դեռ վաղ է,- նշեց մամուլի պատասխանատուն: Ի դէպ, հարցին, թէ հրահրի

դէպքում կը գնայ՝ արդեօք Ամենայն Հայոց կաթողիկոսը Բաքու, Տէր Վահրամը պատասխանեց. «Ինչո՞ւ ոչ»:

Յիշեցնենք, որ այս տարուայ Ապրիլին Բաքուում Կովկասի մահմետականների վարչութեան ղեկավար, ԱՊՀ Միջկրօնական խորհրդի համանախագահ Հաջի Ալլահշուքեր Փաշապաղէի եւ Ռուս ուղղափառ եկեղեցու նախաձեռնութեամբ կայանալու է աշխարհի կրօնական առաջնորդների գագաթնաժողով: Ադրբեջանական լրատուամիջոցները յայտարարել էին, թէ Հայ առաքելական եկեղեցու հովուապետը եւս մասնակցելու է այդ գագաթնաժողովին:

ԹՈՒՐԲ ԳՈՐԾԻՉԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՏՈՅԺԻ Է ԵՆԹԱՐԿՈՒԵԼ ՅԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԻՏՄԱՆ ՅԱՄԱՐ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Շիրմա Օրանը՝ յայտնի թուրք գիտնական Բաշքըն Օրանի դուստրը, ֆրանսիական դատարանի կողմից տուգանուել է 1500 եւրոյի չափով, քանի որ, ըստ թուրքական լրատուամիջոցների հաղորդումների, հրաժարուել է ասել, որ Օսմանեան կայսրութեան մայրամուտին՝ 1915 թուականին տեղի ունեցած իրադարձութիւնները ցեղասպանութիւն էին:

Շիրմա Օրանը սկզբում առաջադրել է իր թեկնածութիւնը Լիոնի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրութիւններին մասնակցելու համար, ապա՝ հանել այն Հայոց ցեղասպանութեան փաստը ճանաչելու պահանջով ճնշումների ներքոյ:

Բնութագրելով դատարանի վճիռը որպէս «ամօթալի», Շիրմա Օրանը յայտարարել է, թէ բողոքարկելու է այն Մարդու իրաւունքների եւրոպական դատարանում:

Ֆրանսիան այժմ մի նոր նախաձեռնութիւն է պատրաստում՝ Գերագոյն դատարանի կազմում կը գործի մասնագիտացուած առանձին դատարան, որը կը զբաղուի միայն մարդկութեան դէմ գործած յանցանքներին, ցեղասպանութիւններին առնչուող գործերի քննութեամբ, - ֆրանսիական Le Mond-

ի տեղեկացմամբ՝ այդ լուրը թերթին են փոխանցել Ֆրանսիայի արտգործնախարար Բեռնար Քուշներն ու արդարադատութեան նախարար Միշէլ Ալիօ Մարին:

Նախարարները նշել են, որ Գերագոյն դատարանի կազմում այդ յատուկ ճիւղի ստեղծումը նախատեսուած է իրաւական համակարգի վերաբերեալ աւելի ընդհանուր օրէնքի նախագծով, որը խորհրդարանի կողմից քննարկուելու է 2010 թուականի առաջին վեց ամիսների ընթացքում:

Ըստ Քուշների եւ Ալիօ Մարիի, այդպիսի օրէնքի ընդունումը նպատակ ունի արժեւորել միջազգային իրաւունքի սկզբունքները ազգային իրաւական համակարգում՝ յարգելով 1998 թուականի Հռոմի համաձայնագիրը:

Նշելով, որ մարդկութիւնը իրաւունք ունի պաշտպանուել ընդդէմ մոռացութեան, նախարարները ընդգծել են, թէ այն անձինք, որոնց հանդէպ կարելի է կասկած տածել ցեղասպանութիւն կատարած լինելու, պատերազմական եւ մարդկութեան դէմ յանցագործութիւնների մէջ, պէտք է դատուեն: «Միայն արդարադատութիւնն է, որ թույլ կը տայ երեւան հանել ճշմարտութիւնը», - յաւելել են Ֆրանսիայի արտաքին գործերի եւ արդարադատութեան նախարարները:

ՅԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ ԻՍՐԱՅԵԼ ԿԸ ՅՐԱՅՐԷ ՅԱՅ ԵՒ ՅՈՅՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ

Լրագրողների հետ հանդիպման ժամանակ Երեւանի Սուրբ Սարգիս եկեղեցուց հոգեւոր հովիւ Տ. Շահէ քահանայ Հայրապետեան յայտնած է որ, Երուսաղէմի մէջ հայկական եւ յունական հոգեւորականներու միջեւ անընդհատ բախումները իսրայէլի իշխանութիւններու սադրիչ գործողութիւններու արդիւնքն են, քանի որ անոնք նպատակ ունին ազատուելու Երուսաղէմի մէջ հայկական տարրէն:

Հայ եկեղեցականի կարծիքով, հրեաներու սուրբ լեռը՝ Սիոնը, փաստօրէն կը գտնուի հայ համայնքի տիրապետութեան տակ եւ իսրայէլը հայերուն իրենց տարածաշրջանէն դուրս հանելու ծրագրային քաղաքականութիւն է որ կ'իրականացնէ:

Ըստ քահանայի, Հայաստանի Հանրապետութիւնը ոչնչով չի կրնար դիմակայել այդ քաղաքականութեան, քանի որ նման մօտեցումը կրնայ ընկալուիլ միջամտութիւն այլ երկրի ներքին գործերուն: Բացի անկէ, Հայաստան միջոցներ չունի այդ տարածքները բնակեցնելու եւ զարգացնելու, եւ այդ խնդիրը այնտեղ կը փոր-

ձեն լուծել հայ հոգեւորականութիւնը:

Տէր Շահէ քահանայի կարծիքով նման պայմաններու տակ, բախումները պիտի շարունակուին նաեւ հետագային, քանի որ խնդիրը ունի ոչ միայն կրօնական, այլեւ քաղաքական ենթատեքստ:

Բեթ՛հեղէմի Սուրբ Ծննդեան տաճարէն ներս հայ եւ յոյն հոգեւորականներու միջեւ վերջին ծեծկռտուքը տեղի ունեցած է Դեկտեմբերի 30-ին եւ աւարտած է ոստիկաններու միջամտութեամբ:

Ծեծկռտուքի ժամանակ հայ հոգեւորականներէն մի քանին վիրաւորուած են:

Երուսաղէմի մէջ հայ եւ յոյն հոգեւորականներու միջեւ միջադէպերը արդէն «աւանդական» դարձած են: Նման դէպքեր տեղի կ'ունենան գլխաւորաբար Սուրբ Ծննդեան եւ Սուրբ Զատիկի կամ Յարութեան եկեղեցական տօներու առթիւ: Պատճառն այն է, որ յոյն հոգեւորականները դժգոհ են, որ աւանդաբար հայ հոգեւորականները մեծ դերակատարութիւն ունին Երուսաղէմի մէջ տեղի ունեցող արարողութիւններուն:

«ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՏՈՒՆ»

Ծարուակաւուած էջ 1-էն

թիւններու գծով տնօրէն Քրիս Ուոքըրը, որ յայտնեց, - «Թէեւ Հայաստան կը շարունակէ դատուիլ մասամբ ազատ երկիրներու շարքին, սակայն, իրականութեան մէջ կը գտնուի մասամբ ազատներու եւ ոչ ազատներու սահմանագծին»:

«Մարտի 1-ի հետ կապուած շարք մը հարցեր կը շարունակեն

բաց մնալ», - ըսաւ Ուոքըրը: - «Մեզ իսկապէս կը մտահոգէ, թէ ինչպէս են Հայաստանի իշխանութիւնները հետամուտ դառնալու այդ հարցերու լուծման: Որոնց շարքին են, օրինակ, անկախ փաստահաւաք խումբի լուծարումը եւ կամ բուռնութիւններէն յետոյ դատարաններու ու իշխանութեան միւս օղակներու գործունէութիւնը»:

ՍՓԻՈՔ

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԷՆ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆ ՄԵՐԺԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ - ԹՈՒՐՔԻԱ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններուն դէմ լիբանանահայտնութեան մերժողական պայքարը կանգ չէ առած, այնքան ատեն որ հարցը իր լուծումին չէ հասած, Թուրքիա կը շարունակէ տարբեր միջոցներով նախապայմաններ առաջադրել, եւ հայ ժողովուրդի ազգային անվտանգութիւնը խաթարուած է:

Այս շրջագիծին մէջ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրական դատարանին կողմէ արձանագրութիւնները քննութեան առարկայ դառնալէ առաջ, լիբանանահայտնութիւնը եւս արտայայտեց իր միակամ եւ ազգային կեցուածքը, որուն մեկնակէտն է հայ ժողովուրդի ապահովութիւնը եւ Հայ դատի արդար լուծումը:

Կազմակերպութեամբ հայ քաղաքական երեք կուսակցութիւններուն, կիրակի, 10 Յունուար 2010-ին, կէսօրուան ժամը 12:00-ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ տեղի ունեցաւ «Մերժենք Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններուն սահմանադրականութիւնը» թեմայով ժողովրդային հաւաք՝ ներկայութեամբ հոգեւոր պետերու, քաղաքական երեք կուսակցութիւններու ներկայացուցիչներու, պատկան մարմիններու ու միութիւններու ներկայացուցիչներուն, նախկին եւ ներկայ երեսփոխաններու, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարըլեանի, երիտասարդներու, ուսանողներու եւ ժողովրդային բազմութեան:

Լիբանանի եւ Հայաստանի քայքայներուն յոտնկայս ունկնդրութեան հետք, ներկաները դիտեցին տեսաերիզ մը, որուն մէջ ներկայացուած էին Հայաստան - Թուրքիա արձանագրութիւններուն դէմ լիբանանահայտնութեան կատարած բողոքի արշաւի տարբեր նախաձեռնութիւններէն հատուած-

ներ: Հանդիսութեան բացման խօսքը արտասանեց Հրայր Ճեպեճեան, որ նշեց, թէ Հայաստան - Թուրքիա յարաբերութիւնները եւ արձանագրութիւնները իրենց անորոշ տուեալներով ու մեկնաբանութիւններով աշխարհասփիւռ հայտնութեան հոգին ալեկոծեցին, սիրտը խռովեցին ու միտքը տազնապեցուցին: Ճեպեճեան հաստատեց, թէ Հայոց ցեղասպանութեան վաւերականութեան հարցը երբեք սակարկելի չէ:

Անդրադառնալով լիբանանահայտնութեան «Ո՛չ»-ի արշաւին՝ Հրայր Ճեպեճեան յայտնեց, որ այդ «Ո՛չ»ը հաւաքական մտածողութեան արդիւնքն էր, որուն հիմքն էր պատմական փորձառութիւնները:

Իր խօսքի աւարտին Ճեպեճեան հաստատեց, թէ լիբանանահայտնութիւնը իր երեք կուսակցութիւններով, համայնքներով եւ ժողովուրդով կու գայ վերահաստատելու իր կեցուածքը Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններուն նկատմամբ՝ զանոնք նկատելով հակասական ու ազգամիաս:

Ռամկավար Ազատական կուսակցութեան խօսքը արտասանեց տոքթ. Վազգէն Ժամկոչեան, որ Հայաստան - Թուրքիա արձանագրութիւններուն գծով վերապահութիւններուն մասին կարգ մը մատնանշումներ կատարեց: Ան ըսաւ, թէ ենթադրաբար ճեպեճեան հարցին քննարկումը նոյնինքն հարուած է ցեղասպանութեան ճանաչման գործընթացին, մինչ սահմաններու փոխադարձ ճանաչումը՝ վերջակէտ հողային պահանջատիրութեան անգիշերի իրաւունքին:

Վազգէն Ժամկոչեան յայտնեց, որ Հայաստանի Հանրապետու-

Շաբ.բ էջ 20

ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՄԷՋ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՆ ՀԱՍՄՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ


Թուրքիոյ հայ համայնքը պաշտօնապէս դիմած է իսթանպուլի իշխանութիւններուն Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի աթոռակից պատրիարքի (համապատրիարքի) ընտրութիւններ կազմակերպելու թոյլտուութիւն ստանալու համար, քանի որ Թուրքիոյ հայ համայնքի հոգեւոր առաջնորդ՝ Պոլսոյ պատրիարք Մեսրոպ Մութաֆեանը հիւանդ է եւ չի կրնար լիարժէք կատարել իր պարտականութիւնները: Ընտրութիւններուն պիտի մասնակցին Պոլսոյ հայ համայնքի աւելի քան 50 հազար անդամներ:

Մեսրոպ պատրիարքը մինչեւ մահը պիտի պահպանէ իր տիտղոսը, բայց, քանի որ ըստ հաղորդագրութիւններու, ան հիւանդ է ծերունական թուլամտութեամբ, անհրաժեշտութիւն յառաջացած է համապատրիարք ընտրելու, որպէսզի ան իր պարտականութիւնները սկսի կատարել ընտրութիւնէն 40 օր յետոյ:

Մեսրոպ Մութաֆեան պատրիարք ընտրուած էր 1998 թուականին դառնալով Մեսրոպ երկրորդ պատրիարք՝ Պոլսոյ Հայ Առաքելական եկեղեցոյ պատրիարքարանի ու թուրքահայ համայնքի հոգեւոր առաջնորդը:

Թուրքիոյ Հանրապետութեան պատմութեան մէջ համապատրիարքի ընտրութիւններ կը կատարուին երկրորդ անգամ:

Թրքական «Չաման» թերթը կը գրէ, որ Պոլսոյ Հայոց պատրիարքարանի աթոռակից



Սեպուհեայիսկոպոս Զուլքեան

պատրիարքի ընտրութեան համար երկու հոգեւոր առաջնորդներ հաստատել են իրենց թեկնածութիւնը: Թեկնածուներէն մէկը Հայաստանի Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհեայիսկոպոս Զուլքեանն է, միւսը՝ Գերմանիոյ հայերու հոգեւոր առաջնորդ Գարեգին եպիսկոպոս Բէկէջեանը, երկուքն ալ ծնած են Թուրքիոյ մէջ:

Երկու եպիսկոպոսները դրական պատասխանած են Պոլսոյ Հայոց պատրիարքարանի նամակին, որ յղուած էր վեց հոգեւոր առաջնորդներու՝ պարզելու, թէ արդեօք անոնք մտադիր են առաջադրուելու եւ մասնակցելու աթոռակից պատրիարքի ընտրութեան:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎԱԻԵՐԱՑՄԱՆ ԴԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱԻՎՔ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրական Դատարանի Հայթրքական Արձանագրութիւններու վաւերացման նախօրեակին, տեղի ունեցաւ ժողովրդային հաւաք՝ Թորոնթոյի Հայ Կեդրոնի սրահին մէջ Ուրբաթ, 8 Յունուար 2010ի երեկոցեան ժամը 8:30-ին:

Ժողովրդային այս հաւաքը կազմակերպուած էր Թորոնթոյի հայ քաղաքական կուսակցութիւններու, Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, Հ. Յ. Դաշնակցութեան եւ Ռ. Ա. կուսակցութեան, Միջկուսակցական Մարմնի կողմէ:

Թորոնթոյի Միջ-կուսակցական Մարմինը կազմուեցաւ Հայաստանի իշխանութեանց կիրարկած ներկայ ազգավախա քաղաքանութեան եւ Փրոթոթոյի արձանագրութիւններու գործընթացի սեմին:

Միջ-կուսակցական մարմնի երրորդ ժողովրդային հաւաքն էր այս, որ կը համախմբէր գաղութի հայ քաղաքական երեք կուսակցութիւններու անդամներն ու համակիրները լսելու եւ լուսաբանուելու Հայաստանի քաղաքական կեանքի վերջին անցուղարձերուն շուրջ:

Այսօր, մեր քաղաքական կուսակցութիւններու մօտ կը տիրէ միասնականութիւնը եւ գործակցութեան միակամ ոգին, հաւանաբար սփիւռքահայու մօտ ներկայ միակուրախանալի երեւոյթը՝ Հայաստանի եւ Թուրքիոյ ֆութպոլային դիւանագիտութեան իբր արդիւնք:

Ժողովրդային հաւաքին ներկայ էին օրուան ցեկուցաբեր՝ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Յակոբ Տէր Խաչատուրեանի կողքին, Ռամկավար Ազատական կուսակցութեան Կեդրոնա-

կան Վարչութեան Ատենապետ՝ Մայք Խարապեան, Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի, Ս.Դ.Հ.Կ.ի եւ Ռ.Ա.Կ.ի Շրջանային Վարչութեանց անդամներ եւ հոծ բազմութիւն:

Օրուայ հանդիսավարը՝ Յարութ Գալայճեան հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգելու ցեղասպանութեան մեր բերաւոր նահատակներուն եւ Հայ Դատի եւ Արցախի Ազատագրութեան ճամբուն իրենց կեանքերը գոհած՝ հազարաւոր մարտիկներուն իշատակը:

Ան հակիրճ կերպով անդրադարձաւ 10 Հոկտեմբեր 2009-ի տեղի ունեցած Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ Փրոթոթոյի արձանագրութիւններուն եւ այդ ուղղութեամբ՝ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրական Դատարանի վաւերացման գործընթացին, որ տեղի պիտի ունենայ 12 Յունուար 2010-ին: Ան շեշտեց, որ այսօրուայ հաւաքին նաեւ նպատակն է գեկուցումի աւարտին լսել ներկաներու մտահոգութիւններն ու հարցերը: Ապա, ան հրաւիրեց օրուայ գեկուցաբեր Յակոբ Տէր Խաչատուրեանը:

Յակոբ Տէր Խաչատուրեան մանրամասնօրէն գեկուցեց Փրոթոթոյի գործընթացին մասին եւ իր հուսովեամբ գտաւ զայն վտանգաւոր հայտնութեան իրաւական պահանջատիրութեան եւ շեշտեց՝ թէ ազգային ճշմարտութիւնները երբեք բանակցային հարցեր չեն կրնար ըլլալ:

Ան անդրադարձաւ Հայաստանի քաղաքական կուսակցութիւններուն որդեգրած դերին եւ յայտնեց

Շաբ.բ էջ 20

ՅՈՒՇԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Լիբանանահայ բաղաձայն կուսակցութիւնները, յարանուանական հոգեւոր ու ազգային պատասխանատուները եւ հասարակական կազմակերպութիւնները գանազան առիթներով իրենց անհամաձայնութիւնը յայտնած են ներկայ տեսիլի մէջ Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնները վաւերացնելու հարցին:

12 Յունուարին կը սպասուի Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրական դատարանին եզրակացութիւնը՝ երկու արձանագրութիւններուն Հայաստանի սահմանադրութեան համապատասխանութեան մասին: Մեկ Խորապէս համոզուած ենք, որ այս արձանագրութիւնները կը բովանդակեն Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան հիմքը նկատուող Անկախութեան հռչակագիրով ամրագրուած սկզբունքներուն եւ առաջադրանքներուն հակասող հիմնական դրոյթներ:

Այս արձանագրութիւնները կը հակասեն.

ա.- Համայն հայութեան իղձերու իրականացման եւ պատմական արդարութեան վերականգնման գործին:

բ.- Ազգերու ինքնորոշման իրաւունքի յարգումին, որուն հիման վրայ Անկախութեան հռչակագիրը կ'առաջադրէր Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի վերամիաւորումը:

գ.- Հայոց ցեղասպանութեան միջազգային նախադրման համար մեր պետութեան սատար կանգնելու յանձնարարութեան:

Այսու կոչ կ'ուղղեմք, որ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրական դատարանը այս արձանագրութիւնները համարէ սահմանադրութեան չհամապատասխանող փաստաթուղթեր եւ յայտարարէ անոնց հակասահմանադրականութիւնը:

ՄԻՋԿ ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐՋԱՆԻ ՎԱՐՉՈՒ ՄԱՐՄԻՆ ՀՅԴ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵՂԵՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ ԹԱԿ ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ 10 Յունուար, 2010

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

ԴԱԲԱՃԱՆՈՒԹԻՒՆ ԶԷ՝ ԱՐԴԵՕՔ՝ ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ՕԺԱՆԴԱԿԵ ՏԱԳՆԱՊԱՅԱՐ ԹՇՆԱՄԻՆ

ՄԵԹՐ Գ. ՏԷՐՏԵՐԵԱՆ

Հայտնի է, որ տարագրեալ արեւմտահայոց, դեռ չկայացած պետութեամբ արեւելահայոց ու դեռ ինքնորոշուող արցախահայոց իր երեք՝ շարունակուող Գոյամարտի ջոկատներով, անցեալէն ժառանգած է ցեղասպանութեամբ ու բռնագաւթումով ծանրաբեռնուած պատմութիւն մը, որուն գլխաւոր դերակատարն է Փանթուրքիզմի վարդապետութիւնը, որ կը վայելէ ամերիկեւստանի իմփերիալիզմի ուղղակի հովանաւորութիւնն ու նեցուկը:

Հետեւեալը, Հայտնի է ընդհանուր այս Գոյամարտին ջոկատներէն մէկուն օժանդակութիւնը՝ տաղանապահար իր թշնամիին, որ թուրքիան է այս պահուն, դաւաճանութեան համագործակցութեամբ թիւն մըն է, զոր կը գործեն այսօր՝ Արեւելահայաստանի ղեկավարները, մոռնալով կամ՝ մոռացութեան տալով մեր ծանրաբեռնուած պատմական ժառանգութեան դասերն ու փորձութիւնները:

Հայ-թրքական յարաբերութիւնները «բնականոնացնել» ու խնդիրը երբեք չի՝ նմանի՝ ուրիշ երկու երկիրներու միջեւ յարաբերութեանց կարգաւորման խնդրին:

Պատմագանցական մօտեցումը՝ Հայ-թրքական յարաբերութեանց, ոչ միայն բնագանցական մտածելակերպով հակադրականութիւն է եւ անիրազատութիւն, այլեւ՝ հայաքանդ մօտեցում է, քանի որ այդպիսի մօտեցումը նպաստաւոր է միայն թշնամիին՝ ցեղասպանին ու բռնագաւթողին: Ատիկա իրապաշտութիւնն է, այլ՝ անիրաւի գործնապարտութիւն, իմփերիալիստական փրակմաթիզմ, որուն քարոզչութիւնը նենգամտօրէն կը պահանջէ՝ մոռնալ պատմութիւնը, մոռնալ՝ պատմական իրաւունքները, եւ՝ հլու հնազանդ համակերպիլ կատարուածի փաստին... ներքով՝ հայասպանին ու Հայաստանը զաւթողին... Աստուծոյ ահեղ դատաստանին թողելով պատիժն ու հատուցումը:

Ահա՛ այսպիսի պատմագանցական հայաքանդ փրակմաթիզմով է, որ ՀՀ իշխանական վերնախաւը կը մօտենայ Հայ-թրքական յարաբերութիւններուն: Այս մօտեցումը՝ in abstracto բնագանցական մօտեցում մըն է, որ կ'անջատուի պատմական իրականութենէն, ինչ որ բացառապէս շահաւէտ է ցեղասպանին, բռնագաւթողին, գաղութարարին ու իմփերիալիստին համար, քանի որ ասոնց շահը կը պահանջէ՝ կատարուած անիրաւու-թեանց ու ոճիրներուն ստեղծած statu quo-ի պահպանումը, անարդար իրավիճակին ամրապնդումը: Մինչդեռ՝ ցեղասպանեալ, բռնագաւթեալ, անիրաւեալ ու գաղութացեալ կողմին շահերը երաշխաւորող մօտեցումը՝ in concreto պատմամտածողական շօշափելի մօտեցումն է փոխ յարաբերութեանց խնդրին: Այսինքն՝ իրապաշտական ու իրաւապաշտական մօտեցում, որ կը պահանջէ արդարութեան վերականգնումը, թոյլ տալով՝ անարդար իրավիճակին անվերականգնելի ամրապնդումն ու նուիրագործումը...:

Ինչ խօսք՝ որ in abstracto բնագանցական-պատմագանցական մօտեցումը որդեգրելու պարագային, ոչ ոք կ'առաւելէ՝ թէ բաց սահմանը աւելի վատ է, քան՝ փակը... թէ՛ տնտեսապէս զարգանալու համար, դէպի արտաքին շուկաներ ճանապարհներու շատութիւնը, կարճութիւնը եւ նուազ ծախսալից ըլլալը աւելի ձեռնտու է, քանի՛ ատոնց նուազ, հեռաւոր ու ծախսալից ըլլալը... թէ՛ որեւէ դրացի երկիրներու միջեւ բարեկամական ու բնականոն յարաբերութիւնը աւելի լաւ է, քան՝ լարուածութիւնը, հակամարտութիւնն ու թշնամութիւնը... թէ՛ որեւէ երկու երկիրներու միջեւ գոյութիւն ունեցող անցեալի խնդիրները պէտք է կոչը ատելութեամբ մշտնապատեն մեր ապագայի իրապաշտական ողջմիտ հաշիւները: Բայց, իրապաշտական ողջմիտ հաշիւներով ու in concreto եղանակով, ինչո՞ւ պիտի չմօտենանք՝ որեւէ երկու երկիրներու պատմական յարաբերութիւններէն գլխովին տարբեր Հայ-թրքական յարաբերութեանց խնդրին, եւ մենք մեզ պիտի գրկենք մեր հաւանաբար՝ աշխարհաքաղաքական ու ռազմավարական, հզօրագոյն գէնքէն, որպիսին է Հայ Դատը, իր հողային, մշակութային, բարոյական ու նիւթական բաղադրիչներով: Մենք ինչո՞ւ պիտի հրաժարինք պատմամտածողութեան հաշտ in concreto եղանակով Հայ Դատի մեր կառչածութենէն, մեր պատմական խիստ կենսական իրաւունքներէն, որոնք մեր ժողովուրդի ապագայ լինելու թիւնը կը պայմանաւորեն, եւ՝ դաւաճանական դասալքութեան անտեղի անհեթեթութեամբ մը, ճանաչում պիտի տանք թուրքիոյ ներկայի սահմաններուն

եւ ատոնց ամբողջականութեան՝ ուրանալով Արեւմտահայաստանն ու անոր բռնագաւթումը նոյնինքն թուրքիոյ կողմէ, կամ՝ ուրանալով հայութեան ու մարդկութեան դէմ գործուած ցեղասպանութեան ոճիրը, կամ՝ պատմաբաններուն թողելով իրաւունքը ճշդելու՝ թէ արդեօ՞ք անցեալին եղեր է այդպիսի հայասպան ոճիր, որուն հետեւանքները կը շարունակուին մինչեւ օրս: Չի բաւեր այսքանը, ճանաչում տալով թուրքիոյ տարած քային ամբողջականութեան սկզբունքին, հարկադրուած պիտի ըլլանք ճանչնալ նաեւ՝ երրորդ երկրի մը, Ատրպէյճանի տարած քային ամբողջականութեան սկզբունքը... հրաժարած ըլլալով՝ Արցախի ինքնորոշման անկապտելի, անսակարկելի, անկասելի եւ բոլոր-բոլորին պարտադիր ուժ ունեցող (jus cogens եւ erga omnes) իրաւունքէն...:

Հարցին in concreto մօտեցումով կարելի կ'ըլլայ տեսնել՝ որ սահմանի բացումը շատ աւելի շահաւէտ է թուրքիոյ եւ Ատրպէյճանի համար, քան՝ Հայաստանի. եւ այս կարգադրութեան թայմինկն ալ՝ շահաւէտ է թուրքիոյ, հարիւր տոկոսով, եւ վնասակար՝ Հայաստանի, հարիւր տոկոսով...:

Հայաստան այսօր՝ իր հիւանդ տնտեսութեամբ եւ անբաւարար պահեստներով, չի կրնար մրցիլ թուրքիոյ հետ, քանի որ չ'արտադրեր այնպիսի ապրանքներ՝ որ մրցունակ որակ ու մրցունակ գին ունենան, թրքականին դիմաց, որ արդէն՝ փակ սահմանի ալ պայմաններու մէջ, ողողած է Հայաստանի շուկան...: Հետեւեալը,

թուրքիան է որ առաւելագոյնս պիտի օգտուի բաց սահմանէն ու թրանզիթի ալ ճանապարհներէն: Դէպի Միջերկրական ու Սեւ Սովետական ծովերու պատրանքին շուրջ ամերիկեան իմփերիալիզմին յօրինած օրօրներուն դիմաց, Հայաստանի իշխանաւորները լիազօրուած չեն՝ հայ ժողովուրդի լայն զանգուածներուն կողմէ, հրաժարելու Հայտնի աշխարհաքաղաքական ու ռազմավարական մեծագոյն գէնքէն՝ Հայ Դատէն, որուն դիմաց՝ Հայաստանը չէ որ պիտի նպաստաւորուի ու զօրանայ... այլ՝ երկրի քաղաքական օլիգարխները կը յուսան ամրապնդել իրենց հակաժողովրդական իշխանութեան երբեք չ'իմքերը, իսկ տնտեսական ու մասնաւորաբար ֆինանսական օլիգարխները կը յուսան պարարտացնել իրենց պաշար-

ները միայն...:

Յիւրիխեան փորթոքոլներու նախատորագրումին թայմինկը եւս հարիւր տոկոսով շահաւէտ է միայն թուրքիոյ: Հակառակ իր ծաւալած դիւանագիտական անպարարութեան միամիտները միայն շլացնող արշաւի թուացող չաջողութեանց՝ հոս ու հոն, թուրքիա ներկայիս կը տառապի՝ ինքնութեան սուր տագնապէ մը եւ կը դիմագրաւէ՝ այլաբանութիւն թնճուկներու փազըլ մը, որոնց հանգուցալուծումէն փախուստ տալով՝ դուրս կը նետուի իր սահմաններէն, եւ կը յաւակնի՝ շրջանային ու միջազգային հարթակներու վրայ, աշխոյժ դերակատարութեան մը, առաւելագոյնս օգտագործելով՝ տարածաշրջանին մէջ, արաբական ու հայաստանեան թոյլ օղակներուն ձեռնպահութեամբն ու համակերպողականութեամբն ըստեղծուած «պարապ»ը: Քանի որ՝ արաբական ու հայաստանեան մակաբոյժ իշխանութիւնները տարածաշրջանին մէջ, ի բաց առեալ

Իրանէ եւ Սուրիայէ, չ'փորձեցին լեցնել այն «պարապ»ը, որ սկսաւ գոյանալ հոն՝ ամերիկեւստանական իմփերիալիզմին արձանագրած ձախողութիւններուն հետեւանքով...:

Երիտթուրքերու հարագատ շառաւիղը հանդիսացող AKP-ի իշխանակազմը այսօր՝ կը փորձէ լեցնել այդ «պարապ»ը, շղթայագերծելով Նոր-Օսմանականութեան արշաւ մը՝ «բացուելու» թաքթիքայի լաչակ հագին, առանց հրաժարելու՝ Փանթուրքիզմի վարդապետութենէն, անոր ծաւալապաշտական նկրտուածներէն: Առանց՝ «ձենթըլմէն» դառնալու... ինչպէս կը կարծէր Ակնունին... դար մը առաջ, բայց չէր կրնար համոզել Անդրա-նիկը:

Արդարեւ, Մեծ Եղեռնը՝ ցեղասպանութիւնը եւ բռնահանումը, գործադրեցին նոյն այդ «ձենթըլմէն»ները...: Եւ յամի Տեառն 2009-ին, AKP-ի ղեկավարած թուրքիոյ մէջ, հրատարակուած դպրոցական դասագիրքերուն ու կրթական խտասալիկներուն (CD) մէջ, կը գտնուի քարտէզ մը, որ թուրքիոյ սահմաններէն ներս ցոյց կու տայ՝ Հայաստանը ամբողջ, Նախիջեւանով եւ Արցախով, Կիպրոսը ամբողջութեամբ, Հիւսիսային եւ Կեդրոնական Իրաքը, Պոլկարիոյ Հարաւը եւ յունական գրե-

Շարք էջ 18

Advertisement for Bedros S. Maronian insurance services. Includes logos for Blue Cross of California, Blue Shield of California, and A.B.A. Insurance Services. Text: SERVING SINCE 1975, BEDROS S. MARONIAN, (818) 500-9585, BMaronian@AOL.com, FAX 500-9308, ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway, Glendale, CA 91205. ԵՐԲԵՔ ՈՒՅ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ԱՂԱՃԱՆԵԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ ՇՔԵՂ ՍՐԱՅԻ ԲԱՑՄԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ



ՎԱՀՔ ՍՐԿ. ԶԱՐԽԸԹԵԱՆ

Ինչպես ծանօթ է հանրությանը, վերջին 10-15 տարիներուն Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին հիմնովին վերանաւորուելու շրջանին, կողքի Աղաճանեան սարհին մէջ տեղի կ'ունենար Ս. Պատարագ: Ս. Գրիգոր Լուսաւորիչ գեղակերտ Մայր Տաճարի վերակառուցումէն եւ պաշտօնական օժոնմէն ետք, եկեղեցու հոգեւոր եւ աշխարհիկ, հին եւ նոր հոգեւոր հովիւներուն գլխաւորութեամբ, շինարարութեան հոգեմաշ արտօնութիւնները ձեռք ձգելէ ետք, հիմնովին եւ շատ գեղեցիկ սրահը, բոլոր ծխականներուն եւ Փասատինայի հայութեան մեծ խինդ ու ցնծութիւն պատճառելով:

Այսօր, հպարտութեամբ կրնանք ըսել, թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին իր հայտն եւ գեղակերտ աղօթատեղիով, Յովսէփեան ամսօրեայ վարժարանով եւ հիմա ալ Աղաճանեան գեղակերտ սրահով, Եկաւեան սրահով, Շաբաթօրեայ եւ Կիրակնօրեայ դպրոցներով, հոյակապ երգչախումբով, գլխաւորութեամբ՝ Թեմիս Բարեւոյն Առաջնորդ՝ Գերշ. Ս. Յովնան Արք. Տէրտէրեանի եւ համակրելի ու երիտասարդ հովիւ՝ Ս. Սարգիս Ա. Քննչ. Փեթոյեան եւ վարչութեան ժրջան ատենապետ՝ Տիար Վահէ Իսկէնտէրեան լուռ, առանց աղմուկի, սիրոյ եւ համերաշխութեան գեղեցկագոյն մթնոլորտի մէջ կը տանին այս սքանչելի Մուխին գործերը, արժանանալով Աստուծոյ եւ մեր ժողովուրդի օրհնութեան:

Շաբաթ, Դեկտեմբեր 12, 2009, երեկոյեան ժամը 7ին, մօտ 350 հանդիսականներու ներկայութեամբ մեծ շուքով բացումը կատարուեցաւ այս սրահին: Այդ գիշեր ներկայ էին Թեմիս բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Ս. Յովնան Արք. Տէրտէրեան, Գերշ. Ս. Վահէ Արք.

Յովսէփեան, Հայր Գեղամ Մ. Վրդ. Զաքարեան, Տ. Զաւէն Ա. Քննչ. Արզումանեան, Տ. Յովսէփ Ա. Քննչ. Յակոբեան եւ ծուխի հովիւ՝ Ս. Սարգիս Ա. Քննչ. Փեթոյեան:

Տօնակատարութեան յայտագիրը ձեռնհասօրէն վարեց Տօքթ. Գուրգէն Մաթոսեան:

Սեղանի օրհնութենէն ետք, բեմ հրաւիրուեցաւ այս հոյակապ ձեռնարկը կազմակերպող Յանձնախումբի ատենապետուհի, ազգային բեղուն գործիչ՝ Տիկ. Ֆլորա Տունայեան, որ շատ ջերմ եւ յուզիչ խօսքով շնորհակալութիւն յայտնեց բոլորին իրենց ներկայութեան համար: Գնահատանքի խօսք ուղղեց բոլոր անոնց, որոնց հաւաքական կամքին ու երազին իրականացումն է այս սրահի վերագործման գործը: Տիկ. Տունայեան շատ գեղեցիկ ձեւով նկարագրեց այս գործը, ըսելով. «When you dream alone, dream becomes only dream. When you dream all together, dream becomes reality»:

Յովսէփեան վարժարանի չորրորդ դասարանի ամներէն՝ Դաւիթ Քէշիշեան արտասանեց Պարոյր Սեւակի «Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծութիւնը, արժանանալով ներկաներուն ջերմ ծափահարութեան:

Ելոյթ ունեցաւ Լա Քրեսանթալի պետական երկրորդական վարժարանի ժրջան ատենապետ՝ Տիար Վահէ Իսկէնտէրեան: Պարոն ատենապետին դէմքին վրայ նշմարելի էր անսահման ուրախութիւն մը, յաղթանակի եւ ցնծութեան ժպիտը: Ան ամէն բանէ առաջ շնորհակալութիւն յայտնեց Թեմիս բարեջան Առաջնորդ, Գերշ. Ս. Յովնան Արք. Տէրտէրեանին, անոր մշտատեւ հետաքրքրութեան, նիւթական եւ բարոյական անսահման օժանդակութեան համար: Նմանապէս, Պրն. Իսկէնտէրեանի շնորհատեմքերը:

Շաբ.ք էջ 19

ՆՇՈՒԵՑԱԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԵԱՍԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԸ

Ամերիկահայ անուանի արձակագիր եւ հասարակական գործիչ Անդրանիկ Անդրէասեանի ծննդեան 100-ամեակին նուիրուած հրատարակային հանդէս մը տեղի ունեցաւ Ուրբաթ, 8 Յունուար 2010, երեկոյեան ժամը 7:30ին, Փասատինայի ԹՄՄ Պէշկէթիւրեան կեդրոնին մէջ:

ՌԱԿ-ի Արեւմտեան ԱՄՆ-ի Շրջանային Վարչութեան կողմէ կազմակերպուած սոյն ձեռնարկին ներկայ էին գրողներ, տարբեր կազմակերպութեանց եւ մամուլի ներկայացուցիչներ, հանգուցեալի դուստրերը, իր գաղափարի ընկերներն ու համակիրները:

Բեմին վրայ գետեղուած էր Անդրանիկ Անդրէասեանի նկարն ու կիսանդրին:

Կազմակերպիչ յանձնախումբին անունով հանդիսավար Հրաչ Մէփէթեան ողջունեց ներկաները միաժամանակ ոգեկոչեց յիշատակը վաստակաշատ մտաւորական Ա. Անդրէասեանի:

Յաջորդական ելոյթներ ունեցան Արամ Սեփեթեան, Դոկտ. Մինաս Գոճայեան եւ Վահէ Մէմէրեան: Բոլորն ալ բարձր գնահատականներով արտայայտուեցան Անդրանիկ Անդրէասեանի անցեալի բեղուն գործունէութեան մասին, թէ որպէս արձակագիր, մօտ երկու տասնեակ գիրքերու հեղինակ, թէ որպէս քաղաքական մտածող եւ թէ հրատարակագիր եւ տասնեակ տարիներու խմբագիր:

Ա. Անդրէասեանի 1937-ը «Նոր Օր»-ի մէջ լոյս տեսած խմբագրականը կարդաց Տիգրան Ալթունեան: Գործադրուեցաւ զեղարուեստական կոկիկ յայտագիր մը, մասնակցութեամբ երգիչ Դաւիթ Սամուէլեանի եւ Հ. Լեփեճեան (նուագ):

Ելոյթ ունեցաւ նաեւ ՌԱԿ-ի Շրջանային Վարչութեան ատենապետ Յակոբ Նազարեան: Ինք եւս դրուատեց Անդրանիկ Անդրէասեան արդիւնաշատ եւ ազգանուէր ծառայութիւնները եւ ապա յիշատակի պատուոյ տախտակ մը յանձնեց Ա. Անդրէասեանի դուստրերուն, որոնք իրենց հերթին շնորհակալութիւն յայտնեցին սոյն միջոցառումի կազմակերպիչներուն:

Հանդիսութեան աւարտին փակման խօսքով հանդէս եկաւ Արթ. Դոկտ. Տ. Զաւէն Ա. Քննչ. Արզումանեան եւ ոգեկոչեց արժանիքները Անդրանիկ Անդրէասեանի որպէս «լուռ աշխատող եւ տեսիլք ունեցող իսկական հայ մը»:

ԼԱՐՔ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԶԱՆԴԻՊՈՒՄ ԴԱՇՆԱԿԱՅԱՐ ԱՐԹՈՒՐ ԱՎԱՆԵՍՈՎԻ ՅԵՏ

Հայ երաժշտութեան ջատագով Լարք ընկերակցութիւնը թեւակոխում է 2010 թուականը ծաւալուն համերգաշարով: Երեւանից յատուկ հրաւերով Լոս-Անճելըս է ժամանում հայ երիտասարդ կոմպոզիտոր եւ դաշնակահար Արթուր Աւանէսովը, որ ելոյթ է ունենալու դասախօսութիւններով եւ համերգներով: 1980-ին ծնուած, արդէն 25 տարեկանում արուեստագիտութեան թեկնածուի գիտական աստիճան (Doctor of Arts) ստացած Արթուրը կոմպոզիցիայի եւ արդի երաժշտութեան դասախօս է Երեւանի կոնսերվատորիայում, ինչպէս նաեւ ՀՀ Գիտութիւնների ազգային ակադեմիայի Արուեստի ինստիտուտի գիտաշխատող է: Ստորեւ ներկայացնում ենք Արթուր Ավանէսովի ելոյթները.



1. Կիրակի, Յունուար 24, 2010թ., ժ. 3-ին, «Դիլիշան» համերգաշարի Առնօ Պապաջանեանի ստեղծագործութիւններին նուիրուած համերգում, Zipper Concert Hall at the Colburn School, 200 S. Grand Avenue, Los Angeles, CA.

2. Նոյն օրը, երեկոյան ժ. 6-ին, Փասադենայի Santorini's «Rococo» սրահում ընթրիք-հանդիպում Արթուր Ավանէսովի հետ. 70 West Union Street, Pasadena.

3. Կիրակի, Յունուար 31, 2010թ., ժ. 6-ին, հանդիպում Արթուր Ավանէսովի հետ Լարք երաժշտանոցում, մասնակցութեամբ Լարքի երգչախումբի եւ մենակատարների: Lark Conservatory, 543 Arden Av., Glendale, CA.

4. Կիրակի, Փետրուար 7, 2010թ., ժ. 6-ին, համերգ-դասախօսութիւն «Ժամանակակից հայ երաժշտութիւնը եւ արդի հայ կոմպոզիտորները» եւ շնորհանդէս «Դրազարկ» հրատարակչութեան նոր լոյս ընծայած «Ժամանակակից հայ կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործութիւնները» ժողովածուի՝ (կազմեց Արթուր Աւանէսովը): Գիրքը պիտի ներկայացնի եւ կատարումներով ելոյթ ունենայ հեղինակը: Հիւրասիրութիւն: Լարք երաժշտանոց:

5. Չորեքշաբթի, Փետրուար 10, 2010թ., երեկոյեան ժ. 8-ին, Արթուր Ավանէսովի »Բաց դասը« Լարքի ուսանողների հետ: Հիւրասիրութիւն:

Հրաւիրուած են հայ մշակութիւնը հետաքրքրող մասնագէտները, բանասէրները, եւ երաժշտասէր հասարակութիւնը: Մանրամասնութիւնների համար հեռաձայնել Լարք երաժշտանոց՝ (818) 500-9997:

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու և մանուկներու Քայքայողաբքի բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային և մկանային ցաւեր:
Ինքնաշարժի վթարի ետևանքով պատճառած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐ ՀԱՅՐԵՆԻ

ՊԱՂՈՒԹԱՅԻՆ

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՈՒԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

Դեկտեմբեր ամիսը իր յատուկ իմաստով, զարդարանքներով, դասարաններին արձագանգող արտասանութիւններով, երգերով եւ երաժշտութեամբ, ամսուան յատուկ աղօթքներով եւ շարականներու երգեցողութեամբ Հայ Քոյրերու վարժարանի միջոցով կը վերածեն տօնական եւ անոր կուտան ջերմութիւն եւ ուրախութիւն: Արդարեւ մանկապարտէզէն մինչեւ ութներորդ դասարանի աշակերտները իրենց դասերու կողքին, նաեւ լծուեցան Մանկեան հանդիսութեան պատրաստութեան: Դասերու եւ դպրոցական միօրինակութեան առընթեր, անոնք ունեցան տօնական օրերու նախօրեակին նախապատրաստական հաճելի աշխատանքներ ըլլան անոնք կաղանդի յատուկ դասարանային աշխատանքներ կամ խմբային՝ երգչախումբի փորձեր, թատրոնի պատրաստութիւն եւ կաղանդ պապայի հետ անհատական նկարահանումներ... որոնք բոլորն ալ Հայ Քոյրերու

ըստ աւանդութեան այս տարի եւս ունեցաւ Ս. Մանկեան գոյգ հանդէսներ՝ Մանկապարտէզի եւ Նախակրթարանի բաժիններով, երկու յատուկ օրերու ընթացքին, հոգեկան մեծ հաճոյք եւ հրճուանք պատճառելով ծնողներուն եւ Հայ Քոյրերու վարժարանի մեծ ընտանիքին: Դ. Մանկապարտէզի Մանկեան Ներկայացում

Շաբաթ, 19 Դեկտեմբեր, 2009ի առաւօտեան, տեղի ունեցաւ Մանկապարտէզի հանդէսը, Հայ Քոյրերու վարժարանի «Դանիէլեան» սրահէն ներս, ներկայութեամբ՝ ծնողներու մեծ հայրերու, մեծ մայրերու եւ հիւրերու:

Հանդիսութեան բացումը կատարեց, Մանկապարտէզի Տնօրէնուհի Տիկ. Սոնա Գազանճեան, ան բարի գալուստի խօսքէն ետք, զեղեցիկ պատմութեամբ մը բացատրեց կաղանդին եւ Ս. Մանկեան իմաստը, որմէ ետք մանկապարտէզի աշակերտները ներկայացուցին Յիսուսի ծնունդը երգախառն թատրերգութեամբ, սկսելով Հրեշտակի Աւետումէն, Գալիլիոյ մէջ տեղի



ժարանիս աւարտական դասարանի աշակերտներէն՝ երաժշտական եւ թատերական ձիրքերով օժտուած, Ասպետ Բաբխանյան էր, վարձքը կատար «Կաղանդ Պապա»: Կաղանդ պապային ստեղծած խանդավառութեան հետ նաեւ կը մրցէր հանդիսութեան աւարտին վարժարանի ծնողաօժանդակ մարմնի պատրաստած եւ վաճառած «սուճուխ սանտուիչ»ները որ ներկաները մեծ ուրախութեամբ եւ ախորժակով ճաշակեցին:

Նախակրթարանի Երգահանդէս

Դեկտեմբեր 22, 2009ի երեկոյեան տեղի ունեցաւ Հ. Ք. վարժարանի նախակրթարանի երգահանդէսը նուիրուած Սուրբ Մանկեան եւ Ամանորի տօներուն: Հանդիսութիւնը բաժնուած էր երեք մասերու, նախ փոքր դասարանի աշակերտները, ապա երկրորդ բաժնով ներկայացան երրորդ եւ չորրորդ կարգերու աշակերտութիւնը եւ վերջապէս հինգերորդ եւ վեցերորդ դասարանները:

Առաջին հերթին խորհրդաւոր մթնոլթեան մէջ վարժարանիս Դանիէլեան սրահը մուտք գործեցին փոքր դասարաններու աշակերտները վառուած մոմերով, նախապատրաստելով հանդիսատեսը եւ ստեղծելով օրուան պատշաճ խորհրդաւոր մթնոլորտ մը, ապա մթնոլթեան մէջ հնչեց անոնց մեղմիկ բայց զուարթ աւետումը Քրիստոսի Յայտնութեան, հանդիսութիւնը շարունակուեցաւ երկրորդ խումբի երգեցողութեամբ, որոնք երեք լեզուներով Ամանորեան եւ Ս. Մանկեան երգերը եւ շարականները մեկնաբանեցին, մերթ ընդ մերթ ընդմիջուելով օրուան պատշաճ

նուագներով՝ ներկայացուած աշակերտներու կողմէ:

Երրորդ մասով բեմ բարձրացան աւելի բարձր դասարանի աշակերտներ երգելով «Խորհուրդ Մեծ եւ Սքանչելի» շարականը, նախորդներու անմեղունակ եւ եռանդուն մեկնաբանութեան տեղի տալով աւելի գիտակից եւ ապրումով երգեցողութեան՝ աշխոյժ կաղանդի երգերուն եւ ծննդեան շարականներուն, որոնք յաճախ երեք լեզուներով ներկայացուեցան, երբեմն համեմուտեցան մեներգներով, ընկերակցութեամբ զանազան երաժշտական ձայնային գործիքներու:

Ամանորի սեմին զեղեցիկ ծաղկեփունջ մըն էր նուիրուած ծնողներուն, որոնց հոգին լեցուեցաւ հպարտութեամբ եւ հրճուանքով ի տես իրենց զաւակներուն, որոնք մօտաւորապէս մէկուկէս ժամ մեծ հաճոյքով եւ պատասխանատուութեամբ ներկայացուցին զեղեցիկ երգերու յոյլ մը՝ համադրուած եւ պատրաստուած վարժարանիս երաժշտութեան ուսուցչուհի Տիկ. Վարդուհի Պաղտասարեանի կողմէ: Տնօրէնութեան, ուսուցչական կազմի, ծնողներու եւ աշակերտութեան համագործակցութեամբ իրականացած զեղարուեստական սքանչելի երեկոյ մը, որ կ'արդարացնէր Հայ Քոյրերու վարժարանի Քրիստոնէական դաստիարակութեան սկզբունքը, աշակերտները պահելով հայ խօսքի, երգի եւ շարականի երգեցողութեան միջոցով մէջ՝ իր գոհունակութիւն դաստիարակին եւ ծնողքին:

Նպատակը արդարացած է, շնորհակալութիւն բոլոր նուիրեալներուն:



վարժարանը վերածեցին մեղուափեթակի անոր տալով տօնական օրերու փայլք ու հրապոյր:

Կարելի է ամփոփել այս ամսուան ձեռնարկները հետեւեալ ձևով.

ա. Մանկեան Փառատօն
Դեկտեմբեր 5, 2009ի յետմիջօրէին Հ.Ք. վարժարանը մասնակցեցաւ Մոնթրոյք քաղաքի աւանդական Ս. Մանկեան փառատօնին: Մեծ խումբ մը աշակերտներ, կազմակերպութեամբ աշակերտական խորհուրդին, ներկայացուցին վարժարանը եւ աւետեցին Քրիստոսի գալուստը, ներկայացնելով Մանուկ Յիսուսի ծնունդը կենդանի պատկերով մը. խումբին կ'ընկերակցէին վարժարանիս Առաքինազարդ քոյրերը, ուսուցչական կազմէն ներկայացուցիչներ եւ ծնողներ:

բ. Ուտեստեղէնի Հաւաք
Տօնական օրերուն կարիքաւորին օգնելու աշխատանքին աշակերտները մասնակից դարձնելու եւ այս զեղեցիկ ունակութիւնը անոնց մօտ արմատացնելու նպատակով՝ այս տարի դարձեալ Հ. Ք. վարժարանը կազմակերպեց չփճացող ուտեստեղէնի հաւաք գործնականացնելով Քրիստոնէական կրօնքի բարոյական դաստիարակութիւնը, այս աշխատանքին հետապնդումն ու դասաւորումը շաշտողութեամբ կատարեց աշակերտական խորհուրդը:

գ. Սուրբ Մանկեան Հանդէս
Հայ Քոյրերու վարժարանը

ունեցաւ մարդահամարի գործընթացէն, Յովսէփի եւ Մարիամի դժուարին վիճակէն... մինչեւ Մանուղը, Մոգերու, հովիւներու գալուստը... եւ Աւետիսը, որ կատարուեցաւ մանկապարտէզի աշակերտներու կողմէ երգեցողութեամբ նոր Տարուան եւ Ս. Մանկեան յատուկ երգերով եւ շարականներով: Անոնք իրենց մանկական անմեղ արտայայտութեամբ պատմելէ ետք Ս. Մանկեան պատմութիւնը՝ երգեցին ու աւետեցին մարդկութեան փրկչին գալուստը, սիրոյ եւ խաղաղութեան պատգամը տալով բոլորին:

Երգերը կը ղեկավարէր ու դաշնակի վրայ աշակերտներուն կ'ընկերակցէր վարժարանիս երաժշտութեան ուսուցչուհի՝ Տիկ. Վարդուհի Պաղտասարեան:

Հանդիսութեան վերջաւորութեան սրտի խօսքով հանդէս եկաւ Հ. Ք. վարժարանի տնօրէնուհի՝ առաքինազարդ Քոյր Լուսիա, որ իր գոհունակութիւնը յայտնեց ի տես Մանկեան շարականներու փոքրերու կողմէ այնքան անմեղ եւ հարազատ մեկնաբանութեան, ապա շնորհակալութիւն յայտնեց պատրաստող նուիրեալներուն եւ տօնական բարեմաղթութիւններով փակեց հանդիսութիւնը:

Եկաւ անակնկալ պահ, երբ կաղանդ պապան սրահ մուտք գործեց, ապա շնորհակալութիւն ստեղծեց, խանդավառութիւն ստեղծեց, ուրախացուց փոքրերն ու մեծերը իր հաճելի խօսքերով եւ նուէրներով: Յիշենք որ կաղանդ պապան, վարժարանիս

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax :-----

Massis Weekly

Volume 29, No. 50

Saturday, JANUARY 16, 2010

Armenian Court Finds Protocols Document Constitutional

YEREVAN -- The Constitutional Court upheld on Tuesday the legality of Armenia's controversial normalization agreements with Turkey amid continuing protests staged by nationalist groups opposed to the deal.

The widely anticipated verdict paved the way for the agreements' ratification by the Armenian parliament. The National Assembly is not expected, however, to start debating the two "protocols" before their endorsement by Turkey's parliament.

The ruling read out by the court chairman, Gagik Harutiunian, concluded that the provisions of the two Turkish-Armenian protocols signed in October "conform to the constitution of the Republic of Armenia."

"The decision is final and cannot be challenged," Harutiunian said.

The Constitutional Court handed

down the ruling several hours after formally starting to examine the protocols' conformity with the Armenian constitution. The session was open to the media for only four minutes.

The court decided that the examination will follow a "written procedure" that does not involve public hearings and verbal questioning of government officials and experts. Harutiunian announced that the panel of nine judges will only consider written statements submitted by the Armenian Foreign Ministry and other interested parties.

"This is an issue which has an exceptional significance," he said. "All those written documents that have been submitted to the Constitutional Court are available in the deliberations room and the members of the court can take them into account."

Freedom House: No Progress Reported in Armenia the Last 8 Years

WASHINGTON, DC -- Armenia remains a "partly free" country with scant government respect for political and civil rights, a U.S. human rights watchdog said in its latest survey of freedom around the world.

As always, the Washington-based Freedom House rated countries on a seven-point scale for political rights and civil liberties, with 1 representing the most free and 7 the least free. As was the case in the previous survey released a year ago, Armenia received 6 and 4 points in the "political rights" and "civil liberties" categories respectively.

According to Christopher Walker, director of studies at Freedom House, the ratings based on the events the past year keep it dangerously close to being judged "not free." "It's actually right on the border between 'partly free' and 'not free,'" he told RFE/RL by phone on Tuesday.

"On the sorts of things that are fundamental for democratic accountability, we really haven't seen any meaningful steps forward," Walker said. One of the key reasons for that is a continuing "very deep relationship between politics and economics" in the country, he said.

Walker also pointed to the lingering fallout from the February 2008 presidential election and the deadly unrest in Yerevan that followed it. "I think all of these things have contrib-



uted to a bigger picture in Armenia that really is one of great concern for political rights and civil liberties," he said.

Walker welcomed in that regard a general amnesty which was declared by the Armenian authorities in June and led to the release of dozens of opposition members arrested in the wake of the disputed 2008 election. "But I think if you look at some of the other issues connected to the events of 2008 ... there are some real concerns about how the Armenian authorities pursued this," he cautioned.

"And this included the dissolution of the independent expert group that was looking into the events of that year and other issues connected to how the aftermath of the events was handled, which I think continues to raise some serious concerns about the degree to which the judiciary and other rules-based bodies in Armenia can function outside of executive control and with transparency and accountability," he said.

Another Fraudulent Elections in Armenia Violence Against Opposition Activists

YEREVAN -- A pro-government candidate won a weekend by-election to Armenia's parliament amid fraud allegations made by representatives of his arrested opposition challenger and independent monitors.

The election was marked by an extremely low turnout indicating renewed public apathy towards politics and electoral processes in particular. According to the Central Election Commission (CEC), only 24 percent of some 55,800 eligible voters in a central Yerevan constituency bothered to cast their ballots on Sunday.

The lack of popular interest in the tightly contested vote appears to have hurt Nikol Pashinian, the main opposition candidate standing trial on charges stemming from the March 2008 unrest in the capital. Preliminary official votes showed him winning 37.5 percent of the vote and trailing his pro-government rival, Ara Simonian, who got 57 percent.

The main opposition Armenian National Congress (HAK), of which Pashinian is a senior member, rejected the election results as fraudulent and said it will challenge them in court. It claimed at the same time that the official vote tally testifies to the HAK's "strength and growing authority."

Pashinian issued a separate statement from his prison cell, saying that he understands the "disappointment" of HAK activists and other supporters with the course and outcome of the ballot which he also condemned as fraudulent. He urged them not to fall



Petros Makeyan and one of his companions after the assault

into "despair" and to continue to fight for leadership change in Armenia.

Both Pashinian and the HAK alleged a long list of irregularities, including vote buying, ballot stuffing and intimidation of opposition proxies and election observers by government loyalists. The bloc's representatives demanded that vote results be annulled in at least two precincts and said they will present evidence other violations to the district election commission this week.

One of the Pashinian campaign managers, Petros Makeyan, and his two companions were brutally beaten outside a polling station in downtown Yerevan, with Makeyan suffering a broken nose. All three were reportedly hospitalized with injuries of different severity. Police, however, reported a different account of the events.

In an interview with RFE/RL, the oppositionists contended that they had been beaten up by people with "shaven heads". They also claimed that the incident took place in the presence of a police worker.

Continued on page 4

Recep Tayyip Erdogan: "Occupation of Azerbaijani Territories Must End" Russia Tells Turkey To Drop Karabakh Linkage

MOSCOW -- "We have taken important steps for the normalization of the relations with Armenia.

On the other hand, it is very important to put an end to the occupation of Azerbaijani territories and find long-lasting solution to Azerbaijan-Armenia conflict," Turkish Prime Minister Recep Tayyip Erdogan said while meeting with the students and teachers of Moscow State Institute of International Relations, APA reports. He said OSCE Minsk Group should do much for the solution to the conflict and underlined:

"Minsk Group should first of all fulfill its function, as there are 20 years behind and within these 20 years Karabakh conflict has not been solved." "Minsk Group must do its best for the solution to this conflict. I think first of all Russia should increase its activity in this process. We all know that Armenia has occupied Karabakh. The UN Security Council has resolutions about



Putin and Erdogan during their Moscow meeting

it, the UN admits the fact of occupation," he said.

Touching on the processes in the South Caucasus, Recep Teyyip Erdogan underlined the importance of achieving long-lasting stability in the region

"Our initiative on establishing Caucasus Cooperation and Stability Platform is still effective. With joint cooperation of Russia, Turkey, Azerbaijan, Armenia and Georgia, this

Continued on page 4

Vardan Khachatryan: Time of Exclusive Responsibility Comes for Armenia

YEREVAN --The Armenian-Turkish protocols cast a doubt on the issue of deprivation of the Armenian people of its homeland. RA National Assembly deputy Vardan Khachatryan expressed such an opinion at a January 13 press conference. According to him, for almost a century the Armenian Diaspora lived with a wish of returning to its native land which saved the Diaspora from assimilation. And these protocols, according to him, make this danger possible.

According to V. Khachatryan, proceeding from Armenian people's interests a detailed discussion should take place at the parliament. And he will call for making such reservations that will permit to continue the struggle in the issue of restoring the justice. According to him, confirmation of the protocols without those reservations is inadmissible.

Speaking about the foreign challenges the deputy said that a time of exclusive responsibility comes for Armenia, and the utmost should be done to avoid the main dangers.

V. Khachatryan also mentioned



that Turkish Prime Minister Recep Tadjip Erdogan with his visit to Russia will make an attempt to influence the settlement of the Nagorno Karabakh conflict through Moscow. In his words, Russia also carries out a delicate diplomacy with Azerbaijan. Moscow's further policy under the circumstances, especially to Armenia, is unpredictable.

Armenian, Russian Militaries Review 'Strategic' Ties

MOSCOW -- Russian Defense Minister Anatoly Serdyukov underlined the "strategic" character of his country's relationship with Armenia during talks with his visiting Armenian counterpart, Seyran Ohanian, on Wednesday.

Ohanian was in Moscow on a working visit aimed at reviewing Armenia's close military ties with Russia and their future.

"The ministers discussed the prospects of military and military-technological cooperation between Russia and Armenia, as well as the issue of Armenian servicemen studying at the Russian Defense Ministry's academies," the Interfax news agency quoted Russian Defense Ministry spokeswoman Irina Kovalchuk saying.

The Armenian Defense Ministry issued a virtually identical statement

on the talks. "Anatoly Serdyukov stressed that Russian-Armenian cooperation in the military sphere has a strategic character," it said. No further details were reported.

Moscow and Yerevan already highlighted that cooperation last month when they agreed to work together in exporting weapons and other military equipment to third countries. Ohanian and a visiting senior Russian official signed relevant deal in Yerevan during a meeting of a Russian-Armenian inter-governmental commission on military-technical cooperation. No details of the agreement were made public, with Ohanian saying only that it will further deepen bilateral defense links.

Ohanian's talks in Moscow coincided with the start of a two-day visit to Armenia by Russian Foreign Minister Sergey Lavrov. The latter is due to hold with President Serzh Sarkisian

New Force, New Opposition

By Hakob Badalyan

The regular election rigged in Armenia with apparent cynicism and the calm attitude of the Armenian National Congress towards it when they stated after the election that they had never believed Nikol Pashinyan would have won and the election was illegal, shows the need to think about a new opposition or force in Armenia. Discussions on this topic activated, mainly on the level of experts' opinions.

All this has quite objective grounds. The current opposition is apparent to have lost its trust within a tangible part of the society due to its strategic mistakes and errors. In addition, the society did not lose its trust towards the opposition because of the reason that the latter is not making a revolution or is not holding rallies. The real reason for the loss is that during time the words of the opposition assimilated to those of the government and the society stopped noticing the difference between the opposition and the government.

While, in order to succeed in struggle with the Armenian government, the latter does not need to be radically criticized but the society is needed to be shown concrete differences between the opposition and the government. When the current opposition was able to fulfill this task, it was the dictator of the situation. As soon as the opposition started looking for success within geopolitical traps, the difference between the opposition and the government disappeared on this plane and the opposition had only to wait for the government to collapse or to become tolerant.

Conversations on the need of a new force are natural to be augmented against this background which regularly activate in Armenia when presence of a serious amount of distrust between the society and the opposition becomes evident. Do the conversations on the need of a new force contain practicality? From this point,

and Foreign Minister Eduard Nalbandian which the Russian Foreign Ministry said will focus on the Nagorno-Karabakh conflict.

A ministry spokesman positively assessed on Wednesday the current state of Russian-Armenian relations.

we have to state that during the history of the newly-independent Armenia every time such conversations appeared, they have never contained practicality.

The reason of course is not that the creation of a new force was equally dangerous for the opposition and the government of a certain period of the Armenian history and they tried to eliminate it just from the cradle which will surely happen now if such a force is noticed. The point is that the conversations on the creation of a new force in Armenia have always been based on the propaganda axis of the distraction of the current forces. In other words, the conversations on the creation of a new force are based on expectations: the current forces are expected to collapse for the need to create a new force to be voiced again.

In other words, the observations and discussions on a new force are offered to the public according to the logic of the old forces: x and y collapsed, the society remained without a political force, so it is right time to create a new one. This is already an artificial ground for the creation of a new force. The point is that politics is a natural process. If someone has something to say and to do, it says and does it independently from what the "old" forces of the same process say or do. In addition, it does not base its words and actions on the failures of the "old" forces but exceptionally on its own values. If the society is bored with the "old" forces and does not believe them any longer, it will follow the new force and will believe it. Otherwise, they will have to "reign over ruins" which is the dream of almost all the political forces of Armenia as they can determine their mistakes by the ruins which left the previous governor. We are witnessing now what comes out of all this when say successes are determined by new thinking, and failures are reasoned by the mistakes of previous years.

Lragir.am

"Despite global crisis manifestations, Russian-Armenian interaction in the trade-economic, military-political, humanitarian and inter-regional areas is on a largely positive development trend," Andrey Nesterenko said, according to Itar-Tass.

GENERAL CONTRACTOR BID REQUEST

Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E09-25, Module 11.8 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, February 10, 2010. The Work includes, but is not limited to, the following: Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for twenty-seven (27) multi-family units, consisting of three four unit buildings, one triplex building and six duplex buildings.

Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. A mandatory Pre-bid conference has been scheduled for January 21, 2010, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Offices, 2800 N. Clybourn Ave., Burbank, California.

GENERAL CONTRACTOR BID REQUEST

Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E09-29, Module 11.9 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, February 11, 2010. The Work includes, but is not limited to, the following: Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for thirty-two single family homes.

Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. A mandatory Pre-bid conference has been scheduled for January 21, 2010, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Offices, 2800 N. Clybourn Ave., Burbank, California.

Library in the Lurch: Martuni's 75,000 Books Wasting Away

An Appeal for Assistance

Dear Friends, Can anyone help by:

* assisting in the 2010 renovation of the Martuni Library building,
* donating books (only after the building is secured),

To reach the Martuni Library directly about assisting, please contact Martuni Library Director Anahit Aleksanyan on her cell at: 077-936368

The Library does not have Internet access, nor an email address.

By Grisha Balasanyan
HETQ

"We've had it up to here with our situation, of constantly filing petitions and requests, of writing letters to this and that official, telling them, someone, to help us in saving this library of ours."

These were the words of Lida Aleksanyan, Director of the Martuni Library in Gegharkunik Marz when this reporter went to cover the story of the library on the brink of ruin. The library building itself is in desperate need of repair.

Director Aleksanyan told me that the building is beyond repair however. "The site is dank and damp. Repairs won't cut it. A new building is what's needed," she argued. Library employees say that the books on the shelves have doubled in weight due to the dampness and the texts are fading. The library has a collection of 75,000 books and 3,000 members.

The old and frayed books can be checked out theoretically but they aren't; the demand is too great. But a reader is hard pressed to get through a book in normal fashion because so many pages are missing or illegible. The adventurous reader must borrow several copies of the same text to make up for the missing pages found in each.

No funds for renovations or for new books

"The last time we received a new batch of books was back in June; from the Book Assistance Fund. Otherwise, we haven't received any new literature for the past few years. We just don't have the funds to buy anything," Director Aleksanyan stated.

The library is a branch of the Martuni Municipality and it's the mayor who is supposed to see to it that new books are acquired. Khachik Khlghatyan, the mayor's Chief of Staff, informed "Hetq" that the library is slated to be renovated in 2010.

"If the financial crisis doesn't come a' knocking at the door of the federal government and the Martuni Mayor's Office next year, we'll have state funds to renovate the building," Mr. Khlghatyan stated. The town official said that they would rather not

"inconvenience" the federal government in a time of crisis but that the books are rotting away and they have no alternative.

Gluing the pages of tattered books

Roza Zhamkharyan has been working at the library for many long years. Every day she's busy gluing pages together, making sure that at least some of the books remain in circulation. The library serves the local community and surrounding area. Residents from the district's seventeen villages even make the trip to the library to pick up a "good read".

Back in the day, there was a branch library and a children's library in Martuni, but they're closed now. All the books have been gathered at the central library. Many of the books sit in piles on the floor, tied up with twine. As a consequence, they aren't available to the public.

"Karineh Hayrapetyan, who heads the library's member services department, stated that they had requested a bit more patience from their readers to unpack all the books and get them on the shelves. But Director Aleksanyan confessed that they didn't have adequate space in the library to properly house all the books. The library has no reading room. People have to check out the books.

"I've been the director here for five years. We've requested help from all government bodies and the Ministry of Culture. We asked the Regional Governor and other officials to come see the situation for themselves. They show up, say how terrible things are, and then shake their heads, saying they just don't have the resources to help. They promised to allocate some funds this year, but then the crisis came and, nothing," Ms. Aleksanyan added. Library workers told us that the only time officials show an interest is around election time. During the campaign, they say that the library will be at the top of their list of priorities. After they're elected it's another matter.

The dedicated staff holds out hope that a benefactor will come forth to save the crumbling library and the books. "It's a real shame. We have many readers. Just look at all the well-thumbed books," the director sighed.

New York Times

Armenian Genocide of 1915: An Overview

By JOHN KIFNER

On the eve of World War I, there were two million Armenians in the declining Ottoman Empire. By 1922, there were fewer than 400,000. The others — some 1.5 million — were killed in what historians consider a genocide.

As David Fromkin put it in his widely praised history of World War I and its aftermath, "A Peace to End All Peace": "Rape and beating were commonplace. Those who were not killed at once were driven through mountains and deserts without food, drink or shelter. Hundreds of thousands of Armenians eventually succumbed or were killed."

The man who invented the word "genocide"—Raphael Lemkin, a lawyer of Polish-Jewish origin — was moved to investigate the attempt to eliminate an entire people by accounts of the massacres of Armenians. He did not, however, coin the word until 1943, applying it to Nazi Germany and the Jews in a book published a year later, "Axis Rule in Occupied Europe."

But to Turks, what happened in 1915 was, at most, just one more messy piece of a very messy war that spelled the end of a once-powerful empire. They reject the conclusions of historians and the term genocide, saying there was no premeditation in the deaths, no systematic attempt to destroy a people. Indeed, in Turkey today it remains a crime — "insulting Turkishness" — to even raise the issue of what happened to the Armenians.

In the United States, a powerful Armenian community centered in Los Angeles has been pressing for years for Congress to condemn the Armenian genocide. Turkey, which cut military ties to France over a similar action, has reacted with angry threats. A bill to that effect nearly passed in the fall of 2007, gaining a majority of co-sponsors and passing a committee vote. But the Bush administration, noting that Turkey is a critical ally — more than 70 per cent of the military air supplies for Iraq go through the Incirlik airbase there — pressed for the bill to be withdrawn, and it was.

The roots of the genocide lie in the collapse of the Ottoman Empire

The empire's ruler was also the caliph, or leader of the Islamic community. Minority religious communities, like the Christian Armenians, were allowed to maintain their religious, social and legal structures, but were often subject to extra taxes or other measures.

Concentrated largely in eastern Anatolia, many of them merchants and industrialists, Armenians, historians say, appeared markedly better off in many ways than their Turkish neighbors, largely small peasants or ill-paid government functionaries and soldiers.

At the turn of the 20th Century, the once far-flung Ottoman empire

was crumbling at the edges, beset by revolts among Christian subjects to the north — vast swaths of territory were lost in the Balkan Wars of 1912-13 — and the subject of coffee house grumbling among Arab nationalist intellectuals in Damascus and elsewhere.

The Young Turk movement of ambitious, discontented junior army officers seized power in 1908, determined to modernize, strengthen and "Turkify" the empire. They were led by what became an all-powerful triumvirate sometimes referred to as the Three Pashas.

In March of 1914, the Young Turks entered World War I on the side of Germany. They attacked to the east, hoping to capture the city of Baku in what would be a disastrous campaign against Russian forces in the Caucasus. They were soundly defeated at the battle of Sarikemish.

Armenians in the area were blamed for siding with the Russians and the Young Turks began a campaign to portray the Armenians as a kind of fifth column, a threat to the state. Indeed, there were Armenian nationalists who acted as guerrillas and cooperated with the Russians. They briefly seized the city of Van in the spring of 1915.

Armenians mark the date April 24, 1915, when several hundred Armenian intellectuals were rounded up, arrested and later executed as the start of the Armenian genocide and it is generally said to have extended to 1917. However, there were also massacres of Armenians in 1894, 1895, 1896, 1909, and a reprise between 1920 and 1923.

The University of Minnesota's Center for Holocaust and Genocide Studies has compiled figures by province and district that show there were 2,133,190 Armenians in the empire in 1914 and only about 387,800 by 1922.

Writing at the time of the early series of massacres, The New York Times suggested there was already a "policy of extermination directed against the Christians of Asia Minor."

The Young Turks, who called themselves the Committee of Unity and Progress, launched a set of measures against the Armenians, including a law authorizing the military and government to deport anyone they "sensed" was a security threat.

A later law allowed the confiscation of abandoned Armenian property. Armenians were ordered to turn in any weapons that they owned to the authorities. Those in the army were disarmed and transferred into labor battalions where they were either killed or worked to death.

There were executions into mass graves, and death marches of men, women and children across the Syrian desert to concentration camps with many dying along the way of exhaustion, exposure and starvation.

Much of this was quite well

Continued on page 4

ArmenienInfo.net

News. Informationen. Kommentare.

www.massisweekly.com

Updated every Friday

Armenia's Cosmic Ray Division at International Space Weather Initiative

CROATIA -- On September 4-18, 2009 a delegation from the Yerevan Physics Institute (YerPhi) consisting of Prof. Ashot Chilingarian, YerPhi's director and head of its Cosmic Ray Division (CRD), with CRD scientists and engineers participated in the International conference on the Heliophysical Phenomena and the Earth Environment in Shibenik, Croatia. The regional meeting of Balkan, Black Sea, and Caspian Sea participants was held for the third time within the framework of the International Heliophysical Year, now being continued as the International Space Weather Initiative (ISWI). This initiative is supported by NASA and the United Nation's Outer Space Office in Vienna, Austria.

Armenia's Cosmic Ray Division has deployed Armenian designed cosmic ray particle detectors in Croatia and Bulgaria, with other countries to follow in the near future. The new networked arrays of particle detectors are part of the Space Environment Viewing and Analysis Network (SEVAN) which was

developed largely by young CRD scientists under the direction of Prof. Chilingarian and CRD's senior staff with international funding.

The result of CRD's research was presented in a number of papers by Prof. Ashot Chilingarian, Bagrat Malyan, Armen Hovhannisyanyan, A. Daryan, Karen Arakelyan, and Artur Reymers. Prof. Chilingarian was one of four scientists especially invited to report to the conference on particle detectors for space weather and solar physics research. The other invited speakers were from research institutes in the US and Russia. Armenian PhD students actively participated in the presentation of two reports at a training session on "Cosmic Rays and Neutron Monitors".

The SEVAN system of networked cosmic ray monitors received support at the meeting in Croatia, and is scheduled to receive a boost in 2010.

Cosmic Ray Division: http://crdlx5.yerphi.am/press_releases/ or <http://www.crdfriends.org>

Armenian Genocide of 1915: An Overview

Continued from page 3

documented at the time by Western diplomats, missionaries and others, creating widespread wartime outrage against the Turks in the West. Although its ally, Germany, was silent at the time, in later years documents have surfaced from ranking German diplomats and military officers expressing horror at what was going on.

Some historians, however, while acknowledging the widespread deaths, say what happened does not technically fit the definition of genocide largely because they do not feel there is evidence that it was well-planned in advance.

The New York Times covered the issue extensively — 145 articles in 1915 alone by one count — with headlines like "Appeal to Turkey to Stop Massacres." The Times described the actions against the Armenians as "systematic," "authorized," and "organized by the government."

The American ambassador, Henry Morgenthau Sr., was also outspoken. In his memoirs, the ambassador would write: "When the Turkish authorities gave the orders for these deportations, they were merely giving the death warrant to a whole race; they understood this well, and in their conversations with me, they made no particular attempt to conceal the fact."

Following the surrender of the Ottoman Empire in 1918, the Three Pashas fled to Germany, where they were given protection. But the Armenian underground formed a group called Operation Nemesis to hunt them down. On March 15, 1921, one of the pashas was shot dead on a street in Berlin in broad daylight in front of witnesses. The gunman pled temporary insanity brought on by the mass killings and a jury took only a little over an hour to acquit him. It was the defense evidence at this trial that drew the interest of Mr. Lemkin, the coiner of "genocide."

Another Fraudulent Elections

Continued from page 1

"Instead of containing the thugs, the police worker held my arms so that I could not return the blows," said Makeyan.

Representative of the opposition Zharangutyun party Narine Vanian also confirmed Makeyan's account of the events. She said she had reported information about the license plate of the car that she said belonged to the attackers to the Pashinian camp.

"Occupation of Azerbaijani Territories Must End"

Continued from page 1

region may become peaceful," he said.

Turkey should not link the normalization of its relations with Armenia to further progress in international efforts to resolve the Nagorno-Karabakh conflict, Russian Prime Minister Vladimir Putin said on Wednesday.

Putin also reaffirmed Moscow's support for Turkey's dramatic rapprochement with Armenia, his country's main regional ally, after talks with his visiting Turkish counterpart, Recep Tayyip Erdogan.

"We receive with great optimism Turkish proposals on the normalization of Turkish-Armenian relations," he told a joint news conference. "We very much hope all elements of shortest approaches [to the normalization] will be used in the negotiating process and Armenia's leadership is also on this positive path."

In remarks that will be welcomed by Yerevan, Putin made clear that Moscow believes the two issues should not be "tied in one package." "It is difficult to solve each of these problems separately, and if one tackles them in a single package, then prospects for their settlement will automatically become very remote," he said. "Packaging these problems is not quite right from the practical and strategic standpoints."

The Armenian Committee for the City of Glendale Complete Count Committee

Invites you to a

Community Briefing about the 2010 Census

Sunday, January 17th
1:00pm

St. Mary's Church Hall
500 S. Central Ave., Glendale, CA

The 2010 US Census is quickly approaching and anyone living in the US is required by law to complete it!

Come learn everything you need to know about the 2010 US Census. Guest Speakers will include representatives from the Census Bureau and the Glendale Complete Count Committee

Learn about **job opportunities** related to the 2010 US Census



Admission is **FREE**.
Refreshments will be served.
Census promotional items will be available

Questions?
Call 818.243.3444



Committee Members Include: Armenian Council of America, Armenian Cultural Foundation-Glendale, Armenian National Committee-Glendale, Armenian Relief Society Sepan Chapter, Armenian Rights Council of America, Armenian Youth Federation-Glendale, St. Mary's Apostolic Church

ԴԱՄԱՍԿՈՍ

ԿՈՄԻՏԱՍԻ ԾՆՆԴԵԱՆ 140-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒՐՈՒԴԱԾ ԱՍՍՈՒՆՔԻ ԵՐԵԿՈՅ

ԱՆՈՅՄԱՐԱՇԼԱՆՆ

Դամասկոսի Նոր Սերունդ Մշակութային Միությունն անխոնջ աշխատանքներուն շնորհիվ Կիրակի, 13 Դեկտեմբեր 2009-ին՝ երեկոցեան ժամը 8:30-ին, Ռուսական Մշակութային կեդրոնի սրահէն մէջ տեղի ունեցաւ 2009 տարուան աւարտին գրական զեղարուեստական վերջին անկրկնելի երեկոն, որ նուիրուած էր Կոմիտասի ծննդեան 140-ամեակին:

Երեկոն կը վայելէր Դամասկոսի Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերբ. Տ. Արմաշ Ս. եպս. Նալպանտեանի հովանաւորութիւնը: Սոյն երեկոյին ներկայ էին Սուրիոյ մօտ Հայաստանի Հանրապետութեան լիազօր դեսպան՝ մեծարգոյ տիար Արշակ Փոլատեան եւ իր ազնուափայլ տիկինը, Ս.Դ.Հ.Կ.-ի Հարաւային Շրջանի Վարիչ Մարմնի ատենապետ տէր եւ տիկ. Սողոմոն Ելենեան, Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ տէր Աբգար քննչ. Քահճեճեան, մշակութային ներկայացուցիչներ, հասարակական գործիչներ, ազգայիններ եւ արուեստասէր հոծ բազմութիւն մը:



Օրուան պատուաւոր հիւրն էր Լիբանանէն ժամանած ասմունքի վարպետ մեկնաբան, տաղանդաւոր եւ շնորհալի ասմունքող տիկին Անի Եփրեմեան, որ բարձրորակ կատարողութեամբ եւ ապրումներով ներկայացուց Պարոյր Սեւակի «Անլուելի գանգակատունը» ի յիշատակ 1915 թուին մեծ նահատակ Կոմիտաս Վարդապետի ծննդեան 140-ամեակին: Ան իր փայլուն եւ անթերի կատարումներով մեծ տպաւորութիւն ձգեց դամասկոսյան ներկաներուն վրայ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Ն.Ս.Մ.Մ-եան ատենադպրուհի Բժշ. տիկ. Մելինէ Կիւլիւմեանը: Ան ողջունի խօսքերէն ետք համառօտակի ներկայացուց Կոմիտասի կենսագրութիւնը, ապա ձայնամարզութեան յայտնի ուսուցչուհի տիկ. Արաքս Չէքիճեանի աշակերտներէն տիար Ժողէֆ Թրթեան ապրումներով երգեց Կոմիտասի յօրինած երգերէն «Գարուն ա»՝ դաշնակի ընկերակցութեամբ:

Յետոյ բեմ բարձրացաւ հանրայտ ասմունքող տիկ. Անի Եփրեմեան, որ խելայեղ ծափահարութիւններով ընդունուեցաւ ներկաներուն կողմէ:

Ասմունքը ունի իր սիրահարներն ու քաջալերողները, նայած թէ գայն մեկնաբանող անհատը ինչպէս կը մատուցէ կամ կը վերարտադրէ հեղինակին ստեղծագործութիւնը:

Մերթ յուզական, մերթ խորտա, մերթ յուսալի ան ներկայացուց Կոմիտաս Վարդապետի կեանքը՝ անոր ծնունդէն՝ »Ղօղանջ Աւետիսի«-էն մինչեւ »Ղօղանջ Թաղման եւ Յարութեան«:

Հազար ութ հարիւր վաթսուսինն թուին

Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տուին.

Հայոց արտերում ի՞նչ բերք էր հասել .-

Դժուար է ասել:

Ամբողջ սրահը զմայլումով կը հետեւէր Անլուելի Զանգակատան կանչող զանգերուն, որոնք կու-

գային էջմիածինի Մայր տաճարէն՝ «ա՛ստ, ուր հնչել են մեղեդիք ոսկի»՝ «Հայր Մեր», «Միայն Սուրբ», «Արեգակն Արդար», «Ով զարմանալի կամ «Նորհուրդ խորին», «Ուր գրաբարն է հնչել դարեդար եւ շարականն է յուզել բոլորին»:

Կարճ ընդմիջումներու եւ ասմունքին զուգահեռ՝ ջութակի վարպետ՝ տիար Խաժակ Խաչատրեան ներկայացուց Կոմիտասեան կտորներու զեղեցիկ կատարումներ: Իսկ «Մեղրի» պարախումբին մեծ աղջիկները իրենց հեղաճկուն պարերով լաւագոյնս արտայայտեցին օրուան խորհուրդը:

Արտասանութեան աւարտին Ն.Ս.Մ.Մ-եան ատենապետուհի տիկ. Ասողիկ Ակինեան ըսաւ. »Այսօր ներկաներուն ոգեւորութիւնն ու յուզմունքը միատեղ ընթացան: Կոմիտասի ծննդեան 140-ամեակին նուիրուած այս երեկոն հոգեկան լիցքաւորում տուաւ եւ ազգային հպարտութիւն ներշնչեց մեր բոլորին: Տիկ. Անի Եփրեմեան հնչեղ առողանութեամբ, զեղարուեստական հզօր անհատականութեամբ եւ իր վառ ու ամբողջական արտայայտութեամբ մեկնաբանեց Պարոյր Սեւակի «Անլուելի Զանգակատունը»: Իր հոգեպարար եւ սրտառուչ ասմունքով ան դարձաւ հայ գրականութեան երկու կոթողներու պատգամբերը, մեզի փոխանցեց անոնց ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնը: Այս պահուն պարտք կը զգամ Ն.Ս.Մ.Մ-եան անունով շնորհակալութիւն յայտնել տիկ. Անի Եփրեմեանին, որուն տքնաջան աշխատանքին շնորհիւ վերագործանք մեր ակունքներուն եւ արժէքներուն, որոնք մեր ազգին ու ժողովուրդին հպարտութիւնն են: Շնորհակալական խօսք նաեւ զեղարուեստական բաժնի բոլոր մասնակիցներուն:

Հանդիսութեան աւարտին բեմ բարձրացաւ թեմիս բարեջան առաջնորդ Տ. Արմաշ եպս. Նալպանտեան՝ իր սրտին խօսքը յայտնելու:

ՀԱԼԷՊ

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՊԱՐԱԽՈՒՄԲԻ ՅԱԶՈՂ ԵԼՈՅԹՆԵՐԸ

Ն.Ս.Մ.Մ-եան Հայլէպի «Նոր Սերունդ» պարախումբը Ապրիլին նշեց իր հիմնադրութեան 25-ամեակը:

25 - ամեայ փայլուն ընթացքը, Սուրիայէն բացի, կ'ընդգրկէ զանազան երկիրներու մէջ յաջող ելոյթներ, ինչպէս՝ Հայաստան, Լիբանան, Եգիպտոս, Յորդանան, Յունաստան եւ Կիպրոս:

Ն.Ս.Մ.Մ-ը Սփիւռքի մէջ իր գործունէութիւններով կը աստարէ հայապահպանման գոյամարտին՝ մեր մշակոյթը ծանօթացնելով հայ երիտասարդութեան ու հայպահայութեան:

«Նոր Սերունդ» պարախումբը տքնաջան ու յարատեւ աշխատանք է ետք պատրաստ էր ներկայացնելու իր ելոյթները՝ իբրեւ զեղարուեստական ղեկավար ունենալով հայրենի պարուսոյց օրդ. Սոնա Խաչատրեանը:

Պարախումբը անցեալ Հոկտեմբեր 15-ին մասնակցեցաւ «Թարիք Ալ Հարիր» փառատօնին՝ ներկայացնելով Հայաստանը: Իսկ տարեկան մեծ համոյթներու շարքը տեղի ունեցաւ 8, 15 եւ 22 Նոյեմբերին, ինչպէս նաեւ աշակերտական երկու ելոյթներ ներկայացուցան այս ընթացքին: 29 Նոյեմբերին պարախումբը ելոյթ ունեցաւ նաեւ Լիբանանի մէջ:

Տարեկան մեծ համոյթին առաջին ելոյթը կայացաւ 8 Նոյեմբերի երեկոցեան ժամը 8:00-ին «Զ. Գաբրիէլեան» սրահին մէջ:

Հոծ բազմութիւնը անհամբեր կը սպասէր պարախումբին, մանաւանդ որ ան պիտի ներկայանար նոր ծրագիրով, նոր պարուսոյցով ու նոր զգեստներով:

Բացումը կատարուեցաւ Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներու յոտնկայս ունկնդրութեամբ: Դանիա Պէգճեան ներկայացուց բացման խօսքը:

ԿԻՊՐՈՍ

ՄԻԶ-Յ.Մ.Մ.-ԱՎԱՆ ՄՐՅԱՇԱՐՔ



Շաբաթ, 12 Դեկտեմբերին Մելիտեան Կրթական Հաստատութեան փակ մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ միջ-Հ.Մ.Մ.-ական Futsal-ի (mini football) մրցաշարքը՝ մասնակցութեամբ վեց խումբերու: Ամբողջ օրը խանդավառութեամբ եւ պայքարի ոգիով հոծ բազմութեան առջեւ տեղի ունեցած սոյն մրցաշարքի աւարտին ախոյեան հանդիսացաւ Հ.Մ.Մ.-Աստուև խումբը, իսկ մրցաշարքի լաւագոյն մարզիկը՝ Արտիոմ Մուճիկեանը:

Առաջին անգամ տեղի ունեցած այս մրցաշարքը իր աւարտին հասաւ մեծ յաջողութեամբ: Վարձքը կատար Հ.Մ.Մ.-ի վարչութեան:



բը, որմէ ետք սկսաւ համոյթը: Պարախումբը հրամցուց հայկական եւ օտար 17 պարեր, ապա մանկապատանեկան խումբը պարեր ներկայացուց՝ Անժէլ Շէօնմէլեանի քանոնի նուագակցութեամբ:

Պարախումբը գործադրեց հետեւեալ պարացանկը. «Ծանօթացման պար» (Արամ Խաչատրեան), որ կ'աւետէր, թէ ինչքան յաջող ու հոյակապ պիտի ըլլան յաջորդ պարերը: Ապա «Լեռնապար» (Գէորգ Գէորգեան), «Եարխուշտա» (մանկապատանեկան խումբ), «Քոչարի», «Նազ պար», «Անուրջներ», «Շալախօ», «Եւրոպական պար» (մանկապատանեկան խումբ), «Վրացական պար», որով առաջին բաժինը աւարտեցաւ:

Կարճ դադարէ մը ետք երկրորդ բաժինը սկսաւ «Թանկօ» պարով, ապա՝ յաջորդաբար՝ «Հայրենիներ», «Նինօ», «Խաղ պար», «Արաբական պար», «Ճաղ պար», «Նազ պար», «Արցախ» ու «Սարդարապատ», որով ելոյթը հասաւ իր աւարտին:

Պէտք է նշել, որ նկատելի էր պարման-պարմանուհիներուն աշխատանքը, որոնք իւրաքանչիւր պարի համեմատ ստեղծեցին յատուկ մթնոլորտ մը իրենց շարժուձևերով եւ ձկունութեամբ: Պարախումբը յաջող կատարումով ու զեղեցիկ զգեստներով հմայեց հանդիսատեսը եւ բուռն ծափահարութիւններով արժանացաւ քաջալերանքի ու գնահատանքի: Բերքն էր այս ելոյթներու շարքը:

ԳՐԱԿԱՆ

ԲԱՐԳԵՆ Ա ԱԹՈՒԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈՅ ԵՒ ԻՐ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ ԿԻԼԻԿԻՈՅ» ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Արմաշէն կուգար Բարգէն Կիլիկիոսի կաթողիկոսը որուն անդրանիկ շրջանաւարտն էր եւ ձեռնաստուելը Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեանի, որ 1895 թուականին նախընծայ եօթը հոգեւորականներ Հայ Եկեղեցւոյ կ'ընծայէր: Այն-թապէն ժամանած Յարութիւն Կիլիկիոսի կը վերակոչուէր Բարգէն, հոգեւորականի անխոնջ գործունէութիւն կը ծաւալէր Թիւրքիոյ եւ ապա Ամերիկայի մէջ, եւ ապա Երուսաղէմի մէջ 20-ական թուականներուն հոյ՛ մը հոգեւորականներ պատրաստելէ ետք, 1930 թուին կ'ընդառաջէր ծերունի եւ վտարանդի Սիւսի Սահակ Բ Խապայեան Կաթողիկոսին ու կը ժամանէր Անթիլիաս՝ նորաբաց վայրը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, ատանձնելու համար Աթոռակից Կաթողիկոսի պատասխանատու պաշտօնը: Կաթողիկոսական ընտրութիւնն ու օծումը Բերիոյ Թեմին մէջ կը կատարուէր տարի մը ետք, նախագահութեամբ Սահակ Բ Կիլիկիոյ Կաթողիկոսին: Բարգէն Աթոռակից Կաթողիկոս կը լծուէր լուրջ աշխատանքի, կը կազմակերպէր նոր ստացուած թեմերը անձամբ այցելելով՝ Լիբանան, Սիւրիա եւ Կիպրոս, ու նեցուկ կը կանգնէր Սահակ Կաթողիկոսի, որ միխթարուած կը զգար որ իր յաջորդը արդէն կանգնած էր իր կողքին: Դժբախտաբար սակայն Բարգէն Կաթողիկոս կը վախճանէր 1936 թուին եւ սուգի կը մատնէր ծերունի Կաթողիկոսն ու ամբողջ Հայ Եկեղեցին: Սահակ Կաթողիկոս կը վախճանէր 1939-ին:

«Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ»

Բարգէն Ա Կաթողիկոս ծնած էր Այնթապ 1868 թուականին ու կը վախճանէր իր 68 տարիքի լրումին: Յետ մահու, 1939 թուին, Անթիլիասի նորահաստատ տպարանէն լոյս կը տեսնէր իր հեղինակաւոր աշխատասիրութիւնը՝ «Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ» «մեծադիր եւ արժէքաւոր հատորը: Ստորեւ համառօտ կը ներկայացնենք զիրքին բովանդակութիւնն ու անոր արժանիքը:

Մեծադիր հատորը 1446 երկաթեղէն էջերէ կը բաղկանայ ու կը բովանդակէ Կիլիկիոյ Կաթողիկոսներու լրիւ շարքն ու անոնց քննա-

կան պատմութիւնը՝ 1441 թուականէն մինչեւ 1936: Հեղինակը հետեւած է իր բազմարդիւն ուսուցչին ու հոգեւոր ծնողին Մաղաքիա Պատրիարք Օրմանեանի «Ազգապատում»ի երեք հատորներուն որոնց կրտսեր եղբայրը կարելի է համարել «Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ» երկասիրութիւնը, որ իսկականին մէջ լրացուցիչ հատորը կազմեց Օրմանեանի գործին:

Հատորին հիմնական մասը Կիլիկիոյ Կաթողիկոսներու անուններու գլխակարգութեամբ կ'ընթանայ, ճիշդ «Ազգապատում»ի հատորներուն նման, սկսելով Գրիգոր Մուսաբեկեանէն (1439-1451), ու հասնելով մինչեւ Սահակ Բ Խապայեան (1902-1939), եւ նորին Աթոռակից Բարգէն Ա Կիլիկիոսի (1931-1936), գաւազանագիրքին վրայ գետեղելով 39 հայրապետներ, վերջինը ըլլալով նոյնինքն հեղինակը: Հատորը կը տարածուի հետեւաբար 1441 թուականէն մինչեւ 1936 մօտ հինգ դարերու երկարաձիգ տարիներուն վրայ:

Հատորին երկրորդ մասը իր երեք զիրքերով կը բովանդակէ պատմագիտական լուրջ ուսումնասիրութիւններ՝ «Էջմիածին եւ Սիս», «Սիս եւ Երուսաղէմ», եւ «Աջ եւ Աջապահ» խորագիրներով, ինչպէս նաեւ յաւելուած մը՝ «Մանր ուսումնասիրութիւններ» ու եւ «Բնագիրներ» ու: Հատորը «Ընդհանուր Ակնարկ»ով մը կը բացուի ուր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան արժանատի հանգրուանները ու անոնց տեղափոխութեանց պատճառները կը քննուին մանրամասնօրէն՝ հիմնուած սկզբնաղբիւրներու վրայ:

Աթոռին Վերադարձը Էջմիածին

Սկսելով Մուսաբեկեան Կաթողիկոսէն, հեղինակը քննած է թովմա Մեծոփեցի ժամանակակից պատմիչի տուեալները, թէ ինչպէս «Կաթողիկոսութիւնը Կիլիկիոյ մէջ, իբրեւ հետեւանք լատին շփումին, իր հմայքը կորսնցուցած էր Հայաստանի Արեւելեան վարդապետներու աչքին»: Ապա հանգամանօրէն վերլուծած է Հայրապետական Աթոռին 1441 թուին Կիլիկիայէն էջմիածին վերադարձի ներքին եւ արտաքին պատճառները, հարցադրելով թէ «ինչո՞ւ համար Մուսաբեկեան Կաթողիկոս մերժեց էջմիածին երթալու հրահրը»: Հաւանաբար, կ'ըսէ Բարգէն Կաթողի-

կոս, «ծեր էր եւ չուզեց շարժիլ իր տեղէն, մանաւանդ երբ տեսաւ որ Կիլիկիոյ եպիսկոպոսներէն չորսը, ըստ Մեծոփեցիի, չուզեցին գինք, եւ նամակներ գրեցին Արեւելեան վարդապետներուն, ինչպէս նաեւ Մեծոփեցիին, եւ սակայն Մուսաբեկեան Սիս մնաց ընկճելու համար հակառակորդները»: Հեղինակը հաւանական կը գտնէ այս վարկածը, քանի որ հարցը կաթողիկոսական աթոռին ապահովութեան եւ միութեան մասին ըլլալով, Մուսաբեկեան չէր կրնար մերժել «այնքան պատուաբեր հրահր մը»:

Քննական Սեթուր

Իր այս ընդարձակ երկին համար Բարգէն Կաթողիկոս օգտագործած է գիտական եւ աղբիւրագիտական մեթոտը յաճախ մէջբերելով հիմնական աղբիւրները էջերուն յատակը: Ակններեւ կը դառնայ բնականաբար որ Օրմանեանի «Ազգապատում» ին բաղդատմամբ Կիլիկիոյ մասին գործը կեդրոնացած կը մնայ միայն Կիլիկիոյ Կաթողիկոսներու գործունէութեանց շուրջ, 1441 թուականէն ետք անշուշտ, քան թէ ինչ որ Օրմանեան նոյն Կաթողիկոսներու մասին աւելի հապճեպ եզրայանգումներու հասած է իր երեք հատորներուն մէջ: Իրաւամբ, որպէս պատմագէտի, Օրմանեանի նպատակը եղած է աւելի ընդարձակօրէն գրել Ընդհանրական Հայրապետներու, որ է ըսել Ամենայն Հայոց Կաթողիկոսներու մասին, քան թէ Կիլիկիոյ Կաթողիկոսներու, որոնք մասնակի Կաթողիկոսներ էին, եւ առ այդ հետամուտ եղած է Ընդհանրական Հայրապետներու կեանքին եւ գործերուն, որքան ատեն որ անոնք, թէեւ աստանդական, սակայն եւ այնպէս Ամենայն Հայոց Կաթողիկոսներն էին մինչեւ 1441 թուականը: Անկէ ետք Կիլիկիա նստող Կաթողիկոսները այլեւս «Ազգապատում»ի անմիջական ծիրէն դուրս պիտի մնային, երկրորդական գիծի վրայ, եւ հեղինակն ալ ըստ այնմ պիտի վարուէր անոնց հետ:

Սոյն երկասիրութեան մէջ Բարգէն Կաթողիկոս մանրամասնօրէն գրած է Կիլիկիոյ Կաթողիկոսներու մասին, այնքան մանրամասնօրէն որքան Օրմանեան գրած է Ընդհանրական Հայրապետներու մասին: Կիլիկիոսներէն գրած է Կիլիկիոյ Կաթողի-

կոսներու մասին վերլուծելով անոնցմէ իւրաքանչիւրին անձը, ժամանակն ու գործը, մնալով միշտ իր սահմանին մէջ, վկայակոչելով հնարաւոր ամէն աղբիւր եւ ուսումնասիրութիւն եւ յիշատակարաններ, սկսելով Դարանաղբիւրէն մինչեւ Հայր Միքայէլ Չամչեանն ու Հայր Ղեւոնդ Ալիշանը:

Յովհաննէս Թլկուրանցի Կաթողիկոս

Կիլիկիոյ երկու կաթողիկոսներուն յատուկ կարեւոր տեղեկութիւններ հաղորդած է հեղինակը սոյն հատորին մէջ: Առաջին, լայն տեղ տուած է Կիլիկիոյ Յովհաննէս Բ Թլկուրանցի Կաթողիկոսին (1489-1525), որ եղած է նաեւ ծանօթ տաղասաց բանաստեղծ: Հաստատելէ ետք Թլկուրան հայաբնակ գիւղի վայրը՝ Միջագետքի Ամիդ (Տիգրանակերտ) քաղաքէն դէպի հարաւ, գտած է որ շրջանի հայաբնակ քաղաքներու հայութիւնը բնաջինջ եղած է բոլորովին, ընդ որս եւ Թլկուրանը, որ «հայութիւնը յիշեցնող քիչ բան թողած է եւ կամ բոլորովին ջնջուած է»: Թլկուրանցի Կաթողիկոսին ժամանակակից են Մկրտիչ Նաղաշ՝ Տիգրանակերտի արքեպիսկոպոսը, եւ Աղթամարի տաղասաց Գրիգորիս Կաթողիկոսը, որոնք սակայն «չեն հասնիր Թլկուրանցիին՝ արուեստի եւ լեզուի ինքնատուլութեան կողմէն», կ'աւելցնէ Կիլիկիոսներն:

Բարգէն Կաթողիկոսի կատարած բաղդատութիւնը Թլկուրանցիի բանաստեղծութեանց Ս. Գիրքի «Երգ Երգոց» գրքին հետ, ցոյց տուած է որ տաղասաց Կաթողիկոսը ներշնչուած է մաքուր սիրոյ եւ քրիստոնէական եկեղեցւոյ մէջ նուիրագործուած քնարերգութենէն, քան թէ աշխարհիկ հասարակ վայելքներէ, ինչպէս կարծեցին ոմանք: Թլկուրանցի 36 տարի վարած է Կիլիկիոյ Կաթողիկոսի իր պաշտօնը, եւ որովհետեւ Սիս քաղաքական գետնի վրայ ապահով տեղ մը չէր այլեւս, Կաթողիկոսը շատ յաճախ Հալէպ կը նստէր քան Սիս, «եւ մօտէն կը գբաղէր Երուսաղէմի Գործերով»: Ձեռագիրներու յիշատակարաններ պրպտելով, Բարգէն Կաթողիկոս ցոյց տուած է թէ «Թլկուրանցին իբրեւ

Շաք. ք էջ 17


Թեքեան Մշակութային Միութեան Լոս Անճելըսի մասնաճիւղ ԳԻՆԵՉՕՆ ՅԱԿՈՔ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆԻ «ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ - 4» Հայտորի հրատարակութեան առիթով Ելոյք կ'ունենան ՄԱՐԶՊԵՏ ՄԱՐԿՈՍԵԱՆ ՎԱԶԷ ՍԵՄԵՐՃԵԱՆ Հանդիսավար ՄԱՐԱԼ ՈՍԿԵԱՆ Ուրբաթ, 29 Յունուար, 2010 Երեկոյեան ժամը 8:00-ին ԿԼԵՆՏԵՅԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ 222 E. Harvard Avenue, Glendale Validated Parking at Marketplace Parking Structure (Harvard & Maryland) ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ - ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ԲԱԼՈՒԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐ ԿԱՄ ԱԶԳԱԳՐԱ-ԵՐԱԺՇՏԱԲԱՆԻ ՈՂԻՍԱԿԱՆԸ

(ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍ ԱԼԱԳԱՅՏՈՅԵԱՆԻ «ԲԱԼՈՒԻ (ԵՖ ՏԱՐԱԾԱՇՐ-ԶԱՆԻ) ԵՐԱԺՇՏԱԿԱՆ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԲԱԾՈՅ» ԳՐԹԻ ՀՐԱՏԱՐԱ-ԿՈՒԹԵԱՆ ԱՌԻՈՒԿ)

Մեծ է այսօրը ինձի համար... Ահա երբեմնի Ծոփաց աշխարհի, Արածանիի ափին բազմատարած՝ Բալուն, 450 էջերու մէջ, նորակառուց նաւու մը նման, որ կը մխրճուի հայերէն ընթերցող եւ մայրենի մեր լեզուով արբեցող ժողովուրդին ծովածոցին մէջ. իրաւամբ նոր «նաւ» մը՝ կառուցուած ջինջ արեւմտահայերէնով, նուիրուած Բալունի եւ տարածաշրջանի 72 վաւերական ազգագրական երգերուն, իրենց խտասալիկներով. մեծ է այսօրը կ'ըսէի, քանի որ այսօրուայ այս հրատարակութիւնը մեզ կը դնէ իտէպլի մը մարմնաւորումը եղող իրականութեան առաջ:



Իտէպլա պարզ էր - ուզեցի փնտուել, հետեւելով Կոմիտասի վեհօրինակին, մեր կորսուած եւ գողցուած Արեւմտահայաստանի վերջին, թերեւս վերջնագոյն երգային ծաղիկները, բռնագրաւուած մեր հողերուն ընդերքէն ծնունդ առած ազգագրական գոհարներու վերջին մնացորդները, նոյնիսկ պատառիկներու ձեւի տակ: Այս գործը որոշեցի կատարել Սփիւռքի անձայրածիր հողամասերու վրայ փոռած 1915էն վերապրող սերունդի ներկայացուցիչներուն մօտ: Փնտուեցի, ա՛յո, Եւրոպա, Սուրիա, Հիւսիսային Ամերիկա, ուզեցի գտնել եւ, ինչ երանութիւն, գտա՛: Բախտաւոր եմ:

զաւառի անուր, փոկ, կարգեւ, խոփ, եւ դեռ որքան ընտանի աշխատանքային անուններ. եզն ու գոմէշը ունէին իրենց յատուկ անունները. անոնք կենսատու մասնիկը կը կազմէին գիւղացիին ամէնօրեայ կեանքին, յոյզերուն, երգերուն, աղօթքներուն: Հայ հարմերն ու աղջիկները, սողամարդոց կարգին ունէին իրենց յատուկ տունէն դուրս գործերը՝ հերկելու, ցանելու, ջրելու, քաղելու, նաեւ յարակից գործեր, կենսատու կենդանիներու բարիքներուն նուիրուած աւանդական, օրհնեալ գործեր: Եւ այսպէս, հաստատուն քայլերով՝ սերունդներ շարունակելով, յոյսերով եւ երգ ու աղօթքներով լի, քաղաքական եւ ընկերային վերիվայրումներ դիմագրաւելով եւ յաղթարելով, հայ ժողովուրդը կ'ապրէր իր բնօրրանին մէջ, ստեղծելով հայ երգը տեղույն զաւառաբարբառով, իբրեւ բնական պտուղը կամ պսակն ու օրհնութիւնը ամէնօրեայ իր կեանքին:

Ես, նախկին դեղագործս, ո՛չ Արուսեակ Սահակեանի մը ազգագրագիտական պատրաստութիւնը ունէի, ո՛չ թանձրեանի մը վաւերաթղթածրարներու գոյլիչ գիտական պարունակութիւնը, ոչ ալ Ալիւնա Փահլեւանեանին երաժշտագիտական հիմնահողը: Եւ դեռ, ոչ երգել գիտեմ, ոչ պարել կրնամ: Է, ինչ մնաց. շատ քիչ բան - հայու հոգիս: Ո՛ւր ծածկէի, ո՛ւր պահէի, ինչ ընէի այդ հոգին: Մէկ ձեւ կար. քանի որ հոգին չի պահուիր պէտք էր որ գայն բաժնեկցէի բոլոր անոնց հետ որոնք դեռ կը հաւատան հայութեան, հայ ինքնութեան, հայ երգին եւ դպրութեան:

Այդ երազային կեանքին վկան է ահաւասիկ այս հաստափորիկ մատենանը:

Հայ գիւղերը, օրինակ Բալունի անմիջական՝ Բերրի, Հաւաւ, Արթըղան, Օխու, Ձէթ եւ կամ քիչ մը հեռաւոր քաղաքները՝ Քղի, Խարբերդ, Ճապաղձուրի շրջանը իրարու հետ մշտական հաղորդակից եղած են, մէկ գիւղէն միւսը հարս գացած է, երգեր ու պարեր փոխանակուած են: Ամէնուրեք փափաքած են հայտ ապրիլ հարեան քելարին հետ հակառակ այս վերջինին նախանձին եւ անկէ ծնած անվատահալութեան. նախանձը կը ծագէր քանի որ հայը դպրոց ունէր, կառուցող էր եւ յառաջադէմ, մինչ քելարը երկար դարեր նոյն յետամնաց վիճակի մէջ ծուրարած՝ հայտ աչքով չէր նայէր հայ դրացիին:

Եւ ահա պտուղը: Լացի եւ ողբի կամ ջարդի ու կորուստի մասին չէ այս գիրքը, այլ հին - այսինքն նոր հնութեան անցած - հայրենիքին պատկանող պատառիկի մը վերայցայտնութիւնն է - կարծես այլեւս անսպասելի - Ծոփաց աշխարհի այդ պատառիկին վերածնունդն է ան՝ գիրով եւ քրտինքով, երգով ու շունչով, նկարներով, նոթաներով, նաեւ հարուստ ազգագրական բառարանով (երկու էջ ալ անգլերէն ամփոփումով):

Այս հատորին մէջ ներառուած են հարսանեկան եւ ուրիշ քրտերէն բայց հայածին երգեր: Այս առեղծուածային «հայածին քրտերէն» բառերուն իմաստը տրուած է հոն:

Մօտ հարիւր տարի առաջ հայկական հողի վրայ, Արեւմտեան կողմն աշխարհի, կար հայ գիւղացի հայ գիւղի մէջ. այդ կը նշանակէ հայ հող, հայ կեանք, հայ երգիք, նորածիններու լաց, երէցներու օրհնութիւն. այդ հողը ունէր հայկական եզն ու գոմէշը, գիւղացիին ջան ճիկէրը՝ որոնց հետ ան հայօրէն կը հերկէր այդ հայ «հալալ» հողը. այդ սուրբ աշխատանքին ընթացքին կը ծլէին ու կը ծաղկէին՝ «Գոգ աղբար», «Տալ տալա», երգերը: Արօրին կամ գոթանին ամէն մէկ մասնիկը ստեղծագործական եւ գործնական հմտութեան մը կը համապատասխանէր, ունէր իրեն յատուկ

ցող-հասկցող-համադրող աչքը: Ես լսեցի Մարօ երգասացը յուզումով, յափշտակուեցայ բացարձակ նորութիւն եղող Բալունի հին երգերով, հաւատացի Մարոյին երգածին եւ հաստատեցի ա՛յն՝ ինչի որ հաւատացած էի: Գիտէ՞ք ինչի մէջ կը կայանայ արժանիքս. թոյլ չտուի որ «թուշունը» կորսուի իր երգին հետ, թոյլ չտուի որ ան շփոթուի կենցաղային կերտախումբին հետ եւ բթանայ, կանաց-կամաց այլասեւին հայրենիքէն հեռու, անոր ոգին սփոփող երգն ու յափշտակուած մեր երկրի ոգին, որպէսզի վերջը, ինչպէս միշտ, լալով ողբալով գլուխնիս կոծենք այդ կորուստին համար: Չուզեցի որ Բալունի այս թրթուռն եւ դիւրաբեկ հարատւութիւնն ալ փոշիանայ, եւ, թերեւս, այն ատեն լացող մ'իսկ չըլլայ անոր վրայ: Ծաւ կորսնցուցած ենք եւ հիանալի լացողներ դարձեր ենք, շատ վարժ՝ այդ կորուստները փոխառու մէջ: Ահա, քիչ մնացեր է որ մենք զմեզ ալ կորսնցնենք եւ կորսուինք, լալով թէ ինչու, կեր ու խումով թէ ինչքանամոռաց ու անցողիկ գուարճամոլութիւններու անձնատուր, թէ անամօթ եղբայրասպանութիւններով (չիւշեցէք հոկտեմբերը 27ի սպանդը. 10 տարի եղաւ) կամ խակ ու տհաս նախագահ-նախարարներու անբարոյ եւ շահամոլ ախորժակներու պատճառով. դո՛ւք որոշեցէք:

Այս գիրքը փորձ մըն է կորսուած հայկական ոստան մը վերագտնելու: Եթէ այդ ոստանը որոշ չափով մը վերագտնուեցաւ, կը նշանակէ ինչ որ չափով վերապրեցաւ, վերաշնչաւորուեցաւ, այսինքն յաւերժանալու իրաւունք ստացաւ: Այս հատորին ընկերակցող երգի ներկայութիւնը, երազային դարձած հող ու քարէն վեր, կորսուած հայրենիքին երկինքը կը ցոլացնէ, իսկ հոն ապրող հայ ժողովուրդի բարբառին համն ու հոտը որ կը բարձրանան այդ երգերու ընդերքէն, կը նորոգեն մեր շունչը, կը մաքրեն մեր արիւնը՝ հիմնաւորելով մեր տեսիլքը, թեւեր տալով անոր: Ահա գիրքը, ԲԱԼՈՒԻ, որ մարմնացում մըն է. Արեւմտահայաստան աշխարհի խորտակուած «4000 տարուայ Ծիրանի»ին (Զիւլանի) մէկ ոստը կը կանաչի, հոգի եւ շունչ կը հագուի, կեանք մը ամբողջ կը նիւթեղինանայ, կարծես Յիսուսի մարմնին մէկ հիւլէն ըլլար: Բալունի բազէն մշտնջենացած է. կարծես կը լսուին Արածանիի խոնջանքները երբ Տալ տալան կը հոսի երգասացի սրտէն՝ թոնիրի տաք հացին նման կշտացնող, կենարար՝ հաղորդութեան նշխարի պէս. յոյժ կարիքը կայ հաղորդուողներու: Հողը, մեր նախկին հողը քնար դարձած է, անոր շունչը՝ լոյս, լեզուն՝ արեւ, իւրաքանչիւր թրթուացումը երգին՝ թարմ անձրեւ: Ահա Բալուն ուրեմն. ժամանակին Արածանիի ափին փոռուած եւ մեծն Մեսրոպի ներշնչարան դարձած Բալուն ահա եկած է եւ կը թակէ մեր սրտերը ու կը բաղնի մեր ինքնութեան եւ արժանապատուութեան:

Բալուն այսպէս ամփոփուած է ափի մը մէջ, սալիկի մը վրայ, կը հեւայ մատենանի մը էջերէն՝ մեզ ողջագուրելով: Հոն են գինք ապրեցնող սէրն ու կիրքը՝ միաձուլուած աշխատանքին եւ նուիրումին: Այո, այս մատենան կը բաբախէ, իմ ժողովուրդին հետ միաձուլումին վկան է ան. խտացած, շիկացած կեանք-ապրում-երգ եռոտանին է, նուիրաբերուած հայ ժողովուրդի վերապրող սերունդի ծոցէն ընձիւղած գաւազի մը հոգիին ճաճանչումներուն ընդմէջէն. ան հալէպածին բայց ուղն ու ծուծով բաւցի, երգա-

սաց Մարօ Նալպանտեանն է: Մատենան ըլլալէ առաջ մեհեան է այս հատորը Հազարան Պուլպուլին նուիրուած: : Եթէ մեր ողջ կեանքը անվերջ թաւալում մըն է անակիցքին եւ անվախճանին միջեւ, հոն սկիզբ առած ամէն իրողութիւն գոնէ ժամանակաւոր վախճան մըն ալ ունի: Ահա փորձը որ կատարած ենք լոյսի շերտ մը «գողնալու» վախճանած բայց անմեռ հայրենիքի կողէն, ուզելով գայն քանդակել մեր չարչարակոծ կեանքին յորձանքներէն միշտ կենդանի եւ կենդանացած դուրս եկող հայու մշտադալար ճակտին:

Փրանսացի գիտնականը ըսած է՝ « Ոչինչ կը մեռնի, ամէն ինչ կը փոխակերպուի, rien ne meurt, tout se transforme»: Ահա Բալուն իր մէկ նոր, լուսերգային տարազին տակ: Այլեւս թուրք կամ քիւրտ հարստահարիչները, բռնի կրօնափոխութիւնները վերջ գտած են հոն եւ երբեմնի պատմական Բալուն, թէեւ անհետացած հայկական իմաստով, սակայն, հոս, ան խտացումի, կերպարանափոխումի ենթարկուած է, անհատացած է, վահէ Օշական պիտի ըսէր հակացած է, հականացած, եթէ կ'ուզէք: Գոգ Աղբարը կամ Ջարդար քուրուկը երգաբերթողական անհատ-էութիւններէն են այս հատորին, դարձած են ո՛՛ճ եւ ստացած են ինքնատեւելու կոչում. ինքնատեւելը շօշափելի յաւերժութիւն մը չէ՞ միթէ ԳԻՏԱԿԻՑ ԵՒ ԻՄԱՅՆԱԿԱՆ ՀԱՄԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ մը համար: Ահա երգասացի նոր ոգին, ան որ կը գտնուի անցեալի կեանքին եւ նոր ու թարմ յաւերժականութեան մը խաչաձեւումին. ան կը գոչացնէ խտացումը փոքր աշխարհի մը, Բալուն մանրաշխարհի տիեզերականութեան, ուստի եւ կարող է ցոլացնել ազգային ինքնութեան կորիզը եթէ... այս նետուած ոսկէ գնդակը տեսնող, հասկցող, ճանչցող եւ վերցնող ըլլայ:

Ըսուած է տեղ մը որ «ամբողջ տիեզերքը իմաստի մը շուրջ է որ կը թաւալի»: Միթէ բաւական չէ՞ երազ դարձած հին հայրենիքի պատառ մը իմաստաւորելը՝ երգով եւ գիրով, կեանքի եւ կամքի լծորդութեամբ գոյացած մատենանի մը արարումով, երբ ան սիրոյ եւ նուիրումի եղեամով ցողուած է:

Ահա այդ մատենանը, Բալունի նուիրուած դրասանգը, բուրումնաւէտ եւ հիւթալից՝ իր պարերով ու աղջիկներով, պտուղներով եւ սէրերով, երգ ու կեանքով ու արեւով արբեցած մատենանը:

Երանելի է ա՛ն, որ դէպի հայկական ոգեղինացած Բալուն իմացական այս արշաւին մէջ տեղ կրնայ գրաւել հայաբարբառ նոր օրերու Գուրգիի Ջալալի երիվայր գաւազին կամ, ինչպէս սկիզբը կ'ըսէի, այս նոր տեսակի տիեզերանաւուն մէջ՝ դէպի ՆՈՐ ԲԱԼՈՒԻ:

Այսօր, Բալունի երգասաց Մարօն, Բալունի ոգին, Բալունի երգերն ու բարբառը մտան անմահութեան դրախտը: Դէպի այդ դրախտը առաջնորդող կածանը պատրաստողներ վաչէ Պարսումեանին, փրոֆ. Արուսեակ Սահակեանին եւ սիրասուն կողակիցիս՝ Վիոլէթին սիրազեղ համբոյրներս: Այս գործին հաւատացող եւ սատարող ընկերներու, նաեւ առատաձեռն, խանդավառ մեկենասներուն՝ ամենախոր շնորհակալութիւններս: Այս վերջիններուն անունները կը տեսնէք գրքին սկզբնական էջերուն վրայ:

Յ.Գ. Հատորին ծանօթանալու կամ գայն ստանալու համար՝ դիմել հեղինակին.
E mail: bedovio@earthlink.net կամ հեռաձայն՝ (818) 249 2840:

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ՝ ՅԱՆՁՆԱՌՈՒ ԳՐՈՂԸ (ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿ) 1909-1996

ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԿԻ

Անդրանիկ Անդրեասեան եգա- կի երեւոյթ է ամերիկահայ մեր գրականութեան ներս: Եթէ տարա- գումի տակ պիտի բերենք իր գրական վաստակն ու գրողի դիմա- գիծը, պիտի անպայման ապաւի- նինք մարտնչող, գաղափարապաշտ եւ յանձնառու գրագէտի բնու- թագրման:

Եղեւաբախտ իր սերնդակից- ներուն պէս, ինք ալ Մեծ Եղեռնի տանթէական արհաւիրքներուն մէջ կորսնցուց չապրուած իր մանկու- թիւնը, եւ ամերիկեան նպաստա- մատոյցի որբանոցներուն նուա- ստացնող պայմաններուն տակ ձեւա- ւորեց վաղ պատանութիւնը: Այս երկու բեւեռները, մարդուն եւ գրողին կազմաւորումին եւ յետա- գայ գարգացման վրայ ունեցան վճռական դեր եւ ազդեցութիւն:

Եղեռնը անմարդկային իր ան- դոհանքով դառնութեան անջնջելի իր կնիքը դրոշմեց մատղաշ անոր հոգիին վրայ, մինչ որբանոցն ալ իր ալլապէս տմարդի եւ կեղծաւոր մարդասիրութեամբն ու դաժան վերաբերմունքով կանուխէն առ- կայծեցին ըմբոստութեան անոր ոգին ընդդէմ կաշկանդումի եւ անարդարութեան ամէն տեսակի արտայայտութիւններուն: Վաղա- ժամօրէն ապրուած յոգումնախոռով այս ալեկոծումները հետզհետէ հու- նաւորեցին մարդն ու գարթնող գրողը դէպի անսահման սէրը իր ժողովուրդին, եւ հետեւաբար նաեւ վերագարթնող իր հայրենիքին, գինք գինտորագրեալը դարձնելով Ռամկավար ազատական գաղափա- րախօսութեան: Այս դիրքորոշու- մը, խոր համոզումի արդիւնք՝ դրսեւորուեցաւ խիզախօրէն, ամ- բողջական նուիրումով, ոչ միայն իր բովանդակ կուսակցական եւ լրագրական կեանքի հոլովոյթին ընթացքին, այլ նաեւ մանաւանդ իր գրականութեան մէջ:

Այս բոլորով հանդերձ, Անդ- րեասեան չզարդեցաւ ըլլալէ տա- դանդաւոր, լիւրաւ գրող արձակա- գիրը, որ հարուստ ապրումներու եւ խորթափանց մտածողութեան իր ընտիր պաշարով գինուած, հայերէն լեզուի կուռ ու հիւթեղ գործածութեամբ քանդակեց կեն- դանի տիպարներ հերոսներու, հո- գեբանական իրենց բարդ կառուց- ուածքով եւ մանաւանդ ըմբոստ նկարագիրներ յատկանշուած: Սերն- դակիցն էր ան ամերիկահայ երէց սերունդի գրողներուն՝ Համաստե- դին, Նուրիկեանին, Արամ Հայկա- գին, բայց տարբեր էր անոնցմէ. ոչ թէ աւելի լաւ կամ նուազ, այլ՝ գանոնք լրացնող, ամբողջացնող, մանաւանդ՝ անոնց բաց թողուցա- ծը գոցող: Երբ միւսները, հասկնա- լի պատճառներով Եղեռնի սահմա- կեցուցիչ հոգեվիճակէն չկրցան դուրս գալ եւ հարկադրաբար մշա- կեցին կորսուած հայրենի հողին կակիծն ու կարօտը միայն եւ այդ- պիտով մնացին կաշկանդուած ազ- գային չափազանց նեղ շրջագծի մը մէջ, Անդրեասեան, ինք այդ կա- ցութեան լաւ տուրք տալով հան- դերձ, փորձեց եւ յաջողեցաւ հա- դորդուել եւ ընկալուել նաեւ դուր- սի եւ շուրջի աշխարհով ալ, ընդգր- կելով համամարդկային այժմէա- կան հարցադրումներն ու խմո- բումները: Իրմով, ամերիկահայ գրականութեան բերուեցաւ ամե-

րիկեան շրջապատն ու տազնապ- ներ ալ իրենց կենցաղով եւ հար- ցադրումներով, այլազան տիպա- կան երեւոյթներով եւ տիպարնե- րով: Հայ որբերու եւ աստանդա- կան մարդոց տիպարներու կողքին գրականութեան բերուեցան ամե- րիկացի սեւամորթն ու բանուորն ալ, դասախօսն ու մտաւորականը, գինտորականն ու պահպանողակա- նը, լինջահարողն ու լինջի են- թարկուողը: Քսաներորդ դարը դրդապատկառ համամարդկային բո- լոր խմորումներուն եւ իրադար- ձութիւններուն խոր արձագանգն ալ կը գտնենք Անդրեասեան ընդգր- կումներում մէջ, ինչպիսիք հան- դիսացան Սպանիոյ հանրապետու- թեան պաշտպանութեան հերոսա- կան պայքարը եւ ռուս հայդուկա- յիններու սխրալի հակա-նացիա- կան գործունէութիւնը:

Անդրեասեանի գեղարուեստա- կան գրականութեան հանգրուան- ները հանդիսացան հետեւեալ հա- տորները. Սպիտակ Արդարութիւն՝ 1938, պատուած քներ, Կարմիր Աս- պատակին Օրագրէն, 1947, վիպակ եւ պատմուածքներ՝ Վերջին Կայա- նը, 1956 պատմուածքներ, Տարա- գիր Երկիրքի Տակ, 1967, պատմ- ուածքներ, Երկար Գիշերին Մէջէն, 1947, վէպ, Անմարմին Սէր, 1983, պատմուածքներ, Գերեզման եւ Յա- րութիւն, 1985, վէպ, Դէպի Մայ- րամուտ, 1989, վէպ, Վերածնունդ եւ Վերադարձ, 1993, վէպ: Տակա- ւին պէտքէ յիշատակել Խոհերու, դատումներու եւ վերլուծումներու իր եօթ հատորները, Գերեզման եւ Յարութիւն վէպին անգլերէն եւ Յարութիւն վէպին անգլերէն թարգմանութիւնը եւ նաեւ 1960ին եւ 1984ին Երեւանի մէջ հրատա- րակուած իր երկու ծաղկաքաղ հատորները, ընդհանուր գումար՝ 19 հատոր գիրք՝ դեռ չհաշուած Նոր Օրին մէջ սիւնուած հարիւրա- ւոր քաղաքական եւ գրական յօդ- ուածներն ու խմբագրականները: Պատկառելի հունձք մը՝ արժանի ուշադրութեան:

Ամէն հայ գրողի հարցականը եղած է եւ կը մնայ Մեծ Եղեռնի գրական սեւեռումը: Կատարուա- ծին ահագնութիւնը, մարդկայնօ- րէն անըմբռնելի եղելութիւնը պատ- ճառ հանդիսացան որ չկարենանք արժանաւորապէս գրականութեան բերել մեր ազգային գողգոթի: Եղեռնը ապրողները հարուածին արհաւիրութենէն շրջմով, չկրցան ման- րամասնելու կլանող յաճախանքէն դուրս գալ, ծառին ետեւ փակելով անտառին համապարփակութիւնը: Իսկ յետ-եղեռնեան սերունդը որ լսովի իրագրեկ դարձեր էր ահաւոր իրողութեան, անկարող մնաց երե- ւակայութեամբ նուաճելու աներե- ւակայելին: Այս ենթահողին վրայ, Անդրեասեանին ներդրումը եռա- հատոր իր Փլուզում եւ Վերած- նունդ վէպը դարձեալ մնաց փորձի շրջագծին մէջ, առաւելաբար ոչ համոզիչ, բայց այլապէս օգտակար վաւերաթուղթ մը որպէս:

Այս առնչութեամբ, ուշագրաւ ներդրում մը կը նկատենք իր «Կոտրած Թեւերով Հրեշտակնե- րը» տաս պատմուածքներու շարքը ուր պատմուածքի սեղմ պարունա- կին մէջ սեւեռուած են Եղեռնին հետեւանքը հանդիսացող մեր որ- բերու զանգուածին ողբերգութիւնը: Անդրեասեան յաջողած է մանրա- պատումին մէջ թելադրել տարո- ղութիւնը մեծ նախճիրին որբերու

իրավիճակով, անոնց մատղաշ տա- րիքի հոգեբանութեամբ, կենցաղով ու առօրեայով, քաղցով ու գրկան- քով, տառապանքով ու ծնողքի կարօտով: Ինչպէս մանաւանդ իրենց հանդէպ Ամերիկեան Նպաստամա- տոյցի անարդար եւ անմարդկային վերաբերմունքին որպէս հակադար- ձութիւն խմորուող ընդվզումով: Կ'արժէ մէջ բերել այնքան յատ- կանշական այս հատուածը՝ ան- մարդկայնական վերաբերմունքը պատկերող:

Որբանոցի բակին մէջ հաւա- քեր են որբերը, գիրենք Քորֆուի շրջակայ յոյն գիւղերը այգեկութ- քի աշխատանքներու ղրկելու հա- մար: Տեսուչը կը կարգայ անուա- նացանկը ղրկուելիքներուն.

«Եւ տեսուչը հատ-հատ քա- կեց օղակը անուններու շղթային: Դողահար, անաղմուկ անմրմունջ կը սողային անունները անոր բամբ, շառաչող ձայնին եզերքէն: Բայց յանկարծ հանգոյցի մը անակնկալը ճմլեց իր լեզուն եւ ինք փորձեց արձակել, լուծել զայն.

- Առաքել... Առաքել Մա- նուկ-եան...

Երկարեցան բարակ պարա- նոցները տղոց եւ գալարեցան մօ- տեցող սարսափի մատներուն մէջ:

- Ո՞վ է Առաքել Մանուկեանը, ո՞ւր է այս լակոտը...- Որոտաց այնը ուժգին, ատելավառ:

Բայց թանձր ու խոժոռ ամ- պոտ լուծութեան իջաւ, սահեցաւ առաստաղէն վար եւ գրկեց սրահը իր ստուերով, իր ցուրտով:

- Ծօ անասուններ, ձեզի կ'ըսեմ, չէ՞ք լսեր, ո՞վ է Առաքել Մանուկ- եանը ո՞ւր է ատ...

Սակայն քովընտի անկիւնէն, երկչոտ փախուքի մը հետ, տատա- նեցաւ գլուխներու անտառակը:

Նեղ կանան մը շինուեցաւ եւ ափ մը մարմին ինկաւ դուրս, որուն թեւերէն կը քաշքշէին ըն- կերները: Տեսուչը լսեց նոյնիսկ քանի մը կոտորուածք անոնց քթիմնջիւններէն:

- Մ'ըներ, ծօ, իսենթ մ'ըլ- լար... մ'երթար... շատ բարկացեր է...

Բայց ափ մը մարմինը յառա- ջացաւ բուռ-բուռ:

Եւ զոյգ մը աստղերու արծա- թէ ստուերները, որոնք տժգոյն ցոլքերով կը պլպլային տեսուչին աչքերուն խորը, մերկացան իրենց քողերէն, շողացին, վառեցան, դար- ձան կենդանի կայծեր, դարձան աստղեր բոցարծարծ, դարձան խոր- տակող շանթեր:

- Դո՛ւն ես Առաքել Մանուկ- եանը:

- Ա.. ա.. յո.. պա...

- Շուն-շան-որդի-շան-ձագ... ես երկու ժամ է շունի պէս կը հաջեմ, չե՞ս լսեր, չլսեցիր՞ հա՞

Ու բարձրացաւ տեսուչին հսկայ բազուկը եւ կիսաշրջանակ մը օղակելով օդին մէջ՝ ինկաւ, ծանրօրէն վայրագօրէն, կատաղօ- րէն ինկաւ ափ մը մարմնին ձախ այտին: Թաւազը ինքն իր վրայ չորս անգամ դարձաւ ափ մը մար- մինը առանց հծծիւնի, առանց շիթ մը հեւքի: Հանդերձապահ մը ծրար մը նետեց անոր: Ան մէկ ձեռքը ապտակուած երեսին, միւսով գրկեց կապոցը եւ ծունկերով սողաց դուրս եւ երբ ծածկուեցաւ տեսուչին տե- սողութենէն՝ ցատկեց ոտքի եւ սլա- ցաւ քարափ:

Միայն՝ խորունկ դողի մը մեղմ հովը սահելով անցեր էր մանր գլուխներու անառակին մէջէն»:

Այսպէս, մանր թուացող մի- ջադէպերով, պարզունակ հերոսնե- րու վրձինսով բայց լարուածու-

թեամբ զսպանակուած պահերու ստեղծումով Անդրեասեան կը ներ- կայացնէ այն մանր աշխարհ թա- տերաբեմը որ Ամերիկեան այն օրերու որբանոցները էին ուր կ'ամ- բողջացուէր «Տէր Զօրի պակաս ձգածը»՝ կեղծ բարեգործութեան դիմակին տակ: Անարդարութեան եւ տմարդի վերաբերմունքի հան- դէպ կրաւորական էակներ չեն մնար մանուկ ու պատանի որբերը: Իրենց վտիտ կուրծքերուն տակ բռնկող ընդվզումը, վերածնունդի ոգին է մորթուած ցեղին: Ոգին որ կեանքի դաժանութեան այլ երեսներուն մէջ ալ պիտի միշտ յատկանշուելի եւ դրսեւորուելի: Անդրեասեան շատ դի- պուկ ձեւով արդէն տարագած է այդ նոր դրութիւնը որ հայկական սիրուքը պիտի հանդիսանայ, «Տա- րագիր Երկիրքի Տակ», «Վերջին Կայանը» եւ «Անմարմին Սէր» հատորներով: Ընդհանրապէս հայ սիրուքին եւ մասնաւորապէս ամե- րիկահայ երկփեղկուած իրակա- նութեան բոլոր յատկանշական երե- ւոյթներն ու վերիվայրումներ կը գտնենք այդ պատմուածքներուն մէջ: Կորսուած երկրին միացող կարօտը, գոհուած սիրելիներուն անվերջ մրմուռը, հին օրերուն եւ սէրերուն յուշը տրամանոյշ, տեւա- կան յաճախանքով հալածեցին իր հայ հերոս տիպարները, ինչպէս նաեւ եղբայրասպան կոիւններ տա- ռապեցուցին անոր հոգին որ վե- րածնած հայրենիքի յոյսերով բա- լասանուելի սկսեր էր: Սկիզբէն ան հայ ժողովուրդի փրկութեան որ- պէս կարելի միակ կուռան ընդու- նեց Խորհրդային Հայաստանի գո- յուլթիւնը եւ փարեցաւ անոր, հպար- տացաւ ու հրճուեցաւ անոր նուա- ձումներով,՝ եւ այդ ոգին ու հա- ւատքը սրակեց իր ողջ գրականու- թեան: Վերածնած հայրենիքը լոյ- սի նոր փարօսն էր որ ոյժ ու կորով պիտի ջամբէր ուղեկորոյս հայ մարդուն: Առաւելաբար այս տա- րագին տակ ինկած պատմուածքնե- րուն մէջէն կը ծանօթանանք նաեւ Նիւ Եորքի եւ Ֆրեզնոյի հայ կեան- քին վաւերագրական բնութագրու- մին եւ տեղական գոյնին: Այս պատմուածքներուն մէջ նաեւ կը գգանք լրագրող հրատարակագրին հում միջամտութիւնները, որոնք երբեմն բացառապէս կը շեղեն արուեստին խորացումն ու համոզ- չականութիւնը: Կը տուժէ խորա- թափանցութիւնը:

Բարեբախտաբար, երբ գրողը իր հերոսները կը վերցնէ ամերիկե- ան իրականութենէն, ան կը դառն- նայ շատ աւելի «անկողմնակալ», կը յաջողի զսպել իր արդարադատ մարդու խոռովքը եւ առանց անտե- դի միջամտութեան թոյլ կու տայ որ հերոսներն ու դէպքերը ծաւա- լին իրենց տրամաբանական, ներ- քին ընթացքով: Ամերիկեան պատ- կերներու կարճ բայց դիպուկ այս պատմուածքներուն լրումը պիտի հանդիսանար «Երկար Գիշերին Մէջէն» հոյակերտ իր վէպը, ուր արդիականութեան եւ այժմէակա- նութեան իր յորձանուտ շունչով եւ ջղուտ կշռոյթով պիտի սեւեռուէր ամերիկեան փոթորկայոյց իրակա- նութիւնը տիրական վարպետու- թեամբ: Անդրեասեան, հոն նոր մարդկայնութեան մը, ընկերային ազատագրման ջատագովն է, ինչ- պէս նաեւ կարծիքներու կաշկան- դումին եւ ցեղային խտրականու- թեան դէմ ծառացող մարտնչող քաղաքացի-գրողը: Մեր արցունք- քի, կարօտի միալար գրականու- թենէն ներս ան պիտի ներարկէ

ԲԱԲԳԵՆ Ա ԱԹՈՌԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՆԻԿԻՈՅ

Շարունակում է 14-էն

Կաթողիկոս Կիրիլիոս տէրն էր նաև Երուսաղեմի աթոռին»:

Ազարիա Ջուղայեցի Կաթողիկոս Երկրորդ, Բաբգէն Կաթողիկոս իր այս հատորին մէջ լայն տեղ տուած է նաև 16-րդ դարուն գահակալող Ազարիա Ջուղայեցի Կաթողիկոսին գոր «ամենէն նշանաւոր կաթողիկոսներէն մին» կը նկատէ, «որուն կեանքը անդադրում գործունէութիւն մը եղած է իբրև ուսուցիչ եւ իբրև կաթողիկոս», Սիսի Աթոռը պայծառացնելով 17 տարի (1584-1601): Ջուղայեցի օրով Երուսաղեմի Աթոռին պարտքերը ծանրացան մոլեռանդ բռնատէրերու հարստահարութեանց պատճառով, ինչպէս նաև Կ. Պոլսոյ կեդրոնական կառավարութեան ազատութեան հետեւանքով: Ուստի, Ազարիա Կաթողիկոս շրջած է հայաշատ կեդրոններ հանգանակութիւն ձեռնարկելու համար, երթալով մինչև իր ծննդավայրը՝ Հին Ջուղայ, ուր անձամբ «ժողովեցին բազում եւ անհամար գանձս ոսկուց եւ արծաթոց», հետն առնելով երկու պատուաւոր եպիսկոպոսներ՝ Սրապիոն Ուռհայեցի եւ Պետրոս Կարկառեցի:

Կիրիլիոս Ազարիա Կաթողիկոս յայտնի եղած է նաև Հռոմի հետ մշակած իր յարաբերութեամբ, երբ Գրիգոր ԺԳ Պապի կողմէ ձեռք կ'առնուէր արեւելքի եկեղեցիները Հռոմի միացնելու ծրագիրը: Ազարիա որպէս «ուղղափառ եւ հաւատարիմ վարդապետ Հայաստանեայց Եկեղեցուց», ըստ Բաբգէն Կաթողիկոսի, պաշտպան կանգնած է իր եկեղեցիին ու նաև զգուշաւոր յարաբերութիւն պահած Հռոմի Պապին հետ: Սակայն Կիրիլիոսեան հակասութեան մէջ կ'իյնայ երբ կը մէջբերէ Ազարիայի գրած «վաւերական» նամակը նոյն Գրիգոր ԺԳ Պապին, ուր ան «հնազանդութիւն» կը յայտնէ «Հռոմի եկեղեցուց եւ անոր առաքելական օրհնութիւնն ու հաստատութիւնը կը խնդրէ» Կիրիլիոս կաթողիկոսութեան վրայ»:

Լատիններուն կողմէ կեղծուած «Դաշանց Թուղթ» մը յերիւրուած էր Կիրիլեան թագաւորութեան շրջանին որուն համաձայն իբր թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հռոմի Սեղբեստրոս Պապին մօտ գացած էր եւ իր հնազանդութիւնը յայտնած չորրորդ դարու սկիզբը: Ութ հարիւր տարիներ ետք շինծու այդ «Թուղթ»ը ուրեմն Հայ Եկեղեցուց Հռոմի եկեղեցիին «հպատակութիւնը» մը ցոյց կուտար իբր թէ՛ Ստուգուած է որ «Թուղթ»ը յետագային գրուած ըլլալով արժէքէ բոլորովին գուրկ է: Այսքանը պարզեցինք ըսելու համար որ Կիրիլիոս Ազարիա Կաթողիկոսը այդ կեղծուած «Թուղթ»ին ակնարկելով «գայն մենք ալ կ'ընդունինք» ըսած է, եւ թէ «կը փոշմանինք անցածին վրայ, կ'ուրախանանք սպագային համար» աւելցնելով:

«Ձայն կ'ընդունինք» ըսելով Ազարիա Կաթողիկոս մեղանչած կ'ըլլայ Հայ Եկեղեցուց ուղիղ դաւանանքին ու ինքնանկախ գոյութեան դէմ: Ձարմանալի կերպով Բաբգէն Կաթողիկոս կողմնակալ ըլլալով Ազարիայի, չենք գիտեր ինչ պատճառով, կ'այսպէս իր այս գիրքին մէջ Մաղաքիա Օրմանեան եւ սրբապետ Մուղղե Օրմանեանի գրածները Ազարիայի մասին «իբրև կաթողիկոսացած մէկը», պատճառաբանելով որ Օրմանեան «Ազգապատում»ները գրած

ատեն չէր տեսած Դարանաղեցիի «Ժամանակագրութիւնը» որ կը ժխտէ Ազարիայի նկատմամբ ամէն հակում դէպի Հռոմ:

Այս բոլորով մէկտեղ վերոյիշեալ «վաւերական» նամակը որ «հնազանդութիւն» կը յայտնէ Հռոմի Պապին, լեցուն է Հռոմի հանդէպ ցոյց տրուած ենթակայութեան եւ հնազանդութեան լիաբերան օրհնութիւններով, եւ երբեք չարդարացնէր Ազարիայի «ուղղափառութիւնը», որուն համար Բաբգէն Կաթողիկոս տկար եւ անցողակ պատճառաբանութիւն մը տուած է միայն, ըսելով որ «Ազարիա հարաւոր գիշտումներ ըրած է վատիկանին՝ անկից քաղաքականապէս օգտուելու յոյսերով», որոնք սակայն մնացին բոլորովին սպարդիւն, ինչպէս Բաբգէն ինք կը հաստատէ:

«Էջմիածին եւ Սիս»

«Էջմիածին եւ Սիս» յաւելուածը կարճ գրութիւն մըն է 1441 թուի Կիրիլիոս եւ Էջմիածնի կաթողիկոսներու շարժումը կանխող դէպքերու քննութեամբ զբաղող: Աթոռին վերադարձը եւ նոր կաթողիկոսի մը ընտրութիւնը Էջմիածնի մէջ նոյն տարին, Երեւանի Պարսից Աղուպ պէյին արտօնութեամբ կարելի եղած էր: Էջմիածնի մէջ ընտրած եւ օծած էին Կիրակոս Վիրապեցի Կաթողիկոսը, որ իր բարձրագի դիրքով ճանաչուած շնորհած էր Սիսի մէջ նստող Գրիգոր Մուսաբեկեան Կաթողիկոսին, վերցնելով նաև Աղթամարի կաթողիկոսութեան վրայ դրուած բանադրանքը:

Հատորի վերջաւորութեան Բաբգէն Կաթողիկոս Սիսի եւ Էջմիածնի յարաբերութեան խնդիրը իր բազմերես բովանդակութեամբ կը լուսաբանէ սպառիչ կերպով: Անոնց մէջ կարեւորներն են՝

- «1441-ի շարժումին պատմական պատճառները»

- «Էջմիածնի Աթոռին վերահաստատութիւնը եւ Գրիգոր Մուսաբեկեան»

- «Կիրիլիոս Սիմէոն Կաթողիկոսի թուղթը առ Փիլիպպոս Աղբակեցի Կաթողիկոս Էջմիածնի»

որոնք թէ՛ իբր բնագիր եւ թէ՛ իբր պատմական վերլուծում մեծ արժէք կը ներկայացնեն Հայ Եկեղեցուց գոյգ Աթոռներու յարաբերութեանց խնդրոց մէջ: Հիմնական վերլուծում մըն է նաև Սիսի եւ Երուսաղեմի յատուկ բաժինը ուր կը խօսուի պատմական յարաբերութեանց եւ բազում այլ կանոնական հարցերու մասին, եւ կ'ակնարկուի Երուսաղեմի 1652 թուականի ժողովին՝ ընդմէջ Սիսի Ներսէս Սեբաստացի եւ Էջմիածնի Փիլիպպոս Աղծբեկցի կաթողիկոսներուն, որոնք համաձայնաբար կանոնական կէտեր մշակեցին Աթոռներուն իրաւասութիւնները ճշդելու համար:

Արեւելեան Վարդապետները

Աթոռի վերադարձի ետին կար միշտ Հայաստանի արեւելեան վարդապետներու նեցուկը, որոնք այլևս Կիրիլիոսի չէին ընդունել որպէս կեդրոն հայոց հայրապետութեան, քաղաքական դժբախտ պարագաներու բերումով: Թող որ Երեւանի քաղաքական կացութիւնն ալ անկէ աւելի յուսատու չէր 1441 թուականին: Բաբգէն Կաթողիկոս կը շեշտէ Հայաստանի արեւելեան վարդապետներուն դաւանական եւ վարդապետական անգիշող դիրքը՝ հանդէպ յոյն եւ լատին ազդեցու-

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԵԱՍԵԱՆ

Շարունակում է 16-էն

լաւատես մարտունակութիւն եւ անսովոր աշխոյժ, իր էջերը լայն բանալով դարի ոգին եւ մեծ խմորումներուն առջեւ: Հայկական «կեթոյ»էն դուրս ելած ենք իր մով:

Նորութիւնը հոս այլացեղ հերոսներուն կամ օտար միջավայրին ընտրութիւնը չէ միայն: - Քիչ թէ շատ ուրիշներ ալ սեւեռած են գանտք: Շահնուր, Շուշանեան, Որբունի: Բայց Անդրէասեանի վիճակուեցաւ իմացական եւ հոգեկան միաձոյլ կառուցի մը մէջ, ամբողջական սրութեամբ մեր գրականութեան բերել արդի մարդուն ամենակենսական հարցադրումը՝ խօսքի, մտածումի եւ խղճի ազատութիւնը, գայն դարձնելով վէպին գլխաւոր լծակն ու տաղանակը: Ե՛ի ասիկա՝ այնպիսի ժամանակի մը ընթացքին, երբ Մաք Քարթիզմը միահեծան ու ուժական թափով կը սարսուցնէր ողջ Ամերիկան, եւ նուազագոյն քննադատութիւնն ու դիտողութիւնը կ'ընար ձեռքաւարման եւ արգելափակման ծանր հետեւանքներ ունենալ գրողին համար: Վէպին նիւթն ալ այդ հերոսական կեցուածքին սիրանքն է: Մաք Քարթիզմը հաւատաքննական իր ծանր թաթը դրած է Համալսարանին վրայ եւ հրապարակային դատավարութիւններով կը փորձէ կացինահարել կրթական դարպասէն ներս ազատ միտքի ամէն փորձ: Փրօֆ. ձէյմս Պրուքս գլխաւոր ամբաստանեալ նոխսան է եւ ըստ այնմ ընտանիքն ալ՝ թիրա-

խը առօրեայ հալածանքներու: Փորձութեան մէջ ոմանք տկարանալով նոյնիսկ կը դիմեն մատնութեան նսեմացումին: Բայց շնորհիւ Պրուքսին, ընտանեկան անդամներուն եւ ուսանողութեան արի, կորովի եւ միակամ կեցուածքին դաւադրութիւնը կը ձախողի:

Ահա այս կառուցին վրայ, Անդրէասեան յաջողած է կերտել իրաւ աշխարհ մը տիպարներու, հոգեվիճակներու եւ մթնոլորտի, ուր գործողութիւնը առաջ կը տարուի ոչ միայն դէպքերու լարուած թաւալքով այլ նաև մանաւանդ գաղափարներու, նկարագիրներու եւ կեցուածքներու բախումով եւ բացայայտումով: Հոգեբանական դիտողականութիւնը համոզիչ խորութեամբ պեղուած է հոն, եւ հերոսներուն անդրադարձում կեցուածքն ալ արդիւնք է ներքին մաքառումներու լրումին: Միջավայր, տեղական գոյն, գործող հերոսներ, դէպքեր եւ գործողութիւն՝ բոլորը ամբապէս շաղախուած են գաղափարական զօրաւոր ցիմենթի մը բաղադրութեամբ եւ միաձոյլ ամբողջութիւն մը կը կազմեն: Ունին նաև թելադրական ուժգնութիւն:

Վէպը հաշտեցումն է երկու անհաշտ նկատուած եզրերու. գրականութեան եւ քաղաքականութեան: Անդրէասեանի գրականութեան գեղեցիկ շունչը յաջողած է հոս ներագդել եւ տեղին զսպել քաղաքականութեան թափն ու սլացքը, գայն ներմուծելով վէպին մէջ, դարձնելով անոր կարեւորագոյն լծակն ու յենասիւնը:

Թեանց: Անոնք մասնաւորաբար Սիւնեաց եւ Հաղբատի դպրոցներուն վարդապետներն էին որոնք կը ծառանային Հայ Եկեղեցուց անունով՝ ընդդէմ այն ձեռնարկներուն որոնք յոյն եկեղեցուց մօտենալու կամ յուսադաւան ըլլալու վտանգը կը սպառնային: Բարեբախտաբար, կ'ըսէ հատորի հեղինակը թէ «Կիրիլիոս դարպասը միշտ հաշուի կ'առնէր արեւելեան Հայաստանի կամքն ու կարծիքը եկեղեցական խնդիրներու մէջ», մանաւանդ Բջնիի, Հաղբատի, Տաթևի եւ Արտագի աթոռներու հեղինակութիւնները, որոնք արեւելեան Հայաստանի պաշտօնական բերանը համարուեցան կաթողիկոսներու ընտրութեանց մէջ»:

Հայաստան անշուշտ քաղաքականապէս անկախ էր Կիրիլիոսին, եւ այդ պատճառով հայաստանցիք անվարան կը պայքարէին ու երբեք տեղի չէին տար Կիրիլիոս պետական ճնշումներուն: Մինչդեռ Կիրիլիոս մէջ տեղուց քաղաքականութեան համընթաց հայեր յոյնին հետ յոյն կ'ըլլային, լատինին հետ լատին, թաթարին հետ թաթար, եւ

փոխադարձ ինամիութիւններով կ'ամբապնդէին իրենց քաղաքական դիրքը յանուն Կիրիլիոս թագաւորութեան, եւ սակայն ի վնաս Կիրիլիոս կաթողիկոսութեան եւ առհասարակ Հայ Եկեղեցուց, որուն պաշտպաններ եթէ իրենք կաթողիկոսները չէին, ուրեմն Հայաստանի արեւելեան վարդապետները պիտի ըլլային:

Եզրափակում

Վերջին յօդուածով Բաբգէն Կաթողիկոս մանրամասն պատմականը կ'ընէ Լուսաւորիչ Աջին եւ գայն պահպանող Աջապահներուն, որոնց սերունդէն շարք մը հոգեւորականներ Կիրիլիոս կաթողիկոսական գահ բարձրացան: Իր ամբողջութեանը մէջ Բաբգէն Կաթողիկոսի այս մեծագիր հատորը միակն է որ կ'ընդգրկէ Կիրիլեան պատմական Աթոռին վաւերական եւ ամբողջական պատմութիւնը, գայն հասցնելով մինչև մեր օրերը՝ Կաթողիկոսութեան ներկայ կայքը՝ Անթիլիասի մէջ գործող Երուսաղեմի Կաթողիկոս իր կեանքի վերջին տարիներուն:

ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91107
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով:
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ԴԱԲԱՃԱՆՈՒԹԻՒՆ ԶԵ՛ ԱՐԴԵՕՔ՝

Շարունակում էք 6-էն

Թէ բոլոր կողմերը եզակական ծոփուն...:

Հարիւր տարիներ առաջ, 1909թ. Օգոստոսին, ՀՅԴ-Երիտ-թուրք գործակցութեան դաշինքին 3-րդ կէտը կ'ըսէ՝ «Օսմանեան նուիրական հայրենիքը անջատում է եւ բաժանում է գերծ պահելը՝ երկու կողմերու միացեալ գործունէութեան նպատակակէտը ըլլալով անոնք պիտի աշխատին՝ գործնականապէս, ցրել՝ հանրային կարծիքին մէջ բռնակալ ռեժիմին (Համիտեան (ժառանգ մնացած, այն սուտ գրոյցները՝ Թէ հայերը անկախութեան կը ձգտին...»: Այս գործակցութիւնը իբր թէ կը հիմնուէր՝ ազատութեան, հաւասարութեան եւ եղբայրութեան գրաւիչ կարգախօսներուն վրայ...: Իսկ 1910 թ. Օգոստոսին, Թալէաթ փաշան հետեւեալ իմաստով կը հասկնար «եղբայրութիւն»ը եւ «հաւասարութիւն»ը. «Թուրքիոյ մէջ, հաւասարութեան մասին միայն այն ատեն կարելի կ'ըլլայ խօսիլ, երբ բոլոր տարրերն ալ կը ձուլուին, օսմանցի կը դառնան», այսինքն երբ բոլոր ազգութիւնները կը թրքանան: (Տես՝ Մուշեղ Սերոբեան, «Հայկական Միջառնակ», էջ 33):

Եւ ներկայիս, այսպէս կոչուած Թուրքիոյ վարած «բացուելու» թաքթիքայի եւ «միջնորդական» քաղաքականութեան ողջ կեղծիքը կը բացայայտեն նոյնինքն Թուրք եւ օտար գրողները: Այսպէս՝ «Հիւրերիցի»ի ծանօթ սիւնակագիր Ֆաթիհ Չեքիրկէ, թերթի 2009թ.

Սեպտեմբեր 21-ի համարին մէջ, մեկնաբանելով արտգործնախարար Ահմէտ Տաւուսօղլուի վարած «բացուելու» քաղաքականութիւնը, կը դիմագերծէ զայն հետեւեալ բառերով՝ «Թուրքիոյ շուրջ բոլորը գտնուող երկիրները, մեծամասնութեամբ, մինչեւ օրս թրշնամական վերաբերմունք ունէին մեր երկրին դէմ, ինչ որ «վախի երկիր»ի վերածած էր Թուրքիան: Ան ինքզինք բանտած էր զինուորական սահմանափակումները մէջ, Սուվետ Միութեան, Իրանի, Իրաքի, Սուրիոյ, Յունաստանի եւ Կիպրոսի հետ: Եւ այդ սահմանային գիծերուն երկայնքին ցանուած էին նաղմեր եւ ականներ...: Այժմ, Ահմէտ Տաւուսօղլու կը փորձէ՝ յեղաշրջել իրերու այս վիճակը ի նպաստ Թուրքիոյ, ԱՌԱՅՅ ՅԻՇԱՍԱԿԵԼԻ ՆԻՇԱՒԵԼԻ ԹՇՆԱՒԵՐԻ ԿԱՍԱՐԵԼԻ ԹՇՆԱՒԵՐԻ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ, վարելով «բացուելու» դիւանագիտութիւն մը, վերադառնալու համար Օսմանեան Սուլթանութեան ժամանակներուն՝ նոր տարագով մը, այս անգամ՝ հաւանաբար, առանց խալիֆայի»:

Տասն օր առաջ արդէն, նոյն թերթի մէկ ուրիշ սիւնակագիրը՝ Ֆուրա Էօզէրքան, կարծիք քննադատութեան կ'ենթարկէր Թուրքիոյ «միջնորդական» դիւանագիտութիւնը ընդմէջ՝ Սուրիոյ եւ Իսրայէլի, Ռուսիոյ եւ Վրաստանի, Սուրիոյ եւ Իրաքի եւ... մինչդեռ ինք կը կարօտէր ու կը դիմէր՝ նոյնատեն, Չուրիցերիոյ միջնորդութեան՝ Թուրքիա-Հայաստան յարաբերութեանց մէջ: Եւ, ինչ որ առաւել ծանրակշիռն է, Ֆուրա Էօզէրքան կը դիմագերծէ Թուրքիոյ հետապնդած անդրագոյն նպատակը, գրելով՝ Թէ Թուրքիա «կը նպատակադրէ Օսմանեան Սուլթանութեան

վերադարձը՝ իսլամական աշխարհ...»:

Իր հերթին, բրիտանական 'The Economist'ը՝ իր 5 Սեպտեմբեր 2009 թուականակիր համարին մէջ, դիմագերծած էր Թուրքիոյ «բացուելու» թաքթիքայի ողջ կեղծիքը, եւ կը թուէր՝ այս ճամբով անոր հետապնդած անմիջական եւ ապագայ նպատակներն ու ծրագրերը, մասնաւորաբար՝ «Ապահովել Սերժ Սարգսեանի Թուրքիա այցելութիւնը, հակառակ՝ հայկական ընդդիմութեան, եւ՝ աւելցնելով ԵՄ մուտքի իր շանսերը...»: Իսկ 'Foreign Policy» ամսագրի 2009 թ. Օգոստոսի համարին մէջ լոյս տեսած տարեկան Տեղեկագիրը՝ 177 պետութիւններու անկախութեան աստիճաններու դասաւորումին շուրջ, Ատրպէյճանին ու Թուրքիոյ վերապահած էր՝ յաջողաբար, 56-րդ եւ 85-րդ դիրքերը, մինչդեռ Հայաստանին կը վերապահէր 101-րդ դիրքը: Այլ խօսքով՝ Հայաստան կը վայելէր Ատրպէյճանին ու Թուրքիային աւելի մեծ աստիճանի կայունութիւն մը... ինչ որ կը վկայէր Ատրպէյճանի եւ Թուրքիոյ դիմագրուած ներքին սուր տագնապին մասին: Անկախութենէ տառապող 177 պետութիւններու առաջին կէսին մէջ կը գտնուին մեր երկու թշնամիները, մինչ Հայաստան կը գտնուի երկրորդ կէսին մէջ:

Ի դէպ՝ Թուրքիոյ փանթուրքիստական գործընկերը, կամ՝ անոր տին, զան վէ տիլ գարտաշըն, Ատրպէյճանը եւս իր ներքին անկայունութեան 56-րդ աստիճանի դիրքով, կը գտնուի ոչ նախանձելի վիճակի մէջ եւ կը դիմագրաւէ տագնապեր, բացի՝ Արցախէն, որոնցմէ մէկն է միայն դրացի Տաղատանի մէջ գործող «Կովկասի էմիրութիւն» կոչուող սիւնիթ կազմակերպութեան մուճահիտներու բանակը, որ հողային պահանջներ կը ներկայացնէ Ատրպէյճանին՝ մինչեւ Պաքու տարածուող 7-էն 12 շրջաններու կապակցութեամբ:

Այս պահանջներուն շուրջ վէճը յաճախ կը զգենու զինեալ բախումներու ձեւը: Այդ բախումներէն մէկն էր 2009 թ. Սեպտեմբեր 20-ի զիշերին տեղի ունեցած զինեալ բախումը երկու կողմերուն միջեւ:

Այս զինեալ բախումներուն զարգացումները կը հրապարակուին jamaat-shariat.com կայքէջին վրայ:

Թուրքիոյ ներկայի տնտեսութեան դիմագրաւած սուր տագնապին մասին կը վկայէ ան փաստը, որ այսօր՝ համաձայն Թուրքիոյ Ընկերային Ապահովութեան Ծառայութեան վերջին Տեղեկագրի տուեալներուն, որ վստահաբար գրաքննուած ու մեղմացուած է...

Թուրքիոյ մէջ ապրող գործազուրկ աշխատաւորներուն թիւ 11 միլիոն է: Այս թիւը՝ Թուրքիոյ մէջ ապրող բնակչութեան ընդհանուր թիւին հետ համեմատած, խիստ վտանգաւոր թիւ մըն է: Եթէ՝ բացարձակ թիւերով, այս երկրի քաղաքացիներու (հպատակներու) ընդհանուր թիւը ընդունինք 72 միլիոն, եւ երկրին մէջ մնացողներունը՝ միայն 58 միլիոն, 11 միլիոնը 58-ի 19 տոկոսն է...: Թուրքիոյ ԵՄ մուտք գործելու ճիգերը զսպանակուած են այս թիւին պատճառով մտահոգութեամբ: Ան կ'ոզէ եւրոպական երկիրները արտահանել իր գործազուրկ աշխատաւորները...:

Սակայն, 2009 թ. Հոկտեմբեր

4-ին, Յունաստանի մէջ կայացած խորհրդարանական ընտրութիւններուն մէջ յաղթական դուրս եկաւ ձախակողմեան ընկերվար ՓԱՍՕՔ կուսակցութիւնը, որ հակաթրքական կեցուածք ունի, եւ հետեւաբար, հիմնովին շրջեց՝ նախորդ «Նոր Դեմոկրատիա» կոչուած եւ Քոսթաս Քարամանլիսի ղեկավարութեամբ գործող աջակողմեան կուսակցութեան թրքամէտ եւ ամերիկամէտ օրինաթացիան, եւ ամուր կառչած մնաց յունական ազգային հողային իրաւունքներուն՝ Կիպրոսի եւ Եգէականի կողմերուն վրայ... եւ՝ բնականաբար, դէմ պիտի քուէարկէ Թուրքիոյ ԵՄ մուտքին:

Տարականոն թուացող բայց իրաւ գուզողիպութեամբ մը, միայն եօթն օր առաջ, 2009 թ. Սեպտեմբեր 27-ին, Գերմանիոյ մէջ կայացած խորհրդարանական ընտրութիւններուն, այս անգամ ալ յաղթական դուրս եկած էին Անճելա Մերքելի ղեկավարեան կուսակցութիւնը եւ Կիտո վեյթերվելլէի ծայրայեղ աջ կուսակցութիւնը, ինչ որ վերջնապէս դուռը փակեց Թուրքիոյ ԵՄ մուտքին առջեւ...: Յիշեցնենք՝ որ Ֆրանսա եւս կարուկ կերպով կ'ընդդիմանայ Թուրքիոյ ԵՄ մուտքին, եւ Գերմանիոյ հետ միասին կը հանդիսանան ԵՄ ծանրութեան կեղրոնը: Գերման ծայրայեղ աջ «Ազատական Դեմոկրատիա» կուսակցութեան ղեկավարը, որ երկրի արտգործնախարարն է, յաղթանակէն անմիջապէս ետք յայտարարեց՝ «Ես Թուրքիոյ ԵՄ մուտքին համար ոչ մէկ հիմք կը տեսնեմ: Այդ երկրի տնտեսութիւնը չի կրնար մերուիլ Եւրոմիութեան միւս երկիրներու տնտեսութեանց...»:

Այս, եւ տակաւին տասնեակ մը այլ ժխտական գործօններ, բացի Թուրքիոյ ինքնութեան մնացուն սուր տանգապէն, որուն հիմքը կը կայանայ իր տարատնկեալ ու բազմատարր ըլլալու փաստին մէջ, հրապարակ ելան ցիւրիիսեան փրոթոքըներու նախաստորագրութեան անմիջական նախօրէին... եւ, հակառակ հակաթրքական այսպիսի գործօններու բազմացումին, ՀՀ իշխանաւորները՝ ստորագրելով այդ ակնուած ու նաղմուած փաստաթուղթերը, փաստօրէն օժանդակեցին տագնապահար թշնամիին... դաւաճանութեան համագործանութեամբ, թեթեւամտութեամբ եւ ամերիկեւսիտնամէտութեամբ... հրաժարելով՝ ռազմավարական ու աշխարհաքաղաքական հաստատուն (constant) մը հանդիսացող ռուսամէտ օրինաթացիայէն:

Եւ ասիկա՝ այնպիսի պահու մը, երբ ամերիկեւսիտնական ազդեցութիւնը տարածաշրջանին մէջ, կ'արձանագրէ՝ զգալի չափերով, նահանջ մը: Տեղական Սաֆիրը՝ օրաթերթի իմբագրութեան պատասխանատու եւ սիւնակագիր Սաթէ' Նուրետտին, թերթի 2009 թ. Սեպտեմբեր 22-ի համարին մէջ՝ «Ամերիկայի նահանջը Լիբանանի մէջ» խորագրին տակ կը գրէ՝ «Ամերիկայի այս նահանջը՝ ոչ միայն Լիբանանի, այլեւ՝ ամբողջ տարածաշրջանին մէջ, խիստ մտահոգիչ հանգամանք մըն է, քանի որ ասիկա առիթ կ'ընծայէ շրջանային հզօր պետութիւններուն, եւ մասնաւորաբար՝ Թուրքիոյ... որպէսզի ան յաջողի ժառանգել՝ տարածաշրջանին ու Լիբանանի մէջ Ամերիկայի ցարդ խաղացած ԺԽՏԱԿԱն դերակատարութիւնը: Ճիշդ է՝

Թէ Ամերիկայի մխրճումը այս տարածաշրջանին մէջ, ԱՆՎԻՃ ԵԼԻՕՐԻՆ ԱՂԵՏԻ ՄԱՏՆԵՅ շրջանը ամբողջ. սակայն այսօր՝ Ամերիկայի ետգարձը եւ հեռացումը տարածաշրջանէն, դրական լուծումի մը յանգելու գրաւականը չունի...: Քանի որ այս ետգարձը հրապարակը կը բանայ տարածաշրջանի յարաբերաբար աւելի հզօր պետութիւններուն առջեւ՝ որպէսզի անոնք ԴՈՒՐՍ ԵԼՆԵՆ իրենց սահմաններէն, եւ՝ ՀԵՏԱՄՏԻՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԵԾ ՇԱՀԵՐՈՒ...» եւ ...ծաւալողական մեծ ծրագրերու, այնքան ատեն որ շրջանի արաբական վարչակարգերը ձեռնպահութեան մէջ կը գրտնուին եւ պատրաստ են՝ իրենց գոյացուցած «քաղաքական պարպալ»ը լեցնող որեւէ ուժի հետ ՀԱՄԱԿԵՐՊԵԼՈՒ...: Հետեւաբար, ինչո՞ւ ծաւալապաշտ Թուրքիան, ԱԿՔ-ի օրով, պիտի չձգտէր վերականգնելու Օսմանեան իսլամ Սուլթանութիւնը, «բացուելու» թաքթիքայի լաչակը գլխին...:

Աճապարարութեան նմանող դիւանագիտութեամբ մը՝ Թուրքիա այսօր կը յաջողի օգտագործել բոլոր կողմերու թոյլ օղակները, յառաջ տանելով՝ իրեն համար փրկարար Նոր Օսմանական ծրագիրը:

Աճապարարութեան օրինակ մըն է՝ 2009 թ. 17-21 Օգոստոս երկարող օրերուն համար նախածրագրուած ԱՄՆ-Իսրայէլ-Թուրքիա ռազմափորձերուն ՅԵՏՍ ԿՈՉՈՒՄԸ, գործարկական դիւանագիտութիւնը յաջողեցաւ ներկայացնել որպէս՝ Թուրքիոյ ՄԵՐՇՈՒՄԸ ԸՆԴ-ՀԱՆՐԱՊԵՏ, Իսրայէլի հետ միասին ռազմափորձեր կատարելու սկզբունքին: Մինչդեռ, իրականութեան մէջ, Թուրքիա պարզապէս ԱՌԱՋԱՐԿԵՑ ԵՄ ՅԵՏՍԱԶԳՈՒՄԸ այդ ռազմափորձերուն, ատոնց թայմինկին միայն առարկելով..., եւ սակայն ստեղծելով սկզբունքային մերժումի տպաւորութիւնը...: Իրականութեան մէջ, ոչինչ փոխուած է ամերիկեւսիտնաթրքական անսուրբ երրորդութեան դաշինքէն, ինչ որ կը հաստատուի աւելի ցայտուն օրինակովը Չուրերու տագնապին...: Այդ օրինակն է՝ 2009 թ. Սեպտեմբերին, Անգարայի մէջ գումարուած ժողովը, Տիգրիս եւ Եփրատ միջազգային գետերու Չուրերու Թուրքիոյ, Իրաքի եւ Սուրիոյ միջեւ բաշխումի չափաբաժիններուն շուրջ: Այս ժողովին կը մասնակցէին երեք պետութիւններու Չուրերու նախարարները: Թրքական կողմը, ժողովի նախօրէին եւ բացման նիստին իսկ՝ մոռնալով, այլ՝ անտես առնելով՝ «բացուելու» թաքթիքան ու «միջնորդական» դիւանագիտութիւնը..., կոպտօրէն՝ եւ առանց որեւէ վարանումի կամ այլայլումի, յայտարարեց՝ Թէ այս երկու գետերը միջազգային գետեր չէին, այլ՝ բացառապէս թրքական...: Եւ հետեւաբար, Իրաքն ու Սուրիան ոչ մէկ ձեռով կրնան երկու գետերու Չուրերու բաշխումի հարց յառաջացնել եւ պահանջել՝ բաշխումի չափաբաժին: Այս դիմակաւոր Թուրքիան՝ որ «միջնորդական» դերի մը կը յաւակնի, Իրաքի եւ Սուրիոյ միջեւ, իբր թէ որպէս երկու երկիրներուն ալ «բարեկամ»ը..., ահա՛ ցոյց կու տայ իր իսկական դէմքը, եւ կը մերժէ ճանչնալ իր երկու «բարեկամներուն» Միջազգային Հանրային Իրաւունքի նորմերով հաստատուած իրաւունքը այդ Չուրերուն մէջ: Բայց ինչո՞ւ այս կոպտիտ շրջադար-

ՀՈԳԵՎԱՆԳԻՍ



ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ) ՖԵՐՄԱՆԵԱ

ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ) ՖԵՐՄԱՆԵԱՆԻ մահուան տասներորդ տարեկիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 24 Յունուար, 2010ին, Ս. Պետրոս Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, յաւարտ Ս. Պատարագի:

Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

Սգակիրներ՝
Տէր եւ Տիկ. Արա Ֆերմանեան
Վիզէն Գուլումճեան

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

Խոր ցաւով իմացանք ծանօթ ազգային ԻՍԱՀԱԿ ԵՐԵՒԱՆԵԱՆԻ մահը, որ պատահած է Հինգշաբթի Յունուար 7ին: Թաղումը տեղի ունեցած է Յունուարի 13ին, Հոլիվուտի Ֆորըստ Լոն գերեզմանատան մէջ:

«Մասիս»ի խմբագրական կազմը իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի գաւակներուն, ազգականներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն:

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

Ծերունագարդ մտաւորական, բանաստեղծ, ազգային-հասարակական գործիչ ՏԻԱՐ ԻՍԱՀԱԿ ԵՐԵՒԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով, Կիրակեան Կրթական Միութեան Կեդրոնական Վարչութիւնը ներկայովս կու գայ յանուն բոլոր կիրակեանցիներուն, իր խորագրաց ցաւակցութիւնները յայտնելու, հանգուցեալի գաւակներուն եւ համայն հարազատներուն ու բարեկամներուն, յատկապէս Կեդրոնական Վարչութեան անդամ Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Սաթօ Գարածրճեաններուն:

Հանգուցեալը վարած է ազգային պաշտօններ, եղած է միշտ խաղաղասէր ու հաշտարար, հրապարակած է 3 հատորներ, ստորագրած է բազմաթիւ յօդուածներ եւ բանաստեղծութիւններ: Իր մահով կը կորսնցնէր դաժան գաղթականութեան վերապրող սերունդէն, ազգանուէր եւ հայրենասէր տիպար անձնաւորութիւն մը, որուն յիշատակը անթառամ պիտի մնայ իր գաղափարի ընկերներուն, հարազատներուն, բարեկամներուն եւ բոլոր զինք ճանչցողներուն սրտերուն մէջ:

Թող Աստուած անոր հոգին երկնային արքայութեան արժանի ընէ:

ԿԻԼԻԿԵԱՆ ԿԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ

Տիկին Սառա Սաղրեան-Շիշմանեան իր ամուսնոյն ՍԱՄՈՒԷԼ ՇԻՇՄԱՆԵԱՆԻ մահուան առթիւ որպէս շնորհակալութիւն եւ յիշատակութիւն \$100 տուար կը նուիրէ «Մասիս»ին:

ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ

Տիկին Նեկտար Մոմճեան եւ իր գաւակները, առ ի գնահատանք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան «Երուանդ Պապայեան» մանկավարժական հիմնարկի ազգօգուտ գործունէութեան, \$1000 տուար կը նուիրեն հիմնարկին, Պրն. Երուանդ Պապայեանի վերջերս լոյս տեսած «Պէտք է Մոռցուին» գիրքին առիթով:

Գուճարը ստացուած է շնորհակալութեամբ:
Յանուն ՀԲԸՄԻ «Երուանդ Պապայեան» մանկավարժական հիմնարկի՝
Փրոֆ. Միհրան Աղապեան
Փրոֆ. Սիլվա Գարայեան

ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԱՆՔ

Մեր թերթի ներհուն աշխատակիցներէն՝ Դոկտ. Փրոֆ. Գէորգ Խրլոբեան շրջանէ մը ի վեր հիւանդ ըլլալով այժմ հիւանդանոց փոխադրուած է եւ ենթակայ է բժշկական լուրջ հոգածութեան:

Շուտափոյթ եւ կատարեալ առողջութիւն կը մաղթենք վաստակաշատ մտաւորականին:

ԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԶԵ՞ ԱՐԴԵՕՔ՝

Շարունակուած էջ 18-էն

ձը: Քիչ անդին պիտի տեսնենք եւ հասկնանք: (Ջուրերու այս հարցին մասին մանրամասնութեանց համար տեսնել՝ Ա՛յա՛ Ալ-Լամիի ակնարկը, տեղական «Ալ-Ախպար», օրաթերթի Հինգշաբթի, 17 Սեպտեմբեր 2009 թուականակիր համարին մէջ, «Եկած է ժամանակը միջազգայնացնելու Տիգրիսի եւ Եփրատի ցամքեցումը...» վերնագրով): Իսկ եթէ ինչպէ՞ս բացատրել աճապարար այլեւ ճկուն դիւանագիտութեան այս կոպիտ շարժումը, կը բաւէ վերլիչեցնել՝ որ Թուրքիա իր ռազմավարական դաշնակիցին, Իսրայէլի խոստացած է՝ Տիգրիսի եւ Եփրատի ջուրերէն անհրաժեշտ քանակութեամբ հայթայթել անոր, ինչ որ հրամայական կը դարձնէ Իրաքի եւ Սուրիոյ գրկումը այդ ջուրերուն մէջ անոնց իրաւունքէն...: Ո՞վ է Թուրքիոյ ամենամօտիկ բարեկամը, այլեւ՝ զինակիցը, Իրաքն ու Սուրիա՞ն, թէ՞ սիոնական նոյնպէս տարատնկեալ պետութիւնը, որ մաս կը կազմէ ամերիկեւսիոնաթրքական անսուրբ երրորդութեան...: Պարզ է՝ թէ նման գնմանն գտանէ: Տարատնկեալ Թուրքիան նմանն է տարատնկեալ Իսրայէլի:

Սիոնական պետութեան տարատնկումի պահուն, Պէն Կուրիոն շեշտած է հետեւեալ առաջադրանքին հրամայականութիւնը՝ «Ամէն ջանք ի գործ պէտք է դնենք՝ ԲԱՐԵԿԱՄԱՆԱԼՈՒ համար Թուրքիոյ եւ Եթովպիոյ հետ: Առանց անոնց հետ բարեկամանալու՝ մեր ԼԻՆԵԼՈՒԹԻՒՆԸ գուրկ կը մնայ ՀԻՄՔԷ...»: Այլ խօսքով՝ Պէն Կուրիոն, սիոնական տարատնկեալ այս շինծու պետութեան լինելութեան հիմքը կը նկատէ՝ Նեղոսը Ափրիկէի մէջ, եւ Տիգրիսն ու Եփրատը Միջին Արեւելքի մէջ, եւ այս իսկ պատճառով՝ սիոնական պետութեան դրօշակին վերելի կապուուն լայն երկրը Եփրատը կը խորհրդանշէ, իսկ ներքեւինը՝ Նեղոսը, եւ՝ միւս կողմէ, սիոնական Քնէսէթի մուտքին վերեւ արձանագրուած է՝ »Իսրայէլի որդի՝ բուհայրենիքը կը տարածուի Նեղոսէն մինչեւ Եփրատ»...:

Ափրիկէի մէջ, Նեղոսի կ'առնչուին՝ Սուտանը, Եգիպտոսն ու Եթովպիան իր ֆալաշաներով...: Այստեղ՝ ամերիկեւսիոնական իմփերիալիզմը այսօր եկած է փոխարինելու ֆրանքօ-բրիտանական գաղութատարութիւնը, եւ արդէն՝ իրեն լիովին ենթարկած է Եգիպտոսը, եւ իրեն ենթարկել կը փորձէ Սուտանը՝ զայն անկայունացնելով ֆալաշա եւ գաղափարացեղախումբերու խռովութիւններով, Հարաւէն եւ Հիւսիսէն, Եթովպիոյ մեղսակցութեամբ...:

Իսկ Միջին Արեւելքի մէջ, Եփրատի կեանքի մայր երակին կ'առնչուին Թուրքիան, Իրաքն ու Սուրիան, ուր ամերիկեւսիոնական իմփերիալիզմը լիովին կը տիրապետէ Թուրքիոյ եւ Իրաքի վրայ, եւ իր մնայուն ճնշումին տակ կը պահէ Սուրիան...:

Եւ՝ փաստականօրէն տարիներէն ի վեր՝ Թուրքիոյ մէջ, Եփրատի ամբողջ երկայնքին, սիոնական բազմանուն ընկերութիւններ հողատարածքներ կը գնեն գետի ափերուն շուրջ, եւ հոն ջրամբարտակներ կը կառուցեն, գրեթէ ցամքեցնելով Սուրիա եւ Իրաք համող ջուրերու ծաւալը... Թուրքիոյ իրերայաջորդ կառավարութիւններու շնորհած արտօնագրերուն պատճառով...:

Միայն այս փաստը, առանձին, կը բաւէ հերքելու եւ դիմագերծելու համար Թուրքիոյ իբր թէ Արաբ-իսլամ աշխարհին «բացուելու» դիւանագիտութիւնը:

Ահա՛ աշխարհաքաղաքական ու ռազմավարական հաստատ իրականութիւններու ա՛յս պատկերին լոյսին տակ՝ չենք կրնար հրաժարիլ, ֆուլթպոլային թեթեւոյիկ դիւանագիտութեամբ եւ ցիւրիխեան անձնատուական փրոթոքոլներով, մեր ռազմավարական հզօրագոյն գէնքէն՝ Հայ Դատէն, իր բոլոր բաղկացուցիչներով:

ԱՂԱՃԱՆԵԱՆ ՎԵՐԱՆՈՐԴՈՒԱԾ ՇՔԵՂ ՍՐԱՅԻ ԲԱՅՄԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 7-էն

կալութեան յատուկ խօսք ուղղեց այս սրահի բարեգործման եւ այդ գիշերուան ձեռնարկի յանձնախումբի անդամներուն: Պրն. Իսկէնտէրեան յիշատակի յատուկ նուէր մը յանձնեց Տիկ. Ֆլորա Տունայեանցին:

Խօսք առաւ Սան Ֆրանսիսքոյն նոր ժամանած, ծուխի շատ համակրելի հովիւ՝ Տ. Սարգիս Ա. Քհնյ. Փեթոյեան: Տէր Հայրը մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, եկեղեցւոյ ծխականներուն եւ ֆասատինայի հայութեան, որ զինք շատ ջերմ եւ ուրախութեամբ դիմաւորեցին: Տէր Հայրը ըսաւ, թէ այս ծուխէն ներս ծառայելը իրեն համար մեծ մարտահրաւէր մըն է, բայց Աստուծոյ, Սրբազան Հօր եւ ժողովուրդին օգնութեամբ իր լաւագոյնը պիտի ընէ, արդարացնելու համար իր վրայ դրուած յոյսերը:

Վերջաւորութեան, խօսք առաւ Առաջնորդ Գերշ. Յովնան Արք. Տէրախանեան, որ շատ ջերմ եւ յուզիչ խօսքերէ ետք, Առաջնորդարանի շքանշանով զարդարեց

հետեւալ ազգայիններուն լամբակները, Այվի Կրաշեան, Օէյ Պետեան, Անահիտ Պետեան, Նիշ Քաշաչեան, Սարգ Սահակեան, Գուրգէն Մատթէոսեան, Յարութիւն Հիլալեան, Ալիս Իսկէնտէրեան, Ճօան Մէյմարեան եւ Լուսի Պէնճ:

Այս նոյն ազգայինները նաեւ ստացան Գալիֆորնիոյ նահանգի Ծերակուտական Գառլ Լուի գնահատանքի վկայագիրները, որոնք յանձնուեցան Ծերակուտականի ներկայացուցչին կողմէ:

Հանդիսութեան ներկայ էր նաեւ Պրն. Հայկ Գարթունեան, Գոնկրէսմէն Ատամ Շիֆի ներկայացուցիչը:

Սրբազան Հայրը Յիշատակի մասնաւոր նուէրներ յանձնեց հետեւեալ ազգայիններուն, այդ գիշերուան ձեռնարկին եւ սրահի նորոգութեան իրենց բերած նպաստին համար. Տիկ. Ռուբինա Պեկումեան, Դանիէլ Ագարակեան, Նազարէթ Գեւորեան, Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պապեան, Ռիչըրտ Հըրպ, Վիզէն Մանկրեան: Գերշ. Վաչէ Արք. Յովսէփեան փակման աղօթքով եւ պահպանիչով վերջ գտաւ այս պատմական անմոռանալի երեկոն:

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակում է 5-էն

Թեան նախագահը հակառակ անոր որ հաստատած էր, թէ Յեղասպանութեան հարցին եւ Հայ դատի պահանջատիրութեան շուրջ ոչ մէկ գիշում պիտի կատարուի, սակայն իրողութիւնը այդպէս չեղաւ, քանի որ արձանագրութիւններուն մէջ թրքական նախապայմաններն ու գիշումները յատկօրէն բացայայտ են:

Ան նշեց, թէ Հոկտեմբեր 10-ին արձանագրութիւններու ստորագրութեան յաջորդեց բարձրաստիճան պաշտօնեաներու կողմէ թուրքիոյ ուղղուած դրական արժեւորումները, երբ անդին մոռացութեան մասնուած էին թուրքիոյ կողմէ Հայաստանի շրջափակումը եւ Հայոց ցեղասպանութիւնը:

Ժամկէտէն նշեց, թէ Հայաստանի Սահմանադրութեան դատարանը անվերապահօրէն պէտք է մերժէ արձանագրութիւններուն վաւերացումը՝ առաջնորդելով Ազգային անվտանգութեան հայեցակարգի տուեալներէն: Իր խօսքի աւարտին վազգէն ժամկէտէն առաջարկեց ստեղծել համահայկական յանձնախումբ մը՝ ուսումնասիրելու, քննելու եւ եզրակացնելու ազգային հիմնախնդիրները:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան անունով խօսք առաւ Ահարոն Շիրազմեան: Շիրազմեան հարց տուաւ. Հայաստանի իշխանութիւններուն, թէ արդեօք Հայոց ցեղասպանութեան ճանաչումը արդարութեամբ ամրագրելու պահանջը ուղղակիօրէն չէ՞ կապուած Հայաստանի ներկային ու ապագային հետ եւ արդեօք ցեղասպանութիւնը չէ՞ր Հայաստանի տառապանքներուն պատճառը:

Ան նաեւ հարց տուաւ, թէ պէ՞տք է լուռ մնալ, երբ էրտողան Հայաստանի ներքին գործերուն

խառնուելով խորհուրդ կու տայ Հայաստանի նախագահին գերի չդառնալու հայկական սփիւռքին:

Ան յայտնեց, թէ վերջին գործադրումները ցոյց կու տան, որ թուրքիա կը շարունակէ եւ պիտի շարունակէ քարոզչական, հոգեբանական, գաղափարական ու տնտեսական պատերազմը հայերուն դէմ:

Ահարոն Շիրազմեան նշեց, թէ այնքան ատեն որ հայ ժողովուրդին կը գլխան տալ իր անկախ գոյութիւնը պահպանելու համար անվտանգութեան բաւարար երաշխիքներ եւ կողկասի մէջ տարածքային հարցերու վերաբերող որեւէ համաձայնագիր չի կրնար իրաւական յարատեւութիւն ունենալ, ապա մենք պատրաստ ենք նոր սարդաբազմներու:

Սահմանային հարցերուն մասին Շիրազմեան ըսաւ, թէ Հայաստանի եւ թուրքիոյ միջեւ սահմանները միջազգային իրաւունքի փաստաթուղթով հաստատուած են Ազգերու լիկային կողմէ՝ նախագահ Ուիլյամսոնի տրուած լիազօրութեամբ, եւ այս փաստաթուղթէն ետք միջազգային ինչ հիմնաւորումով գոյգերկիրներու իշխանութիւնները կ'ուզեն անտեսել իրենց միջազգային պարտաւորութիւնները:

Իր խօսքը եզրափակելով՝ Ահարոն Շիրազմեան հաստատեց, թէ Հայաստանի իրաւապահական, գործադիր եւ օրէնսդիր կառույցներէն կ'ակընկալուի գիտակցիլ պահի լրջութեան եւ անկաշկանդ ու իրենց կոչումին հարազատ նախանձախնդրութեամբ մօտենալ քննարկումներուն, որովհետեւ հայ ժողովուրդի ու հայրենիքի ազգային անվտանգութիւնն է ինդրոյ առարկան:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան խօսքը արտասանեց Տիգրան ձինպաշեան:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՒԱՔ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՉ

Շարունակում է 5-էն

Թէ Հ.Յ.Դ.-ի, Ս.Դ.Հ.Կ.-ի եւ Ռ.Ա.Կ.-ի միջեւ կը տիրէ համախոհութիւն ցեղասպանութեան քննարկման, սահմաններու ճամաչման եւ Արցախի գոյութեան շուրջ, որոնք նաեւ մեր հասարակաց մտահոգութիւններ են:

Իր գեկուցումին մէջ ան անդրադարձաւ նաեւ թուրքիոյ ներկայ իշխանութեան վարած միջին արեւելեան եւ կովկասեան քաղաքականութեան ձեռք ձգած յաջողութիւններուն, որոնք անկասկած վնասեցին եւ կը վնասեն մեր Հայ Դատի աշխատանքներուն: Ներկայի թուրք իշխանաւորները կը փորձեն նաեւ յառաջացնել ճեղք մը

Ան ըսաւ, թէ հայ-թուրք յարաբերութիւններու կարգաւորումը պատմական անհրաժեշտութիւն է, մինչ Հայաստանի եւ թուրքիոյ միջեւ գոյութիւն ունեցող լուծելի հարցերը միջպետական սովորական տարակարծութիւններ չեն, քանի որ թուրքիոյ պետական կառուցը հիմնուած է հայ ժողովուրդի տեղահանութեամբ եւ ջարդերով:

ձինպաշեան նշեց, որ Հայաստան - թուրքիա արձանագրութիւններուն մէջ Հայաստանը իբրեւ տուժած կողմ նախապայմաններ չունի, մինչդեռ թուրքիա նախապայմաններ դրած է: Ան ըսաւ, թէ Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութիւնը կը պարտաւորեցնէ Հայաստանի պետութիւնը չընդունիլ հայ ժողովուրդին իրաւունքները հարուածող, հայոց ազգային արժանապատուութիւնը խոցող եւ արդարութիւնը իսպախող նման նախապայմաններ:

Ան աւելցուց, որ Հայաստանի սահմանադրութեան հիմք հանդիսացող եւ անոր անբաժան մաս

սփիւռքահայութեան մօտ եւ Հայաստան-Սփիւռք՝ յարաբերութեան մէջ:

Հակառակ թրքական քաղաքականութեան յաջողութիւններուն, բանաշօսը հաստատեց որ հայութիւնը կը մնայ իր ըսուածքներուն պահանջատէր:

Ներկաները որոտընդոտ ծափող լիններով միաձայնութեամբ որդեգրեցին «Միացեալ Յայտարարութիւն»ը եւ բաժնուեցան միասնաբար երգելէ ետք Հայաստանի օրհներգ՝ Մեր Հայրենիքը:

Հաւաքի աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, ուր տակաւին կը շարունակուէր կարծիքներու փոխանակում:

հռչակուած Հայաստանի Անկախութեան հռչակագիրը յստակօրէն կը բանաձեւէ Հայաստանի Հանրապետութեան պարտաւորութիւնները՝ յարգելու հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքները եւ գործելու ի նպաստ անոնց ձեռքբերման:

Իր խօսքի աւարտին Տիգրան ձինպաշեան նշեց, թէ Հայաստանի Սահմանադրական դատարանը եւ Ազգային ժողովը պատմական պատասխանատուութեան առջեւ են, եւ անոնք պէտք է թարգմանը հանդիսանան հայ ազգի միահամուռ կամքին ու արդարութեան հաստատման:

Գեղարուեստական բաժինին մէջ ապրումով ասմունքեց Անի Սարաֆեան-Եփրեմեան:

Յայտագիրի աւարտին Հրայր ձեպեճեան ընթերցեց Հայաստանի սահմանադրական դատարանին ուղղուած հայ քաղաքական երեք կուսակցութիւններուն միացեալ շահագիրը: Ժողովուրդային հաւաքը փակուեցաւ «Սարգարապատ» յաղթերգով:

Homenmen is Hosting its Annual
Big Bear Winter Getaway
January 29-31, 2010

For Reservations
call Krikor:
(818) 429-1703



Visit Homenmen.org

FOR MORE INFORMATION
AND PAYMENT OPTIONS

Hosted By  Location  **Big Bear Sports Ranch**

\$120 General
\$100 Homenmen Athletes
\$100 for children under 12
Includes: Room, Board, Meals